



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



EPOS 19 NOV 2011

891.99

Խ-27

ԱՄ

Լեռնա բնակչութեան

3

ՏԵՐ-ՄԱԹԱԼ

ԵԿ

Խ-27


Խ-27

ԻՒՐ ԶՈՀԵՐԸ



(ԵՎՐՈՍԻԱ Հ.Բ.Պ.)

I ՀԱՏՈՐ



Ապրիլի 1906 թ.
Ստեփան Գոլովին
Ապրիլի 1906 թ.
Ապրիլի 1906 թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի

1903

QITABL VƏKTİNDƏ KAJTARILNZ
ВОЗВРАЩАЙТЕ КНИГУ В СРОК

QITABЫ VƏKTİNDƏ KAJTARILNZ
ВОЗВРАЩАЙТЕ КНИГУ В СРОК

Neçə dəfə vərilmisdur

Количество предыдущих выдач

208

Նորմա համար մեջնոր պահելի վեհայք բայ առ հաջոց
առան առ դու մաս միջամտելու Մ-ը Ձ բանու ու
աթ-օթ Խ-ը առան առ նորմա միջամտ միջնոր պահելու հայու
ութից իր պահու հայութեան կրու մաս ունիցինք
խաչ մաս է. Ըստ առան այս պահելու ամենահայու
ու Մ-ը Ա-ը պահելու առ պահու բայ զմ զիմքն այս
ութից պահու պահու գլու ու զար առ համա
պահու առ պահու պահու գլու ու զար առ համա

Ձեզ եմ՝ նույիրում թոյլ ոյժերիս փոքրիկ աշխատութիւններ՝ «Տէր-Մաթալ և իւր զոհերը»։ Այս, ձեզ եմ նույիրում, ձեզ, որոնց կարօտը վառ բոցերով ստէպ-ստէպ հրդէհ է առաջ բերում իմ հոգեկան աշխարհումը, միշտ կենդանի պահելով սրտումս սէր դէպի հայրենի սար ու ձորը, քար ու թուփը, հայրենի մըռոտ խրճիթը և այն ամենը, որոնք հեռու, շատ հեռու են ինձանից, բայց և նոցա նույիրական յիշատակները անմահ հոգիների պէս միշտ սաւառնում են մտաւոր աշխարհում՝ կեանք, յոյս ներշնչելով ինձ։ Առանց այդ սրբազն զգացմունքի կեանքը՝ կեանք չէ, այլ լրկ դատարկութիւն. առանց այդ սրբազն զգացմունքի յոյալ՝ կատարեալ յոյս չէ, այլ առանց թի թոշուն։

Ո՞հ, հայրենի մըոտ օջախ... որքան քաղցր է ինձ
համար քո սկ առաստաղը, քո կիսասկ սիւները, որոնք
հակաների պէս իրանց թևերի վրա են պահում այն
ամեն ծանրութիւնը, որը, կարծես, սպառնում էր
ցած իջնել մարելու քո թոնը վառ կրակը. Այդ կրակի
սէրը կրակ է դառել և ինձ այլում է.... Այո՛, ինձ

Дозволено Цензурою. Тифлисъ, 16-го Августа 1903 г.



1719

այրում է... այդ կըակի թոնքի կողքին առաջի անգամ ես տեսայ Տէր-Մաթալներին, այդ սիւնէրի սև առաստաղի տակին առաջին անգամ ես տեսայ Գէվո-Գալօներին:

Իմ հայրենակիցներ. սթափուեցէք, ամեն ինչով կոիւ մղեցէք ձեր այդ զտղբեկի զաւակների դէմ: Վատահ եմ, դուք կը ծնէք Յարութներ, Երօներ, որոնք և հերոսաբար կը նետուին կեանքի փշոտ ասպարէզը, մաքրելու և ջախչախելու. ձեր տղբուկներին: Վստահ եմ, որ դուք կը ծնէք այդպիսի հերոսներ, որոնք ձեր փրկութեան խաչը իրանց ուսերի վրա առած՝ դէպի առաջ կընթանան, ուր Սհօները՝ բազդաւորութեան դագաթնակէտին հասած՝ կընկնեն Յարութների դաշոյներիցը և Տէր-Մաթալները՝ Քրիստոսեան սեղանից՝ իրանց արիւնով ներկեցով այն: Օ՛, այն ժամանակ, գուցէ և իմ մեռած, սև զերեզման իշած ու կորներս հանգիստ կառնեն և ես զերեզմանիս խորքից, անդունդից կը գոշիմ, սիրասուն հայրենիք, հասել է քո վերածնութեան ժամը....:

Օ, այն ժամանակ ես փոքր ինչ հասած կը լինեմ իմ նպատակիս: Գէվո – Գալօներ, Սհօներ, Տէր-Մաթալներ նոր ցեցեր չեն. դժբաղդ հայ ազգը տուել ու տալիս է դոցա: Տուել ու տալիս է անողոք բաղդի հարուածից ընկած Սօնաներ, որոնք իւրաքանչիւր տարի ինչ-ինչ հանգամանքներից խեղուած, ընկնում են անբաղզութեան վիճը: Դուք չէք լսում նոցա բողոքը, նոցա հեծեծանքը: Կեանքի խոռվայոյգ ովկիանոսում անհետ կորչում են նորա: Նոցա բողոքի, նոցա դառնազին հեծեծանքի ձայները խուլ

հառաշանք են տալիս միայն հայկական մըուտ յարկի տակին:

Միայն Սօնաներ, որ իր նամակներով աշխարհ բերեց իր վիշտը, հասցնելով նրան մեզ, որի նկարագրութեամբ մենք չենք օգտուել մեր երեակայութիւնից, այլ աշխատել ենք, որքան կարելի է, անփոփոխ ձեզ տալ, թողնելով համարեա անփոփոխ և նրա նամակները, որոնք կէտ առ կէտ բերում ենք այստեղ և ձեղ ենք յանձնում այդ թշուառ զոհի դատը:

Հետոն Խանսանամեան.

Գեղածիծաղ են Գեղաբրունեաց աշխարհի մայսի վերջերը։ Մի արտասովոր թարմութիւն է վազում մարդու երակներում, երբ շնչում է այդ երկրի այդ ժամանակուայ սառն և մաքուր օդը։ Բնութիւնը ոչինչ չի խնայել այդ աշխարհին աւելի վայելչագեղ կերպարանք տալու։ Ճիւնի հաստ շերտերը հալել, անհետացել են, միայն տեղ-տեղ է երեսում նա. այն էլ ձորերի մուլթ խոռոչներում և սարերի այն լանջերում, ուր արև երբէք չի լինում, կամ լինում է շատ սակաւ։ Ամեն տեղ՝ սար ու ձոր, դաշտ ու մարգագեախն, ծառ ու թուփ ծածկուել են կանաչ զգեստներով. իսկ գոյնզգոյն ծաղիկների հոտը փչում է ամեն մի անկիւնից երեսիդ և դու մնում ես զմայլուած, երբ տեսնում ես, որ սարերի գագաթներին էլ մեղմ կերպով շօրօրում են խիտ կանաչների հետ ծաղիկների անթիւ ու անհամար զլուխները։

Իսկ լիճը հանգիստ կանգնածէ. տեսնողը հեռուից կարծում է՝ թէ քնած է. հազարաւոր ձայների խառնութքը խլացնում է մարդուս ականջները. Դորտերի կը ուկրոսցը նրա ափերի ճահիճներում գիշել ժամա-

նակ սարսուռ է առաջ բերում մարդու մէջ և վերջինս ակամայից ենթակայ է լինում զանազան ցնցումների: Թռչունների երգերը՝ նրա ափերին արածող կենդանիների ձայների հետ՝ թռոչում, անցնում են հեռու, շատ հեռու: Գեղեցիկ է ճակը, երբ արեի ճառագյուղները խաղում են նրա մակերեսովի վրա. զեղեցիկ է, երբ նրա երեսին լողացող նաւակներից նայում ես հեռու. քեզ թւում է, թէ արեի կտորներ են, որ անընդհատ թափւում եննրա որկորը: Մի տեղ թռչունների երամներն են փախչում նաւակիցդ. մի ուրիշ տեղ ձկների խառնիճաղանճ բազմութիւնն է թռոչկոտում առաջիդ, ասես լեզգինկայ են պարզակիւ: Քեզանից հեռու ձկնորսների նաւակներն են հանդարտ շարժւում և իրանց ուռկանը ջուրը նետում: Պարզ ու մաքուր է ջուրը. լինում են լուպէներ, որ դու ազատ տեսնում ես նրա յատակի այս ու այն կողմ փախչող ձկներին: Տեղական չէ նրա ալէկոծումը. մոայլում է մի քանի ժամերով, կամ օրերով ու դարձեալ իր առաջուայ կերպարանքը ստանում:

Նրա շրջակայրում հեռուից լսում է քրտնաշան երկրագործի «հօրօվելի» քաղցր մեղեղին. գեռ տարուայ այդ ժամանակին ցանքը վերջացած չէ. դեռ տեղ-տեղ զործում է արօրը, զութանը՝ բաղկացած 4-5 զոյլ զոմէշ-եղներից: Նահապետական է ամեն ինչ. նահապետական դրութեան մէջ են գտնւում և զեղուկի նիստ ու կացը, նրա տուն-տեղը վար ու ցանքը և այն տմենը, ինչ աշքի է ընկնում:

Առօրեայ պարէնը ժողովուրդը հայթհայթում է երկրագործութեամբ և անասնապահութեամբ. ինչ

կարծիք, որ բոլոր այդ արհեստները դարձեալ գըտեն նահապետական հողի վըայ:

Կէսօրից բաւական անցել էր. կը ոչխարները արդէն ծիծ տուել իրանց գառներին և բաւականին հեռացել էին ե... զիւղի հայլաղ աեղից: Դառնարածներն էլ, փոքրիկ տղաներ և աղջկերքը, գառները իրար խառնած՝ զրոյց անելով՝ հեռանում էին իրանց վրաններից, որ արածացնեն իրանց փոքրիկները և որքան կարելի է լաւ կշտացնեն: Գառնարածներից երկուսը, որոնց միշտ իրար հետ կարելի էր տեսնել, ամենից վերջ հետեւում էին իրանց ընկերներին. դոցանից մէկը այդ զիւղի Սեփաննենց Գէվօյի աղջկի՝ Սօնան էր, միւսը՝ Ալաշկերտցոնց Դաւթի տղա երուանդը, որին զիւղացիները երօ էին անուանում:

Երկու հասակակից կայտառ մանուկներ էին, որոնց ամառ, ձմեռ միասին կարելի էր տեսնել կամ գառների քամակին՝ զառներ արածացնելիս, կամ խաղալիս: Սօնան և երօն մօտեցան Աղտաշի սարի ստորոտին, թողեցին գառներին աղատ արածելիս, իսկ իրանք իրար կողքի հստելով՝ մէկ նայում էին իրանց վրաններին, մէկ իրանց գառներին և բարձր ձայնով զրոյց անում:

— Գիւմէս, Սօնա ջան, ինչ թագա խարար կայ. որ ասեմ, թուրումուրդ կը շորանայ:

— Ի՞նչ կայ որ, երօ ջան, — երկշոտ կերպով հարցրեց Սօնան:

— 2է, չեմ ասի, Սօնա, մինչև չ'երդուես, ինչ որ ասեմ, կը կատարիս:

— Այ, էն սարի գլխի սուրբ Յովհաննէսը վկայ՝

կըկատարեմ, —պատասխանեց Սօնան, ցոյց տալով
դէպի մօտակայ սարը, որի գլխին երևում էին մի
քանդուած մատուռի աւերակներ:

—Դէն, որ կըկատարես, ես էլ կ'ասեմ. էս օր
հայրս քաղաքից եկաւ. շատ լաւ-լաւ բաներ էր
պատմում և ասում, որ էս տարի աշուն մեր գիւղում
դպրոց է բացուելու և որ ինձ պիտի ուղարկի էղ
դպրոցը ուսում առնելու, եթէ ես գնամ ուսում առ-
նելու, դու էլ կըգնաս, թէ ոչ, ես առանց քեզ չեմ
գնալ:

—Ես ինչի համար ուսում առնեմ. ես խօմ
տղայ չեմ, —պատասխանեց Սօնան զարմացած:

—Ի՞նչպէս թէ «ինչի համար ուսում առնեմ». բա
մեր քաղաքի աղջիկները գիժ են, որ ուսում են առ-
նում. միթէ հայրիկդ չէ պատմել. ես խօմ սուտ չեմ
ասում:

—Զի պատմել. դէն որ էպակս է, ես էլ մօրս
կ'ասեմ, որ ինձ ուղարկի:

Տիրեց լոռութիւն. Սօնան սկսեց տարակուսած
մտածել. նա մնացել էր զարմացած թէ ինչո՞ւ հա-
մար դպրոց են հիմնում, երբ առանց այն էլ իրանք
շատ երջանիկ և շատ ուրախ են անցկացնում իրանց
օրերը. Նա չէր կարող հաշտուել, մանաւանդ, այն
մտքի հետ, թէ ինչպէս իրանց սիրուն գառները
պիտի յանձնեն ուրիշների պաշտպանութեան ու խը-
նամքին. Ապագայ օրերը, ուսուցչի առասպելական
պատիժները մի արտասովոր երկիւղ էին առաջ բե-
րել նրա մէջ և նա ճիգ ու ջանքեր էր գործ դնում
ցըել, հեռացնել իրանից այդ մաշող մաքերը. Սակայն

այդ ապարդիւն էր անցնում: Նա այնպէս անզգայ
ենթակայ էլ եղել այդ մտքերին, որ մինչև անզամ
ուշադրութիւն էլ չէր դարձնում թէ իր գառները իրա-
նից բաւականին հեռացել են: Երբ նա զգաց այդ՝ մի
երկիւղ անցաւ նրա մտքով, բայց շուտ հանգստացաւ,
երբ տեսաւ, որ երօն գառների մօտին է արդէն: Ինքն
էլ շտապեց նրա մօտ:

Աղտաշը, Ե... գիւղի ահաւոր լեառը, ինչպէս
միշտ, այս անզամ էլ ծածկուել էր թանձը մշուշնե-
րով, որոնք հետզհետէ ցածրանում և տարածւում
էին նրա ստորոտներում, երկիւղ սփռելով նրա շրջա-
կայրում գտնուած մարդկանց և կենդանիների վրա:
Մշուշի ժամանակն է քուրդ աւագակը ցած իջնում
իր որջիցը՝ թոցնելու տաւարապահների առաջից նրա
եզները, կովերը. մշուշի և մառախուղի հետն է իր
որսը ճանկում ու փախչում այդ լերան ահարկու
զայլը, արջը: Այս էր պատճառը, որ մեր գառնարա-
ծները սկսեցին երկիւղ կրել և խմբուել միասին ու
քիշքիշ առաջ խաղալ զէպի իրանց վրանները: Սոքա
բոլորն էլ լուռ էին կամ խօսում էին շատ սակաւ,
որովհետեւ ամենքն էլ գիտէին, որ խօսալու ժամա-
նակ չէ. գիտէին, որ այսպիսի ժամանակ համ իրանց
վտանգ սպառնում, համ իրանց գառներին:

—Այ, տեսնում ես, Սօնա ջան, ինչի է նման
մեր հալը, ինչի ենք մենք նման. դէն, հսկիք, նայիք
աշալուք, թէ չէ սիրուն գառներդ արենախում գայլի
բերանը կ'ընկնեն. բացի այդ, մենք միշտ խօմ փոքը
չենք մնալու, որ գառներ արածացնենք. այ, եղայլս
էլ առաջ մեր գառներն էր պահում, բայց այժմ աքօ-

րի մաճն է ըռնել, իսկ մենք որ դպրոց զնանք,
հայրս ատում էր, նրա պէս մաճկալ չենք լինելու,
չինովնիկ, մեծ մարդ կըլինենք:

Այսպէս դիմեց նորից երօն Սօնային, շարունա-
կելով քշել դառները դէպի վրանների կողմը:

— Եհ, ինչ ունեն էդ շինովնիկները. չէ որ նրանց
ոչ կաթ կայ, ոչ մածուն և ոչ էլ էսպիսի դարագեօզ
դառներ. բացի այդ, միթէ ամեն կարդացողը շինով-
նիկ է դառնալու. Աման, երօ, ես այսօր շատ եմ
վախենում այս մշուշիցը:

— Դու միշտ էլ վախկոտ ես եղել, ինչ կայ մշու-
շի մէջ. շատ-շատ պիտի մի՛ կամ երկու գառ վախ-
ցնի դայլը. էլ ինչ կարող է պատահել:

Դեռ երօն չէր վերջացցել իր խօսքերը, երբ
դառները, համարեա բոլորը, երար վրայ թափուելով
վաղեցին դէպի իրանց փոքրիկ տէրերը: Փորձանքի
առաջի ըոպէին երօն ոչինչ չընկատեց. բայց երբ
քիչ սրտապնդուեց, Սօնային այլևս չը տեսաւ. նա
մնացել էր դառների ահազին խմբերի տակ որոնք
միանզամից դէպի նրա կողմն էին վազել. երկիւղից
թէ ոտքի տակ տրորուելուց նա ուշաթափ տարած-
ուել էր զետին:

Մի ակնթարթում երօն վրա հասաւ, դրկեց նրա
փոքրիկ զլուխը և բարձր ձայնով օգնութիւն սկսեց
կանչել: Կասկած չըկար, որ դայլ էր մտել նոցա
դառների մէջ. սակայն նրան ինչ փոյժ. տեսնելով
Սօնային այդ դրութեան մէջ, նա ամեն ինչ մոռա-
ցաւ և վշտից թէ երկիւղից, հեկեկալ սկսեց. ինքն
էլ իրան այդ հաշիւ չէր տալիս:

— Սօնա, այ Սօնա ջան, վեր կաց. ոչինչ չի
պատահել. զայլը արդէն հեռացել է. մեր տղերքը
հրին, հեռացըցին նրան. միայն մի գառի է վիրաւո-
րիլ: Սակայն Սօնան ուշքի չէր գալիս. իսկ երօն չէր
դադարում լաց լինելուց: երօն աւելի երեսը մօտկա-
ցրեց նրա թուլացած դէմքին և արտասուրի հետ
սկսեց համբուրել նրա երեսը: Մինչ սոքա դանւում
էին այս դրութեան մէջ, նոցա դառնարած և հաստ-
կով աւելի մեծ ընկերները վրա հասան և սկսեցին
ջուր սըսկել թշուառ Սօնայի երեսին, տրորել նրա
վիզը, երեսը, որից յետոյ նա մի կերպ, հետզհետէ
ուշքի եկաւ. սակայն դեռ մնացել էր պարկած զե-
տին: Ընկերներից մէկը ջուր առաջարկեց խմելու.
սակայն Սօնան դեռ լուռ էր, նա մնացել էր ապշած.
ինքն էլ լաւ չէր ըմբռնում, թէ ինչ է պատահել
իր հետ:

— Խմիթ, Սօնա ջան, վրաբերեց երօն, բան չի
պատահել, վախեցած կը լինիս:

— Սօնան լուռ հնազանդուեց նրան՝ մի քանի
կում ջուր խմեց և ցածր ձայնով յայտնեց երօյին, որ
իր զկուխը սաստիկ ցաւում է:

— Եհ, բաւական է նազ անես, Սօնա—միաբերան
կրկնեցին բոլոր դառնարածները,— ինչ կայ որ, եր-
կիւղից շամնցիր, վեր ընկար. էլ ինչ ես մտածում.
վեր, վեր, ժամանակ է արդէն, կըզնանք տուն, կը
քնիս, կ'լաւանաս, ամեն բան էլ կը մոռանաս:

երօյի օգնութեամբ Սօնան հազիւ ոտքի կանզնեց
և յենուելով նրա ձեռնափայտի վրա, սկսեց կամաց-
կամաց հանգստանալով հետեւիլ դառներին, որոնց

Երօն քշում էր դէպի վրանները։ Մութն արդէն սկսել էր տարածուել։

II.

Վաթսունից աւելի երկար ու ձիգ տարիներ էին անցել այնօրից, երբ ե... զիւղի ժողովուրդը թողնելով իր սեփական տուն-տեղը, հայրենի օջաղը և ամեն նուիրականը Ալաշկերտի գաւառում և հազիւ իր գլուխը քրդի սրից ազատելով, իր սիրելիների հետ ապաստան զտաւ Գեղարքունիաց երկրի այդ աշքի ընկնող զիւղումը։

Դժբաղդ այդ ժողովուրդը, միշտ կը կուվ իր վզի վրա սև բաղդի լուծը, վարելով, համարեա աստանդական և հալածական կեանք և բնակութիւն հաստատելով այդ երկրում, միշտ հաւատարիմ մաաց իր նախնիքների սովորութիւններին։ Նոյն պարապմունքը թէ զբսում և թէ իր յարկի տակ, նոյն առօրեայ նիստ ու կացը, նոյն խաւարամիտ չարքաշն էր նա, ինչ էր իր թշուառ հայրենիքում։ Այստեղ, 'իհարկէ, խօսք էլ չէ կարող լինել կը թութեան ձեր մասին։ Կը թութեան զեկավարները իրանց ծուխի տէրտէրներն էին. տարարազզաբար, սոքա էլ իրանց մտաւոր հասկացողութեամբ ոչնչով բարձը չէին կանգնած իրանց հօտիցը. բաւական էր միքանի տարի յաճախել եկեղեցու ծիսակատարութիւններին, այն ժամանակ քահանացու տիրացուն պատրաստ էր։ Զը պէտք է մոռանալ, որ դոցա և սկզբնական կը թութիւնը կատարուել է միմնոյն տէրտէրների ձեռքով։ Այսինարան,

սաղմոս, ժամագիրք, շարական և շատ-շատ նարեկ, ահա այն շկօլան, ուր պատրաստում էին այդ տարաբաղդ ժողովրդի առաջնորդիները. իսկ եթէ դրա վրա աւելացնենք և այն, որ այդ ամենը աւանդում էր առանց թարգմանութեան, այն ժամանակ պատկերը կատարեալ կը լինի։

Ահա այսպիսի մի ժամանակում էր, որ կառավարութեան հոգացողութեամբ բացուեց այդ զիւղի տարրական, երկսեռ դպրոցը։ Հասկանալի է թէ, որպիսի խորթ աշքով պիտի նայէր ժողովուրդը այդ նորաբաց դպրոցի վրա։

Սկզբում զիւղի տէրտէրները փորձեցին համոզիլ իրանց միամիտ հօտին՝ չը տալ իրանց որդիներին դպրոցը. բայց կառավարչական սպառնական հայեացը խկոյն զգաստացը զոցա. քահանաներին պարտաւորեցը, որ ասաց դոքա՝ իբրև օրինակ իրանց ժողովրդի, իրանց որդիներին ուղարկէին զըպրոցը։ Թէն ծանը էր զոցա համար այդ առաջարկը, բայց ինչ կարող էին անել. նոքա ստիպուած եղան կատարել այդ. և այսպէս հետզհետէ ժողովրդն էլ հետևեց իր տէրտէրներին։

Աւելորդ է սաել, որ Երօն և Սօնան էլ մտան դպրոցի աշակերտների ցանկի մէջը և իրանց ընդունակութեամբ սիրելի էին իրանց ուսուցիչներին։ Դասերից յետոյ Երօն միշտ յաճախում էր Սեփաննեց Գէվօյի տունը՝ Սօնայի դասերը սովորեցնելու. միասին նրա հետ դասեր սովորելու. իսկ առաւօտները իրանց զիւղի եկեղեցու մօտ այնքան պիտի սպասէր, որ Սօնան յայտնուէր, որի հետ և շարունակում էր իր

ճանապարհը դէպի դպրոցը։ Այսպէս անցաւ հինգ
տարի։ Հասաւ հրաժեշտի ժամը, երբ Սօնան և երօն
ընդմիշտ պիտի թողնէին դպրոցական կեանքը։ Եր-
կուսն էլ աճել, գեղեցկացել էին. երկուսի սրտում
էլ առաջ էր եկել մի արտասովոր դրութիւն՝ չը բա-
ժանուել իրարուց։ Սակայն ինչպէս վարուէին։ Երօյի
հայրը պատրաստում էր մի քանի ամսից յետոյ ո-
ղարկել նրան ուսաստանի քաղաքներից մէկում, շա-
րունակելու իր կրթութիւնը. իսկ Սօնայի ծնողները
անպարկեշտ էին համարում, որ մի հասած տղայ
այսունետև տեսակցութիւն ունենայ, իրանց դստեր
հետ որը քայլ առ քայլ մօտենում էր հասունութեան.
ըստ տեղական սովորութեան 13—14 աարեկան աղջի-
կը արդէն հարսնացու էր համարում։ Յաճախ այդ հա-
սակից փոքրերն էլ մտնում էին ամուսնութեան գիր-
կը՝ շնորհիւ իրանց ծնողների կամայականութեան և
բարեարոս սովորութեան։

Այն օրից, երբ յայտնի եղաւ, որ երօն պիտի բա-
ժանուէր իր հայրենի գիւղից, հետեապէս և Սօնայից,
տըլսրութեան մելամաղձոտութեան ամպերը մերթ-
մերթ այնպէս էին կուտակւում նրա զիսին, որ նա
ակամայից անձնատուր էր լինում նոցա. Ժամերով,
յաճախ և օրերով թափառում էր զաշտում, հաշիւ ու
համար չը տալով ինքն իրան՝ թէ ինչ է անում։ Լի-
նում են բոպէներ, որ մարդը չի լսում զիտակցութ-
եան ձայնին, այլ հետեւում է մի խորհրդաւոր ներ-
քին զրդման և լուռ ու մունջ կերպով իրական աշ-
խարհ է բերում նրա իւրաքանչիւր պահանջը, թելա-
դրածը։

— 17 —

Ահա այսպիսի մի արտաստիր դրութեան մէջ
էր գտնեում և երօն։

Ակներե է, որ ծնողները ուշադրութիւն էլ չին
դարձնում իրանց որդու այս դրութեան վրա և կար-
ծում էին, որ նա շուտով հեռանալու է տանից
տեղից այդ պատճառով և աշխատում է իր կարօտը
հանել հայրենի հողից։

Իսկ երօյի տիսրութեան պատճառը յիրաւի միթէ
այդ էր.—ոչ, նա երբեմն ենթարկում էր տիսրու-
թեան ալիքներին նրա հտմար, որ չէր կարողանում
տեսնուել, խօսել իր Սօնայի հետ. աւելի ևս կըկնա-
պատկում էր նրա այդ դրութիւնը նաև այն ժամա-
նակ, երբ մտածում էր, որ Սօնայից պիտի բաժանուի
առանց տեսնուելու նրա հետ, վերջին հրաժեշտ ասելու։
Բայց և այնպէս զնալ նա ցանկանում էր, նա սիրում
էր ուսում, կրթութիւն։ Մի օր, երբ Սօնան վերագառ-
նում էր իրանց արտիցը, ուր ճաշուայ հաց էր տա-
րել բանւորներին և դլուխը կախ զցած՝ շտապում
էր զէպի տուն, յանկարծ նրա ականջին զիպաւ մի
քաղցը երգի ձայն, որը դիւթիչ ազդեցութիւն ու-
նեցաւ նրա վրա. նա ամբողջ մարմնով ցնցուեց, մի
սարսուռ զգաց իր երակներում, մի բոպէ կանգ առաւ,
ուշի ուշով լսեց այդ ձայնը և ապա, զգալով, որ
տեսնողներ կըլինեն, սկսեց կամաց-կամաց շարժուել,
շարունակել իր ճանապարհը։ Զայնը չէր զաղարում
և հետզհետէ մօտենում էր նրան, այնպէս, որ նրա
իւրաքանչիւր բառը պարզ զարնուում էր Սօնայի
ականջին. վերջապէս նա լսում էր պարզ հետեւալ
խօսքերը։



Մշու սարեր կըակ դառած՝ տւեր արին ամեն ինչ.
Այդ կըակից սիրտս ընկտու՝ խորովում է ամեն ինչ.
Մշեցի չեմ, որ գիմանամ տանել կարեմ ամեն ինչ.
Մշեցին էլ թալան եղաւ՝ թողեց փախաւ ամեն ինչ:
Ո՞վ խղճում է, ո՞վ գութ ունի՝ թող հանգնէ այդ կըակ.
Մշու սարեր գեռ ծխում են՝ ոլլպում է այդ կըակ.
Ի՞նչ սև օրեր, սիրտս մտաւ՝ անհանդշելի այդ կըակ.
Մշեցին էլ թալան եղաւ՝ թողեց փախաւ այդ կըակ:
Ֆէլրան եարս ինձ մօռացաւ՝ գերի ընկաւ քրդի ձեռք.
Մշեցի չեմ սիրտ կունենամ, դիմել կուզեմ քրդի ձեռք,
Ա՞խ, եթէ մի օր ես էլ գերի կ'նկնեմ քրդի ձեռք.
Եարիս տեսնեմ՝ շղթայովս կը ջարդուահմ քրդի ձեռք:

Վերջապէս ձայնը դադարեց երգելուց: Սակայն
Սօնան զեռ շարունակում էր իր դանդաղ քայլուած-
քը: Նա ճանաշում էր այդ ձայնը. նա զզում էր, որ
երգողը տեսել է իրան և շտապում է դէպի իր կողմը.
բայց թէ ինչո՞ւ ինքը չէր շտապեցնում իր քայլերը,
ինքն էլ չը գիտէր: Մինչ սա այսպէս մտածում էր,
յանկարծ լսուեց երօյի բարեկի քաղցր ձայնը:

— Բարե, Սօնա, երեխ գիտէիր, որ երգողը ես
եմ, որ այդպէս ուշի ուշով ականջ էիր դնում. այդ
որտեղից ես գալիս. նայելով ուղիղ նըա աշքերի
մէջ, հարցըց երօն:

Սօնան՝ նայելով այս ու այն կողմ և տեսնելով,
որ ոչ ոք չըկայ, հագիւ լսելի ձայնով պստասխանեց.
Ես վաղուց քո երգելու ձայնը չեմ լսել, էլ որտեղից
կարող էի ճանաչել քո ձայնը. յոզնել եմ, ճաշուայ
հաց էի բերել մերոնց:

— Բայց ես որ երգէի, արգեօք, կը լսէիր ինձ

այնպէսի ուշի ուշով, ինչպէս քիչ առաջ ականջ էիր
դնում քեզ իրը անծանօթ մի ձայնի:

— Ես երգի սիրահար չեմ. միթէ գեռ մանկութիւ-
նիցս չես յիշում, որ ես երգեր չէի սիրում. ես լաւ
ձայն չունիմ և չեմ էլ սիրում, երբ ուրիշները յաջող
և լաւ ձայնով երգում են:

— Ո՞հ, Սօնայ, որքան բաղգաւոր կը լինէի, երբ
զու խօսէիր հետս այն լեզով, այն սրտով, ինչպէս
մեր աշակերտական ժամանակը. ինչո՞ւ տարիքը այդ-
պիսի փոփոխութիւն առաջ բերին քո մէջ:

— Ի՞նչպէս կարող եմ խօսել, երբ այն ժամանակ
զեռ երեխայ էի, իսկ այժմ խօմ երեխայ չեմ:

— Ո՞րպիսի փոփոխութիւն, Սօնա ջան. գեռ մի
երկու ամիս էլ չի անցել, երբ մենք, աւարտելով,
թողինք դպրոցը. ո՞րքան երջանիկ կը լինէի, երբ
մեր դառնարածութեան պարզութիւնը նորից մեզ
վերագառնար. բայց, աւաղ, անցան այդ մանկութան
անմեղ օրերը, երբ սիրտը և լեզուն ներդաշնակ են
իրանց գործունէութեան մէջ. իսկ այժմ. այժմ ինչ
ենք մենք.— դարձեալ նոյն երեխաները կեղծութեան
դիմակի տակ մտած. այո՛, որքան մենք աճում ենք,
այնքան էլ մեր իւրաքանչիւր գործունէութիւնը հա-
մեմում ենք ձեականութեամբ: Ինչ և իցէ, թողնենք
այդ, երբ զու այդքան վշտանում ես. բայց գիտէս,
արդեօք, որ հայրս ինձ մի քանի ամսից յետոյ ու-
ղարկելու է Ռուսաստան՝ այնտեղի քաղաքներից մէ-
կում կըթութիւնս շարունակելու: Տեսնենք, ուր է
վճռելու և ո՞ր քաղաքն է իմ բաժինն ընկնելու: Կու-
զես, Սօնա ջան, որ ես զնամ ուսում առնելու,

Այդ զարձեալ քո գործն է. ոռւ ինձանից շատ լաւ ես ըմբռնում այդ հարցի պատասխանը. միթէ մօռացար, ինչ էիր ասում մեր փորք եղած ժամանակը. ոռւ չէիր, որ միշտ ասում էիր թէ՝ ուսումը շատ լաւ բան է, մարդի ազնուացնում, լաւ մարդ է դարձնում: Աման, երօ, տեսնում ես, որ էն ճանապարհով մարդ է գալիս, հեռացիր ինձանից՝ լաւ չէ: Երօն՝ տեսնելով, որ գիւղից դէպի իրանց են զալիս, շտապեց, մտաւ մօտակայ ձորը, իսկ Սօնան շարունակեց իր ճանապարհը դէպի գիւղը:

Չորում, նստելով թփի տակին, մօտակայ առուակի եզերքին, երօն սկսեց լուրջ քննադատել Սօնայի կցկտուր պատասխանը. այսպէս ենթագրեց, այնպէս շափեց, ձևեց, բայց դրական ոչինչ չըստացաւ: Նա զարմանում էր, թէ այդ ինչ փոփոխութիւն և սառնութիւն է առաջ եկել նրա մէջ: Վերջապէս եկաւ այն եզրակացութեանը, թէ՝ հարեւանների շար լեզուն է առաջ բերել այդ ամենը:

Այսպիսի բոպէին որտեղից որ էր նրա միտը եկաւ իրանց գիւղացի Գէլ Յովոյենց Յարութը, որին և նա վճռեց դիմել:

Օրեր այսպէս միանման անցնում էին երօյի համար, Վերջապէս հասաւ սուրբ Յովիաննէսի ուխտը: Ե... գիւղը մի արտասովոր իրարանցման մէջ ընկաւ՝ պէտք էր պատճաշ կերպով ընդունել իրանց ծանօթքարեկամներին, ազգականներին, հարազատներին. պէտք էր և իրանց պատրաստուել՝ գնալու այդ սրբավայրը, ուր իւրաքանչիւր տարի խմբւում է Գեղարքունեաց գաւառի զանազան խուլ ու մութ անկիւն-

ներից ուխտաւորների ստուար բազմութիւնը: Ել ինչ կոխներ, քէֆ ու ուրախութիւններ, բազմաձայն աղմուկներ տեղի չէին ունենում այդ խառնիճաղանձ ամբոխի մէջ: Ալկօհօլը, նազարայ գուռնան, լէլինեների կլկլոցը՝ պակասը լրացնում էին: Իսկ եալիները, ժողովրդական այդ պարզ ու ուրախ պարերը, մի զմայլեցուցիչ տեսարան էին բաց անում մտառունի շրջակայքում: Զահիլ տղայ, աղջիկները այստեղ էին՝ սպարզ ու մաքուր երկնքի տակ, բաց զաշտի զբկում իրար տեսնում, հաւանում, այստեղ էին սիրում և սիրում նոքա միմիանցից. այստեղ էր նոցա Սուրբ Յովիաննէսը պաշտպան հանդիսանում և ակներե կերպով ցոյց տալիս թէ՝ նոցա մուրատը, ուխտը կը կատարմէի, թէ ոչ. եթէ փոքրիկ քարը կպաւ միանգամբից նրա խաչքարին, դա նշան էր, որ ուխտը ընդունելի է, մուրատը կատարուելու է, իսկ եթէ չը կպաւ՝ ոչ:

Ո՞րպիսի ջերմեռանդ կերպով բազմութիւնը մըտնում մատուռը և զուրս էր գալիս այնտեղից: Մի փոքրիկ, կիսաւեր մատուռ էր այդ՝ բաղկացած չորս կիսափուլ պատերից. տանիքը վաղուց անհետացել, աւերուել էր. նրա մէջը մի փոքրիկ սեղան-բեմ կար, ուր կանգնած էր, ձիթից, խնկից, մոմից սեացած, երկու արշինաչափ մի խաչքար: Խաչքարի այս ու այն կրղմ՝ թարաղներ առաջներին, չոքել էին այդ գիւղի Տէր-Գոգորը, որին ժողովուրդը Տէր-Մաթալ էր անուանում, նրա անգրագիտութեան համար, և իր տիրացուն, որոնք ժողովում էին ուխտաւորների խաչամբոյըները: Ամբողջ այն շրջակայքը, ուր գըտ-

նուում էր մատուռը, ծածկուած էր ուխտաւորներով, որոնցից շատերը եկել էին քէֆի, ուրախութեան համար:

Ուխտաւորների մէջ էին և Ալաշկերտցոնց Դաւթի և Սեփաննենց Գէվօյի ընտանիքները՝ իրարից բաւականին հեռու։ Երօն՝ իբրև ջահիլ տղայ, թափառում էր այս ուխտաւորների մի խմբից դէպի միւսը և կարծես մէկին վիճուում էր։ Նա զտաւ իր այդ վրնտուածին՝ Սեփաննենց Գէվօյի ընտանիքը. սակայն չը մօտեցաւ նոցա. Սօնան մօր մօտը չէր. նա իր ընկերութինների հետ զանւում էր մատուռում և իր բաղդն էր փորձում. քանի-քանի անզամնա վորձել էր քար կպցնել խաչքարից. բայց, գմբաղտաբար, նա չէր կպել. եւ այսպէս, նա տխուր, տրտում կանգնել էր մատուռի հեռաւոր անկիւններից մէկում և զիտում էր ուխտաւորներին։ Նրա կուսական չքնաղ դէմքը արտայայտում էր այն թախիծը, վիշտը, յուզմունքը, որոնք առաջ էին զալիս հոգեկան երկար մտատանցութիւնից։ Նա մինչեւ անզամ այնպիսի մի ինքնամոռացութեան մէջ էր ընկել, որ չէր կասկածում, թէ իրան նայողներ, տեսնողներ կարող են լինել։ Սակայն նրան ինչ փոյթ. նրա հոգեկան աշխարհը այդ բոպէին մի արտասովոր երերման, յուսահատութեան մէջ էր գտնւում, և նա, կարծես, կորցրել, դէն էր շպրտել գեղջկուհուն յատուկ պարկեշտութիւնը, ամօթխածութիւնը։ Թող տեսնեն, հասկանան, իմանան՝ մտածում էր նա։ Միթէ յանցանք է իր գործածը. ինչ անէր. ինչ միջոցի ձեռք զարկէր, երբ ինքը ոչինչ չը գիտէր և երբ դիմաղրել այդ ներքին

յուզմունքին, տրտմութեանը՝ անձեռահաս էր։ Նրա ընկերուհինները, տեսնելով նրա անսպասելի տիրութիւնը, դէֆփի ահորոշ արտայայտութիւնը, մի առժամանակ հեռացան նրանից, երբ ոս յայտնեց նոցա, որ իր գլուխը սաստիկ ցաւում է և մերժ-մերժ գալիս էին հարցնելու.

— Աղջի, Սօն, քա ինչ պատահեց քեզ, շուտ արա, զուբս գնանք, եալի ասենք, պար զանք։

— Ոչինչ. շուտով անցնելու է. այս քանի օր է զլուխս միշտ ցաւում է և շուտով էլի անցնում է, — պատասխանում էր նա, որից յետոյ ընկերուհինները զարձեալ թողնում էին նրան միայնակ։

Ճիշտ որ, այն օրից, երբ Սօնան իր կցկտոր պատասխաններով շփոթեցրեց Երօյին, այն նպատակով, որ նա զուցէ հանգարտի, թողնի իր թափառական կեանքը, ինքն էլ սկսեց տանջուել, խղճահարուել իր արածի վրա և յաճախ մելամազձոտութեան ենթարկուիլ։ Բայց որ կարտղանայ վերջ տալ թէ իր և թէ նրա տանջանքներին, վճռեց մի երկու տողով հանգստացնել Երօյին։ Ահա թէ ինչու յուզմունքը տիրել էր նրա ներքին աշխարհին, այստեղից պարզ է, թէ ինչու համար էր նա առանձնութիւն որոնում, հեռացնում իր ընկերուհիններին, որ կարողանայ մի բոպէով տեսնուել Երօյի հետ։ Մինչ նա այսպիսի անպատշաճ դրութեան մէջ էր գտնւում, նրան մօտեցաւ Երօն և կամաց հարցրեց թէ՝ ինչու համար է նա միայնակ կանգնել այդ անկիւնում և չի մօտենում համբուրում։ Երկի ճանապարհը չի գտնում այդ խուռն բազմութեան միջից։

Սօնան լուռ մնաց. չը պատասխանեց, այլ իր ձեռքը աննկատելի կերպով մօտեցրեց նրան՝ իրը բարեելու և, թողնելով նրա ձեռքում թղթի մի փորդիկ ծրար, շուտափոյթ գուրս թռաւ մատուռից:

Երօն ծրարը զգուշութեամբ գրպանը տարաւ և, առանց մօտենալու, համբուրելու խաչքարը, շտապից դուրս գալ մատուռից: Նա առանձնացաւ ուխտաւորների բազմութիւնից, բաց արեց ծրարը և կարդաց հետեւալը:—

«Երօ չան.»

«Մի քանի օր առաջ քո անսպասելի պատահելը «ինձ հետ, քո այն տիսուր, մելամաղձոտ երզը և քո «այն հարցերը այնպէս շփոթեցրին ինձ, որ ես մինչև «այսօր էլ չեմ իմանում, թէ ինչ պատասխանեցի «քեզ. սակայն այսքանը զիտեմ, որ դու նեղացած «և տիրած կը լինես տուածս անորոշ և կցկտուր «պատասխաններից: Ճնողներիս սպառնալիքները՝ չը «խօսել քեզ հետ, և քո անսպասելի յայտնուելը, «նոյնքան անսպասելի հարցերով, այնպէս երկշոտ «դաշճին ինձ, որ ես կարծեցի, թէ ամեն մի քեօլ «ու թփի տակին մարդիկ էին նստած և մեզ կարող են «լսել. ուստի և մի արտասովոր փոփոխութիւն՝ խառն «ամօթխածութեան հետ՝ առաջ եկաւ մէջս, որից «յետոյ յայտնի է, թէ ինչ տեսակ պատասխաններ «տեղի կարող են ունենալ: Այն օրուանից, երբ քեզ «տեսայ այնպէս տիսրադէմ, ես էլ եմ տիրում. սակայն «ինչո՞ւ պիտի տիսրել. աղատ սրտով գնայ շարունակելու. որքան թոյլ ոյժերս կը ներեն, ես կը դիմադրեմ «Ճնողներիս կամքին և կը սպասեմ գալստեանդ: Իմա-

«յիթ հաստատ, որ իմ հաճութեամբ ձեռքս ոչ ոքի «չի տրուի, բացի քեզանից: Աւելացնում եմ և այս, «որ ճնողներս կասկածում են թէ՝ դու ուսում առ «նելուց յետոյ՝ չես ամուսնանայ ինձ հետ, և այդ իսկ «պատճառով արգելում են ինձ խօսել քեզ հետ, տես «նուել քեզ հետ: Առաջներում, երբ միասին սովորում «էինք, նոքա համոզուած էին, որ դու չես գնալ շա «ըունակելու և չէին արգելում ինձ տեսնել, խօսել «քեզ հետ, կարծելով, որ հայրդ անպատճառ ուզելու «է ինձ: Եթէ ասելիք ունիս, կարող ես գրել և մի «կերպ ինձ հասցնել: Ուզարկում եմ քաղցր բարեներ քեզ, Երօ ջան»:

«Հո Սօնան»

Կարդալով նամակը, Երօն դնաց իրանց ընտանիքի մօտ, ուր մինչև երեկոյ ուտել-խմելուց յետոյ տիստաւորների հետ վերադարձաւ:

III.

Գէլ Յովոյենց Յարութը, քառասնից անց մի կարծահասակ, թխաղէմ մարդ էր: Գիւղում նա աղղեցիկ զիր էր խաղում նրա ընթացիկ գործերում. ամենքը քաշում, վախենում էին նրանից: Խըրաքանչիւր դժուար իննդիրներում միշտ նրան էին զիմում, նրա խորհուրդը հարցնում: Նա առանց խտրութեան՝ հարուստի և աղքատի, մեծ ու փոքրի՝ տալիս էր իր խորհուրդները: «Քիչ ու շատ զակօնի մարդ է, աղքէր, որ նրան չը դիմենք, էլ ով կայ». — կրկնում էին զիւղացիք և նրա սենեակը մտնում, նա զեռ

ամուսնացած չէր, ապրում էր միայնակ. օրերով, յաճախ, տանից դուրս չէր գալիս: Գիշերները միշտ թափառում էր այս գիւղից այն գիւղ, տեսնում, խօսում, ինչ ինչ զաղտնի ծրագիրներ կազմում և միայն լուսադիմին տուն վերադառնում, սովորական կերպով դուռը թըրխկացնում, որից յետոյ, իր տան միայնակ պահապանը՝ ծառան, նեքսեից դուռը բաց անում և նրան ընդունում: Ջատերը կարծում էին, որ նա գեերի, սատանաների հետ բարեկամութիւն է անում, որ գիշերները տուն չի մնում, թափառական դառնում: իսկ լուսաբային, երբ եկեղեցու զանգակների հետ աշխարհի վրա Աստուծոյ ողորմութիւնն է տարածւում, և սատանաներ, դեեր հալածւում են, նա հանգիստ է գտնում և տուն վերադառնում: Մերժմերթ խաւաը գիշերներին նրան այցելում էին անծանօթ անձնաւորութիւններ, երկար խորհրդակցում, հրահանգներ ստանում, ծրագրներ առնում ու անյատանում: Յաճախ ինքն էլ շաբաթներով, ամիսներով տունը ծառայի խնամքին թողնում, անյատանում էր՝ թէ ուր—այդ միայն ինքը գիտէր: Քսան տարի էր, ինչ նա վարում էր այդպիսի կեանք: Քսան երկար ու ձիգ տարիներ, որոնք ընդմիշտ մեռցրին, գերեզման տարան նրա մէջ ամուսնանալու ցանկութիւնը: Ազմկալի է եղել նրա անցեալը. քսան տարեկան հասակում նա սիրահարուեց իրանց գիւղացի Մարութենց Մկօյի աղջկայ՝ Վառօյի հետ և որբան ճիգ ու ջանքեր գործ գրեց՝ չը կարողացաւ նրա ձեռքը ստանալ՝ նրա ծնողների հաճութեամբ: Ամին տեղից յոյսը կտրած՝ նա վճռեց վախցնել իր Վառօյին:

Զատկի ճրագալոյցի երեկոյեան, երբ զիւղի մեծ ու փոքր, հարս ու աղջիկը խոնւում է եկեղեցին, նա՝ դարան մտած, վակելով դրսից եկեղեցու դուռը ժամաւորների վրա, վախցրեց Վառօյին: Որպիսի ճիշ, աղաղակ բարձրացաւ եկեղեցում, երբ յայտնի դարձաւ նրա արարքը. ամենքն էլ ձգտում էին դուրս գալու, նրա յետեն ընկնելու, բոնելու, սպանելու. բայց, դժբաղտաբար, դուռը վակել և բանալին հետն էր տարել, ճարները կտրած՝ ստիպուած եղան դուռը կոտրել և դուրս թափուել:

Կատագած ամբոխը, որի մեծամասնութիւնը կազմում էին Մկօյենց ազգականները, բարեկամները, խնամիները, քաւորները՝ իրանց բարեկամների հետ շրջապատեց Յովոյենց տունը: Դոները ամուր վականքներով ամրացրած, Յարութը սկսեց հրացանի զնդակներով զիմաղրութիւն ցոյց տալ. զնդակները կտրկտի պէս դռան ճեղքերից անընդհատ դուրս էին թափում. ամբոխը վրփուրը բերանին մի ակնթարթում դոնից հեռու-հեռու վախաւ, զինուեց նոյնպէս հրացաններով և սկսեց պատասխանել նրան: Սակայն մօտ զնալ դռանը՝ անկարելի էր. ամենքն էլ գիտէին, որ Յարութը նրա յետեին է կանգնած հրացանը ձեռքին: Այսպիսի խառնաշփոթութեան մէջ ամբոխը մոռացութեան էր տուել նրա ծնողներին, ծերունի Յովոյին իր կին չեղօյի հետ, որոնք գտնում էին եկեղեցում և զաղտագողի տուն էին վերադառնում: Տեսնելով դոցա, Մկօյենց ազգականները մի բոպէում կատագածի պէս նոցա վրա յարձակուեցին և արիւնաշղաղաղ զետին տարածեցին: Թշուառ ծնողները

զոհ զնացին իրանց որդու յանդուզն քայլելին։ Վերջապէս հեռուից լսուեց զիւղի ոէսի ձայնը. ամբոխը սթափուեց, բայց մի բոպէից յետոյ մօտեցաւ և սկսեց պահանջել նրանից, որ անպատճառ ազատէ վառոյին, հակառակ դէպքում սպառնում էին կրակ զցել և երկուսին էլ այրել։ Ռէս Յակօն, որը Յարութի հօր սրտակիցն էր և մի կրակու բնաւորութեան տէր մարդ, մի ակնթարթում բարձրացաւ Յարութեանց սրահի տաճիքը և պահանջեց, որ երթիկից բաց թողնէ Վառոյին, խոստանալով իր պաշտպանութիւնը նրան՝ օրինաւոր կերպով նշան դնել և պսակել։ Յարութը հնազանդուեց և բարձրացրեց ազգան երթիկի մօտ, որտեղից նրան դուրս քաշեցին։

Այդ օրից Յարութը անյայտացաւ, իր տաճ կառավարութիւնը յանձնելով ոէս Յակօյին, նա փախաւ լիռներ, սարեր և աւազակութեան գաւազանը ձեռքն առաւ, երբ Վառօն երկիւղից, թէ ինչից, մի ամսից յետոյ հիւանդացաւ ու մեռաւ։ Տեղական կառավարութիւնը ջանքեր էր զործ դնում բռնել այդ ահաւոր աւազակին. սակայն ապարդիւն. ոէս Յակօն, կատարելով իր խոստումը, թիշտ՝ երբ սպառնում էին բռնել նրան, զգուշացնում էր Յարութին։ Այսպէս անցան 9 տարիներ։ Վերջապէս հետգհետէ Յարութի անունը սկսեց մուացուել, նա իր հրոսակախմբով անցաւ թիւքեա, ուր նա ամեն մի քայլափոխում իր արունակիցների, ազգայինների արիւնն էր տեսնում, ուր հայ գեղջուկը իրան սեփհականութեան տէրը չէր համարւում. ուր նրա հարս ու աղջիկը օք ցերեկով առեւանգում, գոնաբարւում էին։ Իրերի այսպիսի

զրութիւնը սթափեցրեց Յարութին՝ այսպիսի մի ժամանակ նրա այնտեղ յայտնուելը աւելի քան ցանկալի և ուրախալի էր թշուառ ժողովրդի համար։

Թշուառների այդ աղէտալի զրութիւնը կամաց հանգցը նորա մէջ ե... զիւղը վերադառնալու ցանկութիւնը և նա վճռեց միշտ իր ընկերներով ձեռքից եկած օգնութիւնը շը խնայել իր ազգայիններին։ Այսպէս հետգհետէ նրա մէջ ցանկալի միտումները սկսեցին զլուխ բարձրացնել իրանց վեհ զաղափարներով և նա շուտով մոռացաւ իր աւազակային կեանքը, որը այդտեղ տարիների ընթացքում գտուել յեղափոխուել էր և կարեկցող մի զոլծօն դառել։

Այսպէս դարձեալ անցան մի քանի տարիներ. հանգամանքները իրանց ապօրինի գործունէութեան հետ հետզհետէ սկսեցին մի առ ժամանակ հանգարտուել։ Յարութը այլես կարիք չը զգաց մնալու այդ երկրում. նա ցանկանում էր գալ իր հայրենի զիւղը, իր հայրենի օչախը։ Այս նպատակով նա քրդի տարագով անցաւ սահմանը և, մի զիշեր մտնելով ոէս Յակօյի տունը, լինզրեց, որ վերջինս պաշտպան հանդիսանայ իրան և միջնորդէ ուր հարկն է իրան վերադանել իր տաճ-տեղի վրա։

Որովհետև Յարութը իր աւագակ եղած ժամանակ ոչ մի վնաս չէր տուել ոչ ոքի, ուստի և ոէս Յակօյի միջնորդութիւնը յարգուեց և Յարութը վերադառաւ օքէնքի թոյլատութեամբ իրանց զիւղը և, ինչպէս տեսանք, իրան ասաքինի վարք ու բարքով սիրելի էր զառել բոլորին։

Արել զեռ նոր էր բարձրացել կապոյտ երկնակամարի վրա, կենդանութիւն տալով Ե... զիւղին, երբ մի ջահէլ տղայ, տխրութեան թախիծը երեսին, կանգնեց Յարութենց դռանը: Մի փոքը մտածելուց յետոյ նա՝ աւելորդ համարելով դուռը թակել և Յարութի քունը, հանգիստը խանգարել, որովհետև զիտէր, որ նա զեռ մի քանի ժամ է, որ պարկել է քնելու, ուստի լաւ համարեց հեռանալ այդ տեղից, մինչև նա կը զարթնէ և իրան կ'նդունէ: Այսպէս անցաւ էլի մի քանի ժամ և նա նորից վերադարձաւ ու սկսեց Յարութենց դուռը թակել. իսկոյն յայտնուեց ծառան և, իմանալով ով է, յայտնեց իր տիրոջը, որից յետոյ ընդունեցին նրան: Յարութը նոր էր վեր կացել և կաթի բաժակը առաջին դրած՝ մէկ կարդում էր, մէկ կաթ էր խորւմ: Սենեալը մի խոնաւ, փոքը լուսամուտներով և յածը առաստաղով շինութիւն էր: Կահ-կարասիքով հարուստ չէր. մի փայտեայ մահճակալ, որի վրայ նստած էր Յարութը, մի հին սեղան, երեք աթոս, ահա այն ամենը, ինչ աշքի էր ընկնում նրա մէջ: Զը պէտք է մոռանալ, որ պատից, մահճակալի վերև, կախուած կային երկու հրացան, մի սուր, մի դաշոյն և չորս ատըրճանակ իրանց փամփուշտ ամաններով: իսկ սեղանի վրա և նրանից ոչ հեռու պատի պահարանում կային կաշեայ-կազմ մեծ և փոքը զբրերի կոյտեր:

— Բարե, Յարութ աղբէր, արդեօք չեմ խանգարիլ շեղ իմ անսպասելի այցելութիւնովս,—հարցը նըրան երօն:

— Համեցէր, համեցէր, շատ ուրախ եմ, որ մտա-

րիրեցիք ինձ, խանգարելու ոչինչ չը կայ, — այս ասելով Յարութը առաջարկեց նրան մի աժոռ նստելու համար, — կուզէք, երօ, հարամայեմ կաթ բերեն, միասին խմենք:

— Ո՛չ, ո՛չ, ես շնորհակալ եմ, ես լաւ նախաճաշշել եմ և այժմ էլ բոլորովին ախորժակ չունիմ:

— Երօ, խէր է զալուստգ. ինչ որ վշտացած էր երեսում. հոգով ուրախ եմ, որ վերջապէս հայրդ քեզ ուղարկելու է աւելի բարձը կըթութիւն առնելու. վառք քեզ, Աստուած, որ մեր թմրած գիւղացիներն էլ հասկացան ուսման արժանիքը: Լսում եմ, որ շատ լաւ սովորում ես. մեր ուսուցիչ Վաշէն միշտ հիացմունքով է խօսում քո մասին: Ապրիս, լաւ իմացիր, որ առանց ուսումի մեզ վրկութիւն չը կայ: Գիւղացին երբէք զուրս չի կարող զալ իր թմրած, կիսամեռ զբութիւնից, եթէ ուսման ճառագայթները չը թափանցեն նրա մէջ, նրա ներքին աշխարհը յեղափոխելու համար. նրա քայլայուած անտեսութիւնը միայն ուսում առած երիտասարդներով կարելի է վերականգնել, նրա արտ-ափը միշտ էլ այլպէս աներեցը կը մնան, եթէ մեր նոր սերունդը չը յարմարուի կեանքի նոր պայմանների հետ և ըստ այնմ չը վարէ իր առօրեայ զործերը: Վարակիչ ախտերը, այս ու այն հիւանդութիւնները, միշտ էլ կը թագաւորեն նրա խրճիթի յարկի տակին, միշտ էլ վագաթառամ զոհեր կը տանեն զէպի դերեզմանը եթէ մեր նոր սերունդը հետեր իր նախնիքների, իր պապերի նիստ ու կացին: Իսկ այդ բոլորի համար անհրաժեշտ է ցըել գիւղական մինուլորտում տիրող թանձը խա-

ւարը, որը զարերի ընթացքում հալել, մաշել և կուրութեան է հասցըել մեր գիւղացու մտաւոր աշխաքհը: Այս, ուր էր, որ մեր իւրաքանչիւր զիւղից միքանի քեզ նմաններ դիմէին դէպի ուսում, կըթութիւն:

Յարութը լսեց. նրա գէմքը այդ բոպէին կարմրել, շունչը արագացել, աշքերը լայն բացուել էին. նա ողերուած էր:

—Այդ բոլորի համար ես համաձայն եմ ձեզ հետ. սակայն ունեն մեր զիւղացիները նիւթական միջոց, որ կարողանան իրանց զաւակներին օտար վայրեր ուղարկելու կրթութիւն, ուսում ձեռք բերելու համար: Բայց այսօր ես չեմ եկել ձեզ հետ վիճելու: Այն, նիւթական միջոցը կաշկանդում է թշուառ զիւղացու ձեռքերը. եթէ քո հանդուցեալ հայրը, ողորմածիկ Յովօն, նիւթական միջոցից զուրկ լինէր, միթէ կարող կը լինէր քեզ Թիֆլիսում պահել և կըթութիւն տալ. չի որ, որքան ես լսել իմ, նա վերջը զգացել է, որ նիւթականը այլևս չի ներում, այդ պատճառով, քեզ չի թողել, որ կրթութիւնդ աւարտես, և այդպէս կիսատ զուրս է բերել ք'զ: Ահա թէ ինչն է խանգարում մեզ:

—Միանգամայն ճիշտ է քո նկատողութիւնը. իսկ ինչ կասես հաւաքական ոյժերի մասին. միթէ եթէ մեր զիւղացին հասկանայ իր օդուտը, չի կարող հաւաքական ոյժերով իւրաքանչիւր զիւղից չորս, հինգ երիտասարդներ ուղարկել զոնէ մեր Կովկասի մօտիկ քաղաքները փոքր ՚ի շատէ օգտաւէտ զիտելիքներ ձեռք բերելու համար:

Եթէ նախանձում են, թէ՝ ում որդին զնայ, թող վիճակով ուղարկեն, որից, կարծում եմ, ոչ մի դժգոնութիւն առաջ չի գայ: Դիտես իւրաքանչիւր տարի քանի-քանի հարիւրներ են մտնում մեր զիւղական կուլակների որկորը: Եթէ չը լինեն նոքա, մնացածներին հեշտ է համոզել: Հա, մոռացայ, ինչի համար ես այսօր եկել:

—Այնպիսի անսպասելի հարցեր շօշափեցիք, որ քիչ մնաց ես մոռանայի իմ զալու պատճառը: Եթեք օրից յետոյ ես հօրս հետ պիտի զուրս զնամ ե.. քաղաք, որը հայրս ընտրել է ինձ ուսումնավայր, ուր, զուցէ, մի քանի տարի տեսէ իմ բացակայութիւնը. այդ բացակայութեանս միջոցին մեր զիւղում մէկը անհրաժեշտ է ինձ պաշտպան ունենալ: Արդեօք վըստահ կը լինեմ, որ այդ գերը զուրք վեր կառնէք ձեզ վրա, դա մի շատ ծանր բան չէ: Գաղտնիքս միայն ձեզ եմ վճռել բանալու:

—Ես միշտ պատրաստ կամ քեզ համար, երօ. ով վստահ չը լինի վրաս, զու միշտ կարող ես վըստահ լինել. պատմիր ասելիքդ:

—Սեփանենց Դէվոյի աղջիկ՝ Սօնան և ես դեռ մանկութեան ժամանակից սիրում ենք միմիանց. իմ զնալովը, կասկածում եմ, որ նրա հայրը վերցնի և մի ուրիշի, իր խելքը կարած մէկին տայ. զու հօգիտես, որքան դժուար հարց է և որքան անփոխարինելի է այդպիսի մի կորուստ մի սիրող սրտի համար: Որ այդպիսի դժբաղտութիւն տեղի չունենայ, ես վճռեցի զիմել ձեզ՝ ձեր ոյժերը ներածին շափարգելք հանդիսանաք այդ բանի իրագործման և, եթէ

հնար չէք դտնի ազատելու այդ թշուառ զոհին իր հօր ճանկերից, այն ժամանակ մի երկու տողով տեղեկութիւն տուէք ինձ, որից յետոյ կարելին կը կարգադրեմ:

—Ես պատրաստ եմ խնդիրդ չը մերժելու. բայց և պարտք եմ համարում զգուշացնելու, որ շատ դըժուար բաժակ ես ճաշակել. իմ անցեալը հօ քեզ յայտնի կը լինի. լսած կը լինս նաև, որ ես իմ թեթեամութեամբ մի անբազդ օրիորդի մահուան պատճառ դարձայ: Դիւրազըզութիւնս և անխոհեմ քայլերս մինչ այն աստիճան ցնորդների մէջ զցեցին ինձ, որ ես մոռացայ կըթութիւնս և վայրենիներին յատուկ կոպտութեամբ, փակելով եկեղեցու դուռը, փախցրի թշուառ Վառոյին, որի և մահուան պատճառը դարձայ. դեռ չեմ ասում և ծնողացս եղերական մահը: Այժմ այդ խնդիրին շատ զգուշութեամբ պիտի վերաբերուել. Ես, ինչ որ կարելի է, կ'անեմ քեզ համար. դու արխային կարող ես զնալ, իսկ եթէ զժուարացայ մի որեէ բանում, այն ժամանակ քեզ տեղեկութիւն կը տամ:

Երօն վեր կացաւ, յայտնեց նբան իր անկեղծ շնորհակալութիւնը և, սեղմելով նրա ձեռքը, դուրս եկաւ տանից: Նա մեծ յոյս ունէր Յարութի վրա, ուստի և այժմ այնքան չէք մտածում ապագայ օրերի մասին:

IV.

Սուրբ Յովհաննէսի ուխտի օրը, ընթերցող, վըստահ եմ, չէք մոռացել մատուասում եղած Տէր-Մա-

թալին. ուստի աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել նրա մասին, որովհետև մեր պատմութեան մէջ աշքի ընկնող զեր է խազում և նա, Սլանանք մի քանի տարի առաջ, տեսնենք, ով էր Տէր-Մաթեալը:

Ամառ էր. Ե... զուղի եղեղեցու զանգակները զընդ հա զընդ ուժովին հնչում էին. խեղճ ժամհար Օհանը մօտ երկու ժամ էր, ինչ անընդհատ զանգակների պարաններից ամուր բանած և քթի տակին ջերմեռանդ կերպով իր սովորական ագօթքը փընթփընթալով՝ մէկ հազում, մէկ խփում էր և հանգիստ չէր տալիս ոչ զանգակներին և ոչ իր յոգնած ու նիհար ձեռքերին: Գիւղի խառնիճաղանձ ամբոխը իրան յատուկ հետաքրքրութեամբ շարուել էր փողոցների այս ու այն կողմը և իւրաքանչիւրը աշխատում էր համ լաւ, համ յարմար տեղ բռնել իր համար:

Առանց ականջներ բռնելու չէր կարելի անցկենալ այդ փողոցներով. փորբիկ, ծծկեր մանուկները իրանց մայրերի զըկում գոռում-գոչում էին զըել. որը սոված էր և ծծի համար էր լաց լինում. որը՝ վըխթացող բազմութեան տեսնելով, մասցիլ էր զարմամացած և երկիւղից էր լաց լինում. իսկ աւելի մեծերը մի փողոցից վազ էին տալիս միւսը և նորից արագ-արագ, հարայ-հրոցով իրանց մայրերի մօտը վերապառնում: Զահիլ կանայք և հարսները՝ քիթ-քթի կպցրած իրար հետ էին քչփչում. պառաւները դոցա կողքին՝ կամ նստոտած էին գետնին, կամ կանգնած՝ բարձր-բարձր զբոյց անում և իրանց ջահին երով զուարձանում: Կային և այնպիսիներ, որոնք զիւղից

զուրս էին գնացել ամենից շուտ եկող սրբազնի աջը համբուրելու։ Մի խօսքով, գիւղը մի արտասովոր իրարանցման մէջ էր։ Ոչ պակաս խառնաշփոթութեան մէջ էին և «եասառու» Գոզորի տանեցիք, որոնք թէ սենեակի թէ կերակուրի պատրաստութիւն էին տեսնում, որովհետեւ եկող Սրբազնը իր սովորութեան համաձայն նրանց մօտն էր վեր զալու։ Եւ ինչպէս կարող էր իր մօրաքրոջ աղջկայ փեսային թողնել և մի ուրիշ տեղ վեր զալ. սակայն կային և շար լեզուներ, որոնք այլ կերպ էին բացատրում այդ այցելութիւնները։ Գեղարքունեաց գաւառի վանքերից մէկում, Սրբազնը վանահօր պաշտօն վարելով շրջապատուած էր իր ազգական բարեկամիւրով, որոնց մէջ էր և Գոզորը, որը երկու երեք ամիս էր, ինչ նրա մօտն էր զանուում, համ ծառայի պաշտօն կատարելով, համ էլ եկեղեցական արարողութիւններ սովորելով։

Վերջապէս, հեռուից երեեցաւ մի ձիաւոր, որը որարշաւ անցաւ զիւղի մեծ փողոցով, բարձր ձայնով ազգարարելով. — զալիս է, զալիս, հանդիստ մնացէք, ինչ էք հարսնքատոն շինել. այ պառաւներ, ախր ամօթ չէ. չէ որ դուք պիտի սաստէք ձեր լակոտներին. մեր զիւղի թասիբի համար պէտք է աշխատէք մարդարի երեալ Սրբազնի աշքին։

Պալրկենաբար տիրեց խորին լուսւթիւն. ամենքը լարուած հետաքրքրութեամբ յառեցին իրանց հայեացքը այն կողմը, որտեղից պիտի երեալ Սրբազնը, որը ճիշտ որ, երկար սպասեցնել չը տուց իրան՝ շրջապատուած զիւղիբի մի բանի տէրտէրնե-

ըով, աղաներով և ժողովուրդի բազմութեամբ՝ նա հանգարտ քայլում էր։ Նա մտաւ եկեղեցին, աղօթեց և ապա եկաւ Գոզորի տունը, ուր նրա իրերը վազուց տեղաւորել էր Գոզորը։

Տան բազում սրբազնին դիմաւորեց Գոզորի կին՝ նուբարը, որը հպարտ-հպարտ մօտեցաւ, նրա աջը առաւ և հրաւիրեց նեքսեւ։

Սրբազնը մտաւ իրան համար պատրաստած խոնաւ. ու մութ, փոքրիկ լուսամուտներով սենեակը և բազմեց փայտեայ մահճակալի վրա, որը մի քանի հնամաշ աթոռների հետ կազմում էր սենեակի կահկարասիքը։

Դա մի կարճահասակ, սպիտակամօրուք և առողջ զէմքով հոգեորական էր, որը շափազնց գէր լինելու պատճառով չէր կարողանում ազատ շարժուել և խօսում էր, համարեա, հեալով։ Երբ ամենքը ցրուցին, նա կանչեց իր մօտ Գոզորին, ինչ որ փսփսաց նրա ականջին և պարկեց քիչ հանգստանալու. իսկ Գոզորը շտապ-շտապ դուրս գնաց տանից։

Արեւ դեռ նոր էր մայր մտել, երբ մի քանի մարդիկ խումբ-խումբ Գոզորինց դուան մօտեցան. դոքա բոլորն էլ զիւղի աղսախկաներ և աղաներ էին. Սրբազնը նոր էր վեր կացել և, թէյի բաժակը առաջին դրած, մէկ խմում էր, մէկ ձեռքի տէրողորմեան շըրխկացնում և, բերանը լայն բանալով, օրոճկոտում, երբ նուբարը յայտնեց նրան, որ զիւղի էշխանները ուզում են տեսնել իրան։ Յարմար զիւքը բռնելով իրան համար, նա հրամայեց նոցա նեքսեւ հրաւիրել. թւով եօթն հոզի նեքսեւ մտան և սրբա-

զանի աջը համբուրելով՝ նրա հրաւերով նստեցին սենեակում եղած աթոռների վրա:

— Ե՞ս, բարի էք եկել, օրհնածներ, ինչպէս էք, լաւ էք, ինչպէս են ձեր կառավարութիւնները, — հարցրեց Սրբազնը խեղտուած և քյի մէջ ընկած ձայնով:

— Ծառայ ենք աշխիդ, Սրբազն հայր, գուք լաւ լինէք, փառք Աստուծոյ մենք եօլա կը զնանք ձեր սուրբ աղօթքով, — համարեայ միաբերան պատասխանեցին նստող իշխանները:

Մինչ այսպէս խօսում էին, Գոզորը՝ թէյով բաժակները շարելով նստողների առաջ, ինքը զնաց և զռան մօտը կանդնեց, ուր կանդնած էք և նուբարը:

Թէյի բաժակից մի՛ կում խմելուց յետոյ՝ Սրբազնը նորից շարունակեց:

— Աստուած օրհնէ ձեզ, ուրախ եմ, որ լաւ էք. բայց մի բան ինձ դուք չի գալիս, որը ձեր համար և ձեր ահազին զիւղի համար մեծ պակասութիւն է. ահա մի տարի է, ինչ դուք քահանայ շունէք և չէք էլ մտածում ունենալ. իսկ ձեզ հովտող քահանան ձեր մարդ է և մի օր լաւ է տասն օր՝ պարկած, և վերջապէս, օրհնածներ, նա իւր ծուխն ունի, որին և հազիւ է կարողանում կառավարել. Ես հէնց դրա համար էի Դոգորին պատուիրել, ձեզ հրաւելու, որ համ քիչ խօսենք, համ էլ այս բանը ձեզ խրատեմ, որ մեծ պարտականութիւն է ինձ համար:

— Սրբազն հայր, հոգիս վկայ է՝ լաւ ես ասում, փառաւոր մնաս. հարկաւոր է, — կցկուը պատասխանեց մահտեսի Մինասը. միենոյն կը կանոնացին անել.

ները, որից յետոյ Մահտեսին շարունակեց. — Ի՞նչ անենք, հայր Սրբազն. մենք ինչ զիտենք, որ ինչ կարողանանք անել. ոտիգ հողը դառնամ. հասկանում ենք, որ ցաւում ես մեզ, որ չը ցաւես, չես ասիլ. բայց ինչ արած, երբ մենք յարմար տիրացու և քահանացու շունենք, — հեղինակաւոր ձայնով պատասխանեց դարձեալ Մահտեսին.

— Դիտեմ, որ չունէք. բայց միթէ հեռու եմ ձեզանից գտնուում. ինչո՞ւ մի օր չը մտածեցիք ինձ մօտ գալ խորհուրդ հարցնելու. չէ որ բոլորդ էլ իմ որդիքն էք և բոլորդ էլ միատեսակ եմ սիրում. զուք չ'եկաք, բայց ես՝ եկայ:

— Ճնորհակալ ենք, հայր Սրբազն, ներողութիւն արած. Է՞ս, զիւղացի մարդիկ ենք, սխալում ենք. — պատասխանեցին նստողները:

— Ոչինչ. ես ամեն ժամ ներում եմ ձեզ. գոնէ այժմ սթափուեցէք, խելքի եկէք. այժմ հօ՛ ձեզ մօտ եմ գտնուում:

— Ախը ինչ անենք, Սրբազն ջան, որ մի յարմար տիրացու շունենք. — կրկնեց դարձեալ Մահտեսին.

Մի փոքր մտածելուց յետոյ՝ Սրբազնը շարունակեց:

— Որ ձեզ համար մի լաւ, իմ հաւանած տիրացու գտնեմ, շուտ օրհնել տամ, ինչ կասէք. հօ՛ նազ ու մուհաթ չէք անի:

— Ո՛չ, ո՛չ. — զգացուած պատասխանեցին նըստողները:

Մի փորձառու հայեացք ուղելով դէպի նստող-

ները, սրբազնը հազիւ լսելի ձայնով պատասխանեց:
—Այ Գոգորս ձեզ տիրացու. այս քանի ամիս է, մօտս սովորում է. եթէ դուք ինձ լսէք, ես նրան օրհնել կը տամ և օրհնելուց յետոյ էլ խոստանում եմ աշխարհածեալ վրան պահել և ձեր՝ զաւառի տէրոէլներից առաջինը շինել. զեռ չեմ առում, որ մի քանի տարի Թուսաստանում մնալով, և ապա այստեղ «եստուլ» եղած ժամանակ՝ լաւ սովորել է ոռուաց լեզուն և ձեզ միշտ կարող է պէտք զալ. Եւ եթէ դուք ինձ խօսք տաք, ես այս ըստէիս դործ սկսել կը տամ և մի երկու ամսից յետոյ քահանայ կունենաք. ձեզանից է կախուած ձեր զիւղի բաղզը. նստողները իրար երեսի հայեցին ու մնացին շուարած. բոլորն էլ շատ լաւ զիտէին, թէ ով է Գոգորը. բայց կոտըել սրբազնի առաջարկութիւնը՝ անկարող էին. Մինչ սոքալուռ մտածում էին, Գոգորը ժողովեց նոցա թէյի բաժակները, որոնք կրկնուել և վազուց դատարկուել էին, և տեսնելով, որ բոլորն էլ շնորհակալութիւն յայտնեցին, տարաւ և զարսեց իրանց տեղերը. Վերջապէս, Մահտեսի Մինասը, նայելով իր ընկերների երեսին, ընդհատեց լուսթիւնը:

—Ինչո՞ւ էք սուս արել. Սրբազնը հօ մեզ վնաս չի ցանկանայ. զէն մարդը խոստանում է ամեն բան անելու. նա մեր զլուխին է, ինչպէս կարող ենք նրա խօսքը կոտըել. ես աղպէք, տուեցի իմ համաձայնութիւնը իմ մարդիկներով:

—Այ Աստուած օրհնէ քեզ Մահտեսի, խելօք մարդ ես, քեզ վազուց եմ ճանաշում. արժանի է էն լոյսը քեզ, որ տեսել ես.

Մնացածները, տեսնելով իրանց նեղ դրութիւնը և չուզելով կոտըած լինել Սրբազնի խօսքը, նոյնպէս պուեցին իրանց և իրանց մարդկանց բարեկամների համաձայնութիւնը և արժանացան սրբաբազնի օրհնութեան:

Խեկոյն Սրբազնի թելազրութեամբ կազմուեցին թէ համախօսական վճիռ և թէ միւս հարկաւոր զրութիւններն ու ծածկուեցին ստորագրութիւններով. Ինչ կարծիք, որ ամեն մի աղսախկալի ձեռքն է իր մարդկանց բաղզը. հետեապէս սոցա հրամաններով կանչուեցին մի քանի գրագէտներ, որոնք և կատարեցին անհրաժեշտ ստորագրութիւնները:

Այդ երեկոյ Գոգորը սովորականից աւելի շուրջ պատրաստութիւն էր տեսել. աղսախկալները մի լաւ ընթերելուց և Սրբազնի օրհնութիւնը առնելուց յետոյ, զնացին իրանց տները. Մինչգեռ այդ ժամին նոքա, որոնց ստորագրութիւնները շարուեցին խնդիրների վրա՝ խոմրացնում էին. Այսպէս են կատարում զիւղերում լուրջ խնդիրները:

Խոկ Սրբազնը, առաւտեան եկեղեցի զնալով օրհնեց և աշքալուսանք տուեց ժողովրդին և ապա, իր հետ առնելով գործերը, զնաց ն. քազաքը:

Մի քանի ամսից յետոյ իր մենաստանում Սրբազնը Գոգորին քահանայ ձեռնաղբեց ե.. զիւղի վրա:

Այժմ անցնենք այն շրջանը, որը ներգործող դեր է խաղացել Գոգորի վարք՝ ու բարբի վրա:

Նաղարենց Գոգորը մի միջահասակ և սև դէմքով մարդ էր: Նրա յիմար հպարտութիւնների պատճառով զիւղացիները նրան յաճախ անուանում էին

«Խան-Գոգոր» «Ջահ-Գոգոր», ճարը կտրած սա էլ իրան սկսեց այդպէս անուանել և մինչև անդամ այդպէս էլ ստորագրել. սակայն պէտք է իմանալ, որ այդ տիտղոսները մերթ իր անուան, մերթ իր ազգանուան վրա էր դնում: Եւ այդպէս ամենքը նրան ճանաշում էին և կոչում: Չը պէտք է մոռանալ, որ երբ Գոգորը քահանայ դարձաւ, Սրբազնը մի քանի ամսից յետոյ պաշտօնով փոխուեց մի ուրիշ նահանգ. և այսպէս Տէր-Գոգորը գրել-կարդալում ոչ թէ առաջ գնաց, այլ, ընդհակառակը, աւելի վատացաւ, այնպէս որ նրա պաշտօնական գրութիւնների «հ, և ն» տառերը խառնում էին իրար և փոխանակ «Ջահ, կամ Խան» ստորագրելու, զբում էր «Ճան», «Խան». իսկ եթէ ուշիուշով վերաբերուէք դէպի նրա այդ գրութիւնները, այն ժամանակ կը տեսնէք, որ նա աւելի քան չափազանց բորիկ է եղել թշուառ հայոց գլականութեան մէջ:

Գոգորի մանկութեան օրերը շատ ու անցան իր համար. նա շուտ զրկուեցաւ ծնողներից և մասց բարեկամների հոգացողութեան տակ, որոնք, կոշտ-կոպիտ վարուելով նրա հետ, ներշնչեցին նրանում վայրենի կոպտութեան սաղմը, որը, զնալով, աւելի անեց և մինչև նրա կեանքի վերջն էլ կազմում էր նրա բնաւորութեան խոշոր պակասութիւններից մէկը: Մինչև քսան տարեկան հասակ նա ապրում էր իր հայրենի գիւղում, լինելով բարեկամների մօտ հօտաղ՝ յետոյ ոստիկանական պըլիստավի մօտ ձիաւոր-եասաւուի պաշտօն էր վարում, ապա վերջերը դիւղի նախընդուն էր անում և իր ու իր ընտանիքի գլու-

խը մի կերպ պահում: Սրա կին նուրաը մի բարձրահասակ զեղեցկատեսիլ կին էր, որի նեղ ու փոքր աշքերից պարզ երեսում էր, թէ անզգամութիւնը, ցոփ վարը ու բարը կազմում են նրա բնաւորութեան էական և խոշոր կէտերից մէկը: Սա մի պատուհաս էր իր ամուսնու համար. երբ խեղճ Գոգորը՝ յոզնած, թմրած ցերեկուայ սար ու ձոր թափառելուց՝ տուն էր վերադառնում իր վաստակած անզգամներին հանգստութիւն տալու, կինը նրան կամ ջրի էր ուղարկում, կամ որա-նրա մօտ շտապեցնում այս ու այն բանի համար: Եւ այսպէս, Գոգորը թէ դրսում և թէ իրան տան յարկի տակ հանգստութիւն չունէր:

Իր բազմաթիւ հարեանների օրինակը, որոնք իւրաքանչիւր տարի խումբ-խումբ թողնում էին հայրենի հողը և աճապարում Ռուսաստանի այս ու այն վայրը՝ մի որեէ ապրուստ ճարելու, շատ խորն էր ազգել և Գոգորի վրա. սակայն նա դեռ չէր վճռել հեռանալ իր հայրենի գիւղից:

Վերջապէս նուրաը վարը ու բարը, անզգամութիւնը կորցրին շափը և Գոգորը հետևեց իր հարեանների օրինակին. մի հնարքով ձեռք բերելով անցագիր, նա մի դիշեր հեռացաւ իրանց գիւղից, թողնելով ճակատագրի կամքին իր ընտանիքը:

Զրկուելով Գոգորից, նուրաը զրկուեցաւ և նրա ամուսնական հսկող աշքերից. և այսպէս, աւելի և աւելի լայն ծաւալ ստացաւ և զազրելի դարձաւ նրա ցոփ կենցաղավարութիւնը:

Անընդունակ լինելով ազնիւ ճանապարհով մի կտոր հաց ճարելու, Գոգորը դիմեց խաչազողութեան

գորշելի արհեստին և, որբին յատուկ ճարպիկութեամբ, շուտ սովորեց Թուսաց լեզուն, որը անհրաժեշտ է այդ արհեստը գործադրութեամն համար:

Եւ այսպէս, նախրչի Գոգորը անհաւատալի արագութեամբ մէկ երեսում էր լայնատարած Թուսատանի մի անկիւնում, մի քանի օրից յետոյ միւս՝ հակոռակ անկիւնում և ամեն տեղ լրբութեամբ կողոպտում, թալանում և ՚ի շարը զործ դնում այդ ժողովրդի հաւատը: Քանի՞-քանի անզամ նա բռնուել և բանտ էր նետուել, որից էլի մի հնարքով ազատուել քանի՞-քանի անզամ նա յանկացել էր վերադառնալ իր հայրենի երկիրը. բայց երբ նուբարը իր գարշ գործերով միտն էր եկել, սթափուել և վճռել էր ընդմիշտ շը տեսնուել իր այդ անզզամի հետ: Եւ այսպէս դարձեալ խաչազողութեան անարդ դաւազանը ձեռքն էր առել: Եթէ մի անսպասելի ձեռք երեան շը գար և շը քաշէր Գոգորին դէպի իր հայրենի երկիրը, նա այնտեղ էլ պիտի մնար. ասկայն ճակատագիրը այլ կերպ է տնօրինում մարդկանց վիճակը. մի քանի տարուց յետոյ, ինչպէս տեսանք նախընթաց երեսներում, եկաւ այդ գաւառը նրա բարիկամ Սըրբազնը, ջանքեր գործ դրեց և նրան համոզելով ու վերադանելով իր տան տեղի վրա, պատրաստեց իր վանքում և քահանայ ձեռնազրեց: Նուբար սկըզբում համեմատաբար մեզմ էր վարփում Գոգորի հետ. բայց երբ նա՝ մեր պանզուխտների կանանց յատուկ վեներական հիւանդութիւն ստացաւ նրանից, վայը եկաւ ու տարաւ նրան: Սակայն շուտ բժշկական օգնութիւն հասաւ և նա սկսեց օրէցօր դէպի լաւը

զնալ: Զեպից եկած օգնութիւնը Սըրբազնը չէր ինսայում Գոգորին. չերմ յարաբերութեան մէջ լինելով Մոսկուայի Լազարեան ճեմարանի տեսչի հետ, նա յանձնաբարական նամակով Գոգորի որդի Վիրապին այնտեղ ուզարկեց, որը ընդունուեց աշակերտ այդ ճեմարանում: Վիրապին հարևանները «բիճ» էին անուանում յաճախ, որովհետեւ նա Գոգորի բացակայութիւնից 11 ամիս յետոյ էր ծնուել. գոնէ այդպէս էին համոզուած հարևանները:

V.

Անցան մի քանի տարիներ. Սըրբազնը պաշտօնով շատ հեռու էր գտնուում քահանայ դառած Գոգորից, որը չ'արդարացրեց գիւղացիների սպառնալիքները. Սըրբազնի հեռանալուց յետոյ՝ նա մնաց միայնակ և իմացածն էլ մոռացութեան տուեց, այնպէս, որ միայն ֆարաչայով էր զանազանում առաջուայ եասաուլ և նախրչի Դոգորից. ուստի և ստացաւ գիւղացիներից «Տէլ-Մաթալ» մականուն: Տարիների ընթացքում Ե... գիւղի գիւղացիները Գոգորի ձեռնազրութեամբ նոր հասկացան իրանց գործած սիսալը: Ի՞նչ անէին. ում դիմէին. չէ որ Սըրբազնի խաթը մէջ տեղ կար. Էլ ո՞ւ յաջորդ-վարդապետը կը վստահանար ձեռք տալ նրան, լսել գիւղացիների ձայնը, երբ ամենքին էլ յանձնաբարական էր տալիս Սըրբազնը՝ լաւ եօլա տանել իր բարեկամ տէրտէրին: Եթէ շը լինէր այդ գիւղի փորձուած տիրացուն Մուքէլը, Տէլ-Մաթալի բանը բուրդ էր՝ գժուարանում

Էր շարական ասել, իսկ գտնել օրուայ շարականները հօ անիրազործելի մի բան էր նրա համար. կարդալը՝ Աստուած կարդալ համարէ. մի ժամ հաղիւ մի թեթև աւետարան էր կակըզարով կարզում, այն էլ, համարեա, տասից մէկը ուղիղ չէր լինում: Թշնառ հայոց եկեղեցի.... Այսպէս և գիւղացիները կամաց-կամաց սառեցին եկեղեցուց: «Հինգ սհաթ կանզնում մաթալ է մում, ազպէր, հինգ սհաթ մի բան հաղիւ է կարզում, էն էլ, վայ մեզ, կէսը սուտ,—կըկնում էին գիւղացիները,—մենք մեր տունը քանզեցինք, տեղն է մեզ, տեղը»: Վերջապէս գիւղացիների համբերութեան բաժակը լցուեց. նոքա բողոքի դիմեցին. բայց երբ է մեր հոգեոր հայրերի մօտը թշուառ, ճնշուած, ժողովրդի արդարացի բողոքի ձայնը լսելի եղել. եթէ եղել է, դա պէտք է բացառիկ դէպքերի վերագրել, կամ մի որեէ խնամէութեան: Իրար յաջորդող այդ վարդապետներից և ոչ մէկը չէր ցանկանում ձեռք տալ, դիպչել Տէր-Մաթալին. իսկ սա աւելի ևս սկսեց երես առնել և իր աղտեղի գործերը երեան հանել, էլ ինչեր ասես չէր անում. արբեցողութիւն, ժողովրդի հետ կորիւներ, վէճեր, անբարոյական ճանապարհից հեռու չը կենալ, 30—40 % փող պարտ տալ. սուտ վկայութիւններ տալ, սուտ երդուել՝ սովորական բաներ էին նրա համար:

Մի անգամ էլ հարբած ժամանակ տուեց և գիւղի պատուաւոր, իրան հովանաւորող իշխանի՝ Մահտեսի Մինասի գլուխը ջարդ ու փշուը արեց. բայց ինքն էլ շարաշար տուժեց, որովհետեւ Մահտեսու որդիները չը կարողացան մարսել իրանց հօր հասցը-

րած վիրաւորանքը և մի գիշեր, երբ նա վերադառնում էր մի հարսնքատնից, նրա առաջը կտրելով, լաւ քեօթակ տալուց և ֆարազան ծւիկ-ծւիկ անելուց յետոյ, գլուխն էլ կոտրեցին: Նման դէպքերի առիթով բողոք-բողոքի յետեկցից թռչում էր մեր հոգեոր Ատեանները. սակայն միշտ էլ ձայն բարբառոյ յանապատի էր մնում: Վերջապէս, թշուառ ժողովը-դի կատաղութիւնը իր գաղաթնակէտին հասաւ և նա սկսեց սպառնալիքների դիմել, որ Տէր-Մաթալը իր պատուով հեռանայ իրանց միշից: Բայց միթէ այդ կարելի բան էր. չէ որ հասարակ ժողովուրդը միայն չորս բառով է բնորոշում մեր տէրտէրների ընշասի-րութիւնը, աշքածակութիւն՝ «սար ու ձոր-տէրտէրի փոր»: Ուստի կարելի բան էր որ Տէր-Մաթալը թռչնէր ու հնուանաբ:

Երբ սպառնալիքները չը զգաստացըին, ուշքի չը բերեցին Տէր-Մաթալին, ժողովուրդը սկսեց գործադրել նոցա. գիւղացիներից մէկը, որը իր շափականց պարզութեան համար գիֆ Մնօ էր անուան-ւում, մի գիշեր մտաւ նրա ախոռը և նրա ձիու պոշը մաքուր խուզեց, թողնելով այնտեղ մի անօնիմ նամակ՝ որ եթէ ինքը, Տէր-Մաթալը, շուտ չը հեռանայ, իր մօրուքն էլ քնած ժամանակը ձիու մըկ-րատին գոհ պիտի ցնայ:

Այս բանը զգաւշացընց մեր տէրտէրին. նա մի թռւք հաստավիզ ծառայ վարձեց այն պայմանով, որ իր քնած ժամանակ ինքը՝ ծառան չը քնէ, այլ հսկէ իրան: ծառան աւելի ուրախ էր, որովհետեւ մի դժուար գործ չ'ունէր անելու՝ ջուր բերել, ձիան տակ

Էր շարական ասել, իսկ գտնել օրուայ շարականները հօ անիրազործելի մի բան էր նրա համար. կարդալը՝ Աստուած կարդալ համարէ. մի ժամ հազիւ մի թեթև աւետարան էր կակըզալով կարդում, այն էլ, համարեա, տասից մէկը ուղիղ չէր լինում. Թշուառ հայոց եկեղեցի.... Այսպէս և զիւղացիները կամաց-կամաց սառեցին եկեղեցուց. «Հինգ սհամ կանզնում մաժալ է մնում, աղպէր, հինգ սհամ մի բան հազիւ է կարդում, էն էլ վայ մեզ, կէսը սուտ,—կրկնում էին զիւղացիները,—մենք մեր տունը քանիցեցինք, տեղն է մեզ, տեղը»: Վերջապէս զիւղացիների համբերութեան բաժակը լցուեց. նորա բողոքի զիմեցին. բայց երբ է մեր հոգեոր հայրերի մօտը թշուառ, ճնշուած, ժողովրդի արդարացի բողոքի ձայնը լսելի եղել. եթէ եղել է, զա պէտք է բացառիկ զէպքերի վերագրել, կամ մի որեէ խնամէութեան: Իրար յաշորդող այդ վարդապետներից և ոչ մէկը չէր ցանկանում ձեռք տալ, դիպշել Տէր-Մաթալին. իսկ սաւելի ևս սկսեց երես առնել և իր աղտեղի գործերը երեան հանել. էլ ինչեր ասես չէր անում. արբեցողութիւն, ժողովրդի հետ կոխներ, վէճեր, անրարուական ճանապարհից հեռու չը կենալ, 30—40 % ։ ով փող պարտ տալ. սուտ վկայութիւններ տալ, սուտ երդուել՝ սովորական բաներ էին նրա համար:

Մի անգամ էլ հարբած ժամանակ տուեց և զիւղի պատուաւար, իրան հովանաւորող իշխանի՝ Մահտեսի Մինասի զլուխը ջարդ ու փշուը արեց. բայց ինքն էլ շարաշար տուժեց, որովհետև Մահտեսու որդիները չը կարողացան մարսել իրանց հօր հասցը-

րած վիրաւորանքը և մի զիշեր, երբ նա վերադառնում էր մի հարսնքատնից, նրա առաջը կտրելով, լաւ քեօթակ տալուց և ֆարազան ծւիկ-ծւիկ անելուց յետոյ, զլուխն էլ կոտրեցին: Նման դէպքերի առիթով բողոք-բողոքի յետեկց թաշում էր մեր հոգեոր Ատեանները. սակայն միշտ էլ ձայն բարբառոյ յանապատի էր մնում: Վերջապէս, թշուառ ժողովը-դի կատաղութիւնը իր գագաթնակէտին հասաւ և նա սկսեց սպառնալիքների զիմել, որ Տէր-Մաթալը իր պատուով հեռանայ իրանց միշից. Բայց միթէ այդ կարելի բան էր. չէ որ հասարակ ժողովուրդը միայն շորս բառով է բնորոշում մեր տէրտէրների ընշասիրութիւնը, աշքածակութիւն՝ «սար ու ձոր-տէրտէրի փոր»: Ուստի կարելի բան էր որ Տէր-Մաթալը թաղնէր ու հնուանաբ:

Երբ սպառնալիքները չը զգաստացըին, ուշքի ը բերեցին Տէր-Մաթալին, ժողովուրդը սկսեց գործազրել նոցա. զիւղացիներից մէկը, որը իր շափազանց պարզութեան համար զիժ Մնօ էր անուանում, մի զիշեր մտաւ նրա ախտուը և նրա ձիու պոշը մաքուր խուզեց, թողնելով այնտեղ մի անօնիմ նամակ՝ որ եթէ ինքը, Տէր-Մաթալը, շուտ չը հեռանայ, իր մօրուքն էլ քնած ժամանակը ձիու մըկ-րատին զոհ պիտի զնայ:

Այս բանը զիւղացը մեր տէրտէրին. նա մի թուրք հաստավիկ ծառայ վարձեց այն պայմանով, որ իր քնած ժամանակ ինքը՝ ծառան չը քնէ, այլ հսկէ իրան: ծառան աւելի ուրախ էր, որովհետև մի դժուար գործ չ'ունէր անելու՝ չուր բերել, ձիան տակ

մաքրել, արթուն մնալ և հսկել տէրտէրին, արթուն ժամանակ՝ ապա քնել. ահա այս էր նրա արածը: Ուրախ էր ծառան՝ Աբասը, որ ինքը նուրարի պէս կնոջ էր ծառայում: Ո՞վ չէր ցանկանալ նուրարի մօտ ապրել. իսկ թուբք հաստավիզ ծառան աւելի ես:

2ը գիտեմ ինչպէս եղաւ, որ մեր հոգիոր ատեաններից մէկը Տէր-Մաթալի վրա տուած մի բողոքը վերադարձեց տեղական յաջորդ վարդապետին քըննելու. Կանչուեցին Տէր-Մաթալը և բողոքատուն՝ Դիժ Մնօն:

—Աստուած օրհնէ քեզ, Մնօ բիձա, ինչ զանգատ ես տուել մեր տէրտէրի վրա. ինչ զործ ունես նրանից, դէհ, տէրտէր ես ուզում, տէրտէրը էղպէս կը լինի, էլի,—ծանր ու բարակ սկսեց իր հարցերը յաջորդը:

—Հայր-սուրբ, ինչու էր Աստուած ուրանում,—ասաց Դիժ Մնօն,—սա միթէ տէրտէր է որ փաթաթել էր մեր վզներին. սև զառնար էն օրը, որ մենք էդ զլսամեռին տէրտէր արինք:

Հայր-սուրբի դէմքի վրա մի թեթև ժպիտ անցաւ, սակայն նա շուտ իրան զսպեց և շարունակեց:

—Օրհնած, Մնօ, բա քեզ «գիծ» են ասում: բայց հաւատա, որ շատ խելօր ես, ուրեմն մի քիչ քաղաքավարի խօսէ, ինչ ես տէրտէրին զլսամեռ շինում:

—Բա ինչ անեմ. դրա ձեռքը ընկայ, որ «գիծ» դառայ, խալխի աշքին-զլսամեռ եմ ասում: Բայի շուտ ոչ ու փուչ ընի, մեռնի, որ մեր հոգին ու մարմինն դրա՝ էդ անխելքի ձեռքից ազատուին. դրժող-

քական ենք գարձել. Էլ ինչ հաւատ մնաց, ինչ կրօն մնաց. մեռեներս, համարեա, տասն օրով ժամն են մնում. մի օր հարբած է լինում. մի օր պաս է՝ պատարագ չի անում. մի օր էստեղ է. մի օր՝ էնտեղ է. մի օր պատրաստ չէ. որը ասեմ, կարդացածն էլ վայ մեզ, հազար սուա ու սխալ ունի, ել էն մեռելի տեղը որտեղ պիտի լինի:

—Սուտ է խօսալի, հայր սուրբ, — վընթվընթաց քթի տակին Տէր-Մաթալը, որը ցցուած արձանի նման կանգնել էր և հայր սուրբի աշքերին էր նայում ու կարծես աշքերով բան էր ուզում ասել նրան:

—Ստի հէրն.... զոռաց Մնօն,— անհոգի, ասենք, էս մեռել է.—(այս ասելով նա ձեռքի մորթէ գտակը ըրմացրեց յատակին).— դէհ, թաղիր տեսնենք, դէհ....

— Սուտ, ցիմար, հանգստացիր, թէ չէ դուրս անել կը տամ. ինչ ես հայհոյանքի գիմում, զնի ինձանից ամաշիլ, — մէջ ընկաւ հայր-սուրբը, — տէրտէր, դէհ, թաղման կարգը մի քիչ տոս, որ էկ անզզամը հանգստանայ:

— Եերան չեմ գինալի, հայր սուրբ:

— Գեռ էս քսան տարի է, տէրտէրութիւն է անում, — նկատեց Մնօն, — լաւ, գրքով թող ասէ, հայր սուրբ:

— Առ մաշտոցը, տէր-տէր. — մեկնելով նրան մաշտոցը, հրամայեց հայր-սուրբ: Տէր-Մաթալն առաւ գիրքը, դէս շուտ տուեց, դէս շուտ տուեց և, դնելով սեղանի վրայ, ասաց:

— Սա, գեօ մեր մաշտոցի թըարը չի. զօտի

դըար կեարգալը՝ աշքերս չեն տեսնալի:

Հայր-սուրբը մնաց զարմացած:

— Տեսար, հայր-սուրբ, հօր տան ասեղ է ուզում,
հեզնեց Մհօն ուրախացած,—տό, հայր-սուրբ ջան,
մեր տիրացուները որ չը լինեն՝ դրա բանը բուրդ
է, — այս տոելով գետնից վերցրեց իր գտակը:

— Լաւ, գնացէք, ես կը զբեմ տեղը տեսածս, — հրա-
մայեց հայր-սուրբը. երկուսն էլ զլուխ տուին ու հե-
ռացան. բայց սրահից տէրտէրը վերադարձաւ՝ նա
իր գտակը մոռացել էր դահճճում. սա և հայր-սուր-
բը նայեցին իրար երեսին... տէրտէրը մօտեցաւ սե-
ղանին... շարժուեցին նրա ֆարաջի երկար ու լայն
թերթը, և մի ծրար մնաց սեղանի վրա: Ծրարի վրա
մի կերպ խզբղած էր «47» ըուբլի:

Ժողովրդի փայրագ սպառնալիքները մինչ այն
աստիճան սուր կերպարանք ստացան, որ նոքա, մո-
ռանալով դարերով սրբազործուած հաւտար դէպի
եկեղեցին ու նրա ամոթները, վճռեցին սկիճու մէջ՝
պատարագից առաջ՝ թան ածել. բայց դարձեալ ան-
տարբեր մնաց հոգեոր թէ բարձր և թէ մեշատոր
իշխանութիւնը: Սոցա ինչ փոյթ. չէ որ Տէր-Մաթա-
լի ծրարները ամեն բան դրստում էին. չէ որ Սրբա-
գան կար:

Ե... զիւղը ամբողջապէս, համարեա, ոտքի կան-
գնեց: Նա խնդրում էր հոգեոր իշխանութիւնից զա-
գարեցնել Տէր-Մաթալին քահանայագործութիւնից,
որին՝ իբրև ապրուստ՝ խոստանում էր տալ տարե-
կան մօտաւորապէս 300 ըուբլի և առաջարկում էր
քահանայացներու իր փակուած դպրոցի ուսուցչին,

որը մի կըթուած և բարեմիտ մարդ էր: Երկար ժո-
ղովրդի այս խնդիրը պիտի ձգձգուէր, եթէ չը գար
նոր յաջորդ. վարդապետներից մէկը, որը՝ արհամա-
րելով թէ սրբազանի եսը և թէ՝ Տէր-Մաթալի ծրար-
ները՝ լսեց թշուառ ժողովրդի խնդիրը, քահանայ
դարձնելով առաջարկած ուսուցչին և դադարեցնելով
Տէր-Մաթալին քահանայագործութիւնից, տալով նը-
րան խոստացած ապրուատի միջոցը: Սա այժմ ա-
պահովուած էր, սրովհետեւ «բիճ վիրապը», աւարտե-
լով համ Լ. ճեմարանը, համ Մ. համալսարանի բը-
ժըշկական մասը, ամուսնացել էր մի հարուստ աղջկայ
վրա և 500 հազար ըուբլի օժիտ էր ստացել վրան,
որի 90% հերթից իշխանչիւր ամիս հօրը ուղար-
կում էր 50-ական ըուբլի:

Սուտ չեն ասել, որ բօշան փաշայ չի դառնայ.
Հարստանալով հարսի օժիտով՝ Տէր-Մաթալը և նու-
բարը չը փոխեցին իրանց վարք ու բարքը. նուբա-
րը միշտ մնաց վեներային երկըպազու, իսկ Տէր-Մա-
թալը՝ նոյն եսառու և խաչազողը:

Ահա թէ ումը տեսաք զուք, ընթերցող, սուբր
Յովհաննէսի ուխտի օրը մատուսի մէջ. սրա քահա-
զործութիւնից զադարեցնելը տեղի ունեցաւ մեր
պատմութիւնից մօտաւորապէս մի ամիս տաաց:

Մեծ պասի երեկոներից մէկն էր. Ե... զիւղի
ժողովուրդը զուբս էր եկել եկեղեցուց և ցըւում էր
իր տները:

Դուրս եկաւ և քահանան, Տէր-Մաթալը, իր ժամ-
հար Օհանի հետ, և սոքա երկուսով ուղղեցին իրանց
քայլերը Սեփանենց Գէվօյի տունը. Գէվօն հիւանդ

էր, կանչել էր հաղորդուելու:

Տէր-Մաթալը և Օհանը մտան մի մեծ խղճի՛ջ,
ուր թոնրի կողքին պարկած էր հիւանդ Գէվօն:

— Ողջոյն, Գէվօ աղպէր. ինչ կայ. ինչի ես պարկել. արար աշխարհ ուրախանալի՝ թէ զեարուն եկալի, համա դռւ վախտ ես գտել նասազ ըլնելու:

— Մեռնում եմ, տէր-հայր, սրբութիւն տուր ինձ,
տնքալով պատասխանեց Գէվօն:

— Ես մեռանելի, չես, կը լաւանաս: Սրբութիւնը
թեթեսութիւն է. դէ՞հ, որ ուզում ես՝ կը տամ,—
վլա լիրից Տէր-Մաթալը և սկսեց հաղորդութեան
ազօթքներ փնթփնթալ քթի մէջ, որից յետոյ հաղոր-
դեց նրան և ապա իր ձեռքերը լուսաց ու հրամացաց
ջուրը թռնրի ակը ածել, կամ մոռւրի մէջ:

Գէվօ, քեզ էլ քեօ քիւրքն է հիւանդացնում. ախք
մենք ուր, շուրա-մուրա ուր, վրաս տեսար թէ չէ,
մէ բաշ գնացիր քեզ էլ առեցիր, ըսկի սհաս, օգուտ
հարցուցիր ո՛չ. ես խօմ իմին վոզ շեմ տուել, վիրա-
պրս է ճամբել, էնքան հասաի, որ ձեռաց քրտնցնելի
ինձ և ամեն օր նասազ անելի. ես գիտեմ, իմ մահն
էլ էզ անտէրի շուբից կը գայ: Տօ ուր են ձեր տա-
նեցիքը, ձեր խալխը:

Մօտ եկաւ Գէվօյի կին՝ զողերը, որը մինչև այդ
ժամանակ սահ մօտին նստել էր և տէրտէրի աջը
առաւ. նրա յետելից եկաւ Սօնան:

— Սրբէյի աղջիկ, մարզիկ մի լաւ պտի լուզու-
ցես և տաք պահես՝ լաւ կը լինի:

— Փառաւոր մնաս, հայր ջան:

— Գէվօ, սաածս կատարա, կը լաւանաս. քեզ

բան չի պատահելի. զեռ Սօնային միասին կը նշա-
նենք, քէֆ, ուրախութիւն կ'անենք. դէ՞հ, Աստուած
իսանին է ցաւ, չոռ տալի, ոչ թէ սարին-ձորին:

— Տէր-տէր, աշքդ լոյս. Վիրապը, լսել ենք, որ
պտակուել է, — ասաց Գէվօյի կինը, զողերը:

— Աշքով լուսով կենաս, Սրբէյի աղջիկ, Փոխը
ձեր Սօնային ընի: Սրբէյի աղջիկ, Գէվօ աղպէր, մէ-
րոլ էլ փող է առել հարսիս վրան: Այ, տղէն էկ-
պէս կը լինի, ոչ թէ Ալաշկերտցոնց Դաւթի տղայ
երօյի պէս, որը էս քանի տարի զեօ զնացելի, համա-
ձէն ու ձու չը կայ. ասեսցեն որ ամառները չի դեալի,
երթալի Օսմանլի հող ու էն աեղի հայերին զրել,
կեարդալի ուսուցելի:

— Նրան մեղ չը կայ, տէր-տէր, — տընքտընքաց
Գէվօն, — Գէլ Յօվոյենց Յարութը նրան ճամբից
հանեց:

— Սօնա, համա քեօ լաւ ընկերն էր, հա. հէյ
զիտի ժամանակ. մէ վախտ էլ ասեսցէն թէ՝ աշք
ունի քեօ վրա. համա քտնի ես սազ եմ, քեզ շան,
զիլի բաժին կ'անեմ, նրան ո՛չ, — ասաց տէրտէրը:
Ասեսցէն կաղէթին բաների զրելի և ինձ խայտառա-
կելի, ժողովրդին էլ ուսուցելի էնտեղէն, որ գանգատ
տան վրաս, լաւ:

Սօնան ցնցուեց, նրա ամբողջ մարմնով մի սար-
ուու անցաւ. թշերը վարդի զոյն ստացան, կարմրե-
ցին, և նա լուռ մնաց ու, զլուխը կախ զցելով,
աննկատելի կերպով դուրս թռաւ տանից:

— Զէ, Գէվօ, լաւացի, լաւացի, ես մի լաւ վի-

սացու կը ճարեմ Սօնայի համար. հասել է.—տսաց տէրտէրը:

Լորի, մախօխ ուտելուց և մի լաւ կոնծելուց յիտոյ՝ դուքս զնաց Տէր-Մաթալը իր ժամհար Օհանի հետ:

Գէվօն հետգհետէ լաւ զգաց իրան և Զատկից մի երկու շաբաթ յիտոյ լաւ առողջացաւ:

VII.

Օգոստոսի վերջերն էր. կէս օրուայ շոքը սկսել էր հետգհետէ կոտրուել, մեզմանալ, որին շատ նըպաստում էր Մասիսից փչող մնջիկ զեփիւռը՝ որը, հանդարտ շուալով, լսիում էր երեսիդ, ասես սիրալիր մօր պէս փայփայում էր քեզ և աշխատում մոռացնել տալ քեզ այրող շոքից կրածդ նեղութիւնը: Ուրախ ժագուռմ էր ալեոր Մասիսը, բարձրացնելով իր գլուխը մինչեւ կալոյտ երկնակամարի կէսը. նա՝ ցցուած հսկայի պէս, որը՝ տեսնելով իր ախոյեանին, շնչում է ամբողջ կրծքով և ապա կատաղի փրփուր բերանին՝ վրա յարձակում ջարդ ու փշուր անելու նրան, նայում էր վերեկից իր շրջակացը և ամեն տեղ փշում, ցըւում իր բարկութեան զարոյթի ալիքները, քամիները, որոնք անցնում էին հեռու, շատ հեռու, սարսուռ, հով տարածում ամեն մի թմրած անկիւն, ամեն մի խաւարապատ խոռոշ, ամեն տեղ ուաքի կանգնացնելով թմրած, թուլացած կեանքը, որը ասես մեռել, անհետացել էր այրող շոքի սպառնալիքներից:

Ոչ մի ձայն-ձպուն չէր լսում. թոշունները փաղուց փախել, և ով զիտէ՝ որ ծակն էին ապա-

տան զտել. երկրագործն վազուց զաղարել էր աշխատելուց և ով զիտէ, որ ծառի, թփի հովի տակին էր պարկած և ծանր խըռմբացնում, նա երագների աշխարհում էր զտնում, ուր ոչ շոքն էր նրան ձենձերում և ոչ արել նրա երեսը այրում: Երազներ.... որքան շուտ էր դուք մոռացնել տալիս թշուառ երկագործին իր կրած չարքաշ կեանքը. մրգան վառ յոյսերով էր պսակում դուք նրա կրած տանջանքները և որքան արագ-արագ փոփոխութեան էր ենթարկում դուք նրա հոգեկան աշխարհը: Քանի քանի դարեր են սահել, անցել երկրագնդիս երեսից, ամեն տեղ թողնելով իրանց՝ ժամանակի ջախջախիչ հետքերը, որոնք յեղափոխութեան կնիքն են դրել ամեն տեղ, ամեն արարածի ճակատին. բայց այսօր, դարձեալ, թշուառ երկրագործը իր մտաւոր էութեամբ գեռ երազների երկրագուռ է մնացել: Քանի դարեր են գլորուել յաւիտենականութեան գիրկը, լայն բաց անելով ազգերի, մարդկանց աչքերը, որոնք այսօր գիտութեան ովկիանոսի մէջ՝ գեռ ծարաւ են զզում և ջանքեր են գործ դնում աւելի ևս առաջ խաղալ այդ ովկիանոսով. իսկ խեղճուկ երկրագործը այժմ գեռ երազներով է գուշակում իր բաղդը, իր ճակատագիրը: Այդ ժամին կինդաններ չէին երեւում Մասիսի շրջակալքում. նոքա փախել և Արաքսի գիրկն էին ընկել՝ մինչեւ վիզը մտել և ծածկուել էին նրա վճիտ ջրով. ոմանք նրա ափերին պարկած՝ ծանը փնչում էին, մերթ-մերթ շաբժելով իրանց զլուխը, կամ պոչը՝ իրանց արիւն ծծող ճանձերին, մոծակ-ներին հեռացնելու համար:

Արաքսն էր մենակ չը քնած, նա հանդարտ շարժում էր և երեմն հազիւ լոելի ձայնով շըրմբացնում իր ափերին և կարծիս, վերջին հրաժեշտի, մնաս բարեի ողջոյնը մըմնջում նոցա ու առաջ ընթանում: Նրա մակերևոյթի վրա երամերամ, բազմաթիւ միջատները, որոնք, կարծես, խմբուել էին նրա ճանապարհը կարելու՝ իրանց վըզվըզոցով, բըզզոցով խացնում էին մարդու ականջները, իսկ նա շատերին, աւելի յանդուդներին, իր բերանը քաշում, ծամում, ծամծմում և ապա էլի շօրօրում դէպի առաջ:

Օրուայ այդ պահուն ի... գիւղի ճանապարհով անցնում էին մի խումբ մարդիկ, որոնց զզեստներից նեռուից պարզ կարելի էր զուշակիւ, որ Տաճկատանցի հայեր են, որոնք սահմանը անցնելով, գալիս էին ի... գիւղը: Բոլորն, համարեա, ջահիլ երիտասարդներ էին, որը պարզ երեսում էր նոցա նորածիլ ընչացքներից, մօրուսից. նոցա կարճիկ ալպաների տակից հազիւ երեսում էին փոքրիկ զաշոյների պատեանների ծայրերը. իսկ իւրաքանչիւրի գրպանում պատրաստի կար մի-մի զոյդ նոյնպէս փոքրիկ ատունանակներ իրանց փամփուշտներով. խուրջինները, որոնք նոքա կրում էին ուսերի վրա, կիսով շափ լիքն էին գըքերով, թղթերով և իրանց ճանապարհի պաշարով: Տեսնողները անշուշտ, կը կարծէին, որ նոքա մշեցի, վանեցի պանդուխտներ են, որոնք խումբ խումբ հեռանում են իրանց հայրենի հողից իրանց սահմանակից երկիրները, վարելով բանւորի շարքաշ կեանք, որով և մի քանի կոպէկ փող են վաստակում իրանց տան ծախսերը հոգալու և ապրելու համար.

Սակայն մի բան պարզ աշքի էր ընկնաւմ, որ գործ բոլորն էլ տակից ունէին մաքուր զգեստներ, շապիկներ, գլուխների մազերը աւելի քան մաքուր էին և սանցած էին խնամքով. մի խօսքով, մշեցուն յատուկ անփոյթ կեանք, կեղտութեւն չէր նշմարւում նոցա վրա: Նոքա բոլորն էլ յոգնած էին և շտապում էին շուտ հասնելու ի... գիւղի գաշտամիջի աղբիւրը, որը իր սառն ու մաքուր չըով վաղուց յայտնի էր նոցա և որը շատ անդամ էր յագեցրել դոցա ծարաւը:

Վերջապէս, նոքա հասան աղբիւրին, լուացին ձեռքերը, երեսները, ոտքեր՝ տպա, բաց անելով իրանց հացի պաշարները, որը բազկացած էր թազայ պանրից, սոխից, խորոված մսից ու հացից, սկսեցին մի ապշեցուցիչ ախորդակով անուշ անել:

— Լաւ հասանք, տղերք, հա՛. ես ատում էի, որ տմեն տարուայ պէս այս տարի երեք օրում չենք կարող հասնել այսաեղ, որովհետեւ այս տարի շոք է, որը շատ էր խանգարում մեր արագ շարժուելուն. բայց զուք չեր ուզում լսել ինձ՝ այ, ում խօսքը եղաւ, ում ատածը կատարուեց:

Քո՛, քո՛, երօ,—ձայն տուեցին մնացածները,— ինչ մի լու յաղթանակ տարար. կարծես թէ Ռւսո-բէկի ասկեարին յաղթած լինես, այնպէս ես ուրախացել:

— Համբերութիւն, համբերութիւն ունեցէք. Ուսո բէկը իրայիններով մի վիշապ չէ, որին չը կարողանանք մօտ գնալ. նոքա էլ մեկ նման մարդիկ են. զեռ մեղանից տեկի տոտր իրանց հասկացողութեամբ:

Շատ Ռւսօ թէկեր կ'անհետանան, կը կորչին, եթէ մենք շարունակենք իւրաքանչիւր տարի մեր թշուառ ազգայինների աշքերը բաց անել: Այս վեց տարուայ ընթացքում, երդուում եմ, իւրաքանչիւր տարի 50-60 մարդիկ են գրագիտութիւն սովորել ինձանից և ասպա հետեւալ տարիների ընթացքում շարունակել կատարելազործել իրանց գիտցածը: Հաւատացած եմ, որ ձեզանից իւրաքանչիւրը նոյնպէս, եթէ ոչ աւել, գոնէ ոչ պակաս մարդկանց պատրաստած կը լինի գրագիտութեան մէջ:

— Այդ՝ այդպէս է. սակայն չը գիտես, որ մի ծաղկով գարուն չի լինի, — ընդհատեցին երօյին նրա ընկերները, — բայց այսօր քանի մեզ նմաններ կան, որ անշեղ ընթանան մեր բոհած ուղիով. չէ որ այսօր, փաղը, եթէ մեզ հետեւզներ չը լինեն, մեր ցանած սերմերը կամաց-կամաց պիտի չորանան, որից յետոյ Ռւսօ թէկերը դարձեալ պիտի յաղթանակեն:

— Եթէ մեր երկրում հայ ազգը իր դպրոցներով, իր երիտասարդ ոյժերով այդշափ ստեղծանայ, չէզոքանայ, ինչպէս կարծում էք դուք, այն ժամանակ մեր ցանած սերմերը իրանք կ'աճեն և կը բեղմաւուրուեն իրանց հողի վրա. չէ որ օրինակը վարակիշ է: Արդէն վեց տարի է, ինչ ամառուայ արձակուրդներին մենք աշխատել ենք նոցա մէջ. միթէ կարծում էք՝ այդքանը տռանց հետեւանքի կ'անցնի. այդքան ժամանակուայ ընթացքում, համարեա, մեր չափ պատրաստած ոյժեր կան այդ երկրի գրկում:

— Է՞ն, դու՝ նման հարցերում միշտ ենթադրութիւնների վրա ես հիմուում քո դատողութիւնները և

առաջ կտրուկ կերպով եղբակացութեան պալիս. բայց իրօք այդպէս է, — վրաբերեցին ընկերները:

— Որ այդպէս միասին հակառակելու էք ինձ, ուրեմն ես աւելորդ եմ համարում խօսելու այդ մասին, թողնենք, որ ժամանակը՝ իբրև մայր ամենայն ինչի, վճռէ մեր հարցերը, — նկատեց երօն:

— Սակայն ինչ էլ որ լինի, մեր վերջի տարին է՝ մենք բոլորս կ'տւարտենք մեր ուսման ընթացքը և այնուհետեւ, ովք զիտէ, ուր ենք լինելու. որից յետոյ էլի «ջուրը իր ճամբան կը գտնի», էլի իրերը իրանց սովորական գերերի մէջ կը մտնեն. բայց և այնպէս, մենք այս քանի տարուայ ընթացքում լաւ ծանօթացանք համարեայ ամեն ինչի հետ, ուստի պէտք է աշխատենք, կարելոյն չափ, օգտուել մեր ծանօթութիւնից մեր ուսումնասիրութիւնից, — ասաց երօյի մօտին նստած մի ընկեր, որը ամենից քիչ էր խառնուում դոցա խօսակցութիւններին:

— Անպայման, — կը կնեցին մնացածները:

— Այ թէ մեր դպրոցի վարչութիւնը կ'իմանայ մեր ճանապարհորդութիւնների մասին, այն ժամանակ վայը եկած տարած կը լինի մեզ՝ լաւ աւարտման վկայականներ կը ստանանք, — նկատեց մի ուրիշը:

— Թոնք իմանայ, ինչ մի վատ բան ենք արել, ճանապարհորդութիւններ, ուսումնասիրութիւններ, ծանօթութիւններ՝ անհրաժեշտ են ուսանողի համար. իսկ անզրագէտ թշուառներին գրագիտութիւն սովորեցնելը, կարծեմ, մի մեծ առաքինի զործ է. բայնչի համար են հիմուուած մեզանում այդքան դըպ-

ըոցներ, չէ որ նպատակը միևնույն է, - ասաց էր սպորտան ձայնով երօն:

— Ճիշտ է. բայց այն էլ կայ, ինչպէս նկատում
ժողովրդական առածր թէ՝ ձուկ բոնողը պիտի թըր-
ջուի, — պատասխանեց Երօլի մօտի սակաւախօսը, —
Եթօ, էյ, կարծեմ այժմ սիրտդ թուժում է. մեաց
մի տարի, որ աւարտես և այնուհետև Սօնայիդ ար-
քանաբնաս. բա շատ մեծ համբելութիւն ունիս. մի-
թէ կարելի բան է վեց տարի սիրածին շը տեսնել.
Ասուած ացողէ՝ խաշաղբէրը ևս եմ լինելու:

— Անպատճառ, անպատճառ. միթէ առանց մեզ
հարսանիք կ'անէ, ձայն տուեցին ընկերները:

Երօն քիչ էր մնացել տեղից վեր թռչել Սօնայի
անունը լսելիս. ընկերների խօսքերը մի վայրկեան
ուրախութեան ժպիտ բերեցին նրա հրեսին. բայց
շուտով նա անցաւ, տեղի տալով մի արտասովոր
տիրութեան, որը առաջ է դալիս ապագայի անորու-
շութեան և պայմանների անձեռնահասութեան առի-
թով և կըծում է մարդու սիրտը. Սակայն նա շուտ
զբաց այդ և պատասխանեց ընկերներին:

—Առանց ձեզ ոչ մի բան չի լինելու. ձեզ հետ
միասին կը սկսուի հարսանիքս, եթէ այդ վիճակուած
է ինձ և Սօնային և ձեզ հետ էլ կը վերջանայ: Եթօն-
լոեց. տիտրութիւնը հետզհետէ այնքան սաստկացաւ
նրա մէջ, որ նա շուռ եկաւ ընկերներից, գետնի վրա
պարկեց և՝ յառելով հայեացքը ուղիղ դէպի ազգիւ-
րից վազով ջուրը, մնաց անշարժ. շարունակելով
նայել ազգիւրի ջրին, նա լիշեց Յարութի այդ վեց
տարուայ ընթացքում իրան զրած նամակները, նո-

յա միջի կատածելի նախադասութիւնները, Տէր-Մաթալի այցելութիւնները Գէփօյին, նրա ակնարկները, սպառնալիքները և մի ժամը հոգոց քաշեց: Այդ բովելին նա տեսնում էր թէ՝ ինչպէս տղբիւրի զուրը, բըխկալով, վիժում է գետնի խորքից, դուրս նետելով իր հետ աւազի, հողի փոքրիկ կտորներ և իրան համար ճանապարհ բաց անում. ապա տեսնում էր թէ՝ ինչպէս այդ աւազիկները շրջան են կազմում ջրի մէջ և նորից հետզհետէ աղբիւրի յատակին նպառմ, սպառնալով ծածկել, վակել նրա աշքերը: Որին է, արդեօք, վիճակուած յաղթանակը՝ ջրին, թէ այս աւազիկներին, մտածեց նա. յետոյ ինքն իրան վը- ճանեց այդ հարցը՝ զոյութեան կռւում ով դիմացկուն է, ուժեղ է, յաղթանակը նրան է: Յիշեց Սօնային, իրանց մտնկութեան որերը, հասկացաւ թէ որպիսի զոյութեան կոխւ է բացուած իր առաջ. յիշեց, որ այդ կռւում ձգտում են յաղթանակ տանելու, ոչ թէ մի ուրիշին կեանքից զըկելու, այլ որ՝ այդ կեանքը յարելով միւսի հետ, ստեղծել մի ուրիշ, աւելի վեհ կեանք, որից կախուած է արարածների աճեցողու- թեան ոյժը: Բայց ինչ անել այն գէպքում, երբ այդ կոփութ տեղի ունենայ գարշ, մթին ճանապարհով, որից իւրաքանչիւր ազնիւ անհատը աշխատում է խոյս տալ, հեռու մնալ. ինչ անել երբ Տէր-Մաթալը խել- քահան անի Գէփօյին, որից յետոյ Սօնայի ձեռքը ստանալ պատուաւոր ճանապարհով լնկ միշտ կորած կը լինի իր համար: Նա նորից ախ քաշեց. շուռ ե- կաւ քամակի վրա սպարկեց և լուռ կերպով դիտել սկսեց կապոյտ եթերը. սակայն տխուր յիշողութիւն-

ները, դառն ենթադրութիւնների հետ՝ ճնշում, կրծում
էին նրա սիրալը. նա նոր էր հասկացել, որ զուտ,
մաքուր, անկեղծ սէրը թանգ է, քան չոր ու ցամաք
կեանքը, որը առանց սիրոյ զզացմունքի կազմում է;
լոկ դատարկութիւն: Վերջապէս նա հասկացաւ թէ՝
թանկադին գանձ ունի պահուած իր սրտում, որից
զրկուելը՝ կը նշանակէր զըկուել և իր կեանքից:

Պարզ է ձեզ համար, ընթերցող, որ մշեցու տա-
րագով ի... զիւղ զիմողները, ձեզ վաղածանօթ երօն
էր իր ընկերներով, որոնց հետ նա ամառուայ զըմ-
րոցական յարձակուրդներին անցնում էր Թիւրքիա,
ուսումնասիրութիւններ կատարում, գրագիտութիւն
սովորեցնում թշուառ թբքահային և ապա ուսումնա-
կան տարուայ սկզբին նոցա հետ վերագառնում ե...
քաղաքը, ուր շարունակում էր իր կրթութիւնը, որի
դասընթացքը պիտի աւարտէր այդ տարի:

Արեւ շտապում էր մայը մտնելու, երբ երօն իր
ընկերներով մտաւ ի... զիւղը և նոցա հետ զնաց
իրանց ծանօթ թափոս բիձի տունը. այսուղ նոքա,
ինչպէս միշտ, այս անդամն էլ գտան սիրալիր ընդու-
լութիւն. զիշերը հանգստացան, ապա առաւօտը հագ-
նելով իրանց ուսանողական զգեստները, որոնց միշտ
պահ էին տալիս թաթոս բիձին, և թողնելով նրա
մօտ մշեցու իրանց հազի զգեստները, գուրս եկան
դէպի ե. քաղաքը:

Աշուն էր. Ե... քաղաքի բաղմաթիւ բնակիչների
վրա աւելացել էր և ուսանողների թիւը: Քաղաքը
սկսել էր օրէցօր կենդանութիւն ստանալ. այս ու
այն ամառանոց զնացողները թարմացած վերադար-
ձել էին. ուսանողներն էլ ամառնային ամիսներին
հանգստացած՝ եռանդով կպել էին իրանց գործին.
որն աշխատում էր զովելի կերպով, ընծաներով միւս
զասարանը փոխել. որն աւարտելու էր. և ոչինչ չէր
խնայում լաւ վկայական ստանալու. մի խօսքով,
ամեն մի մարդ ջանքեր էր զործ դնում իր զործը
կարելոյն շափ լաւ առաջ տանելու:

Այսպիսիներից էր և երօն. նա շատ սակաւ էր
շրջում այս ու այն զուարճութեան տեղեր, այլ ճա-
շերից յետոյ մի փոքր հանգստանում, ապա զարձեալ
իր զործն էր ձեռք առնում: նա գիտէր, որ իր վերջի
տարին է, որից յետոյ ընդմիշտ պիտի հրաժեշտ
տայ ուսանողական աղմկալի, կեանքին. նա աւելի
ևս ձգտում էր, ինչպէս միշտ, այդ աարի էլ առա-
ջադէմ ուսանողների շարքում լինել, որ ապա լաւ
վկայական ստանալ և արժանանայ իր Սօնային. ինչ-
պէս ուրիշ սիրահարներ, այնպէս՝ նա էլ ցանկանում
էր միշտ և ամեն կերպով լաւ երեալ իր Սօնայի աշ-
քին. ոչ պակաս եռանդ, ովկորութիւն չէր տալիս
նրան և Սօնայի անունը: նա նրա հետ էր ամեն մի
տեղ և ամեն մի քայլափոխում. ամեն մի զործ կա-
տարելիս, նրան թւում էր, որ նա Սօնայի համար է
անում, նրան հանելի գառնալու համար է շարչար-

ւում: Երեկոները մի փոքր թէյ խմելուց յևաոյ՝ նոտ մի ժամով գուրս էր զալիս զբօսնելու և ապա տուն վերադառնում իր հետեւեալ օրուայ դասերը պատրաստելու:

Տունը մի փոքրիկ սենեակ էր. մի ցածրիկ լուսամուտով, որը զիշեր-ցերեկ բաց էր լինում և աշնանային ցուրտ ամիսներին էլ: Սենեակի մէջ՝ սեղանի վրա և յատակին, մահճակալի տակին, դարսուած էին զանազան բովանդակութեամբ զրքեր և տետրակիներ:

Նրա սենեակից ոչ հեռու, միենոյն բակում, ապրում էր նրա տանտէրը տիկինը, մի միջահասակ կին, որի մօտ և ճաշում էր նա:

Երեկոյեան ժամի 7-էր. Երօն նոր էր վերադարձել զբօսնելուց և իր զասերն էր պատրաստում, երբ նրա սենեակը մտաւ նրա տանտիկինը:

—Բարի երեկոյ, Երուանդ Գաւիզովիշ, ինչ եռանդով գործի էր կպել. ահա ձեզ նամակ. ցըշը րերեց. դուք տանը չէիք, ինձ տուեց ձեզ յանձնելու. — այս ասելով, նա մեկնեց նրան մի ներփակեալ ծրաբ:

—Բարի երեկոյ, Աննա Նիկոլաեվինա. շատ շնորհակալ եմ ձեր կրած նեղութեան համար, — պատասխանեց նրան Երօն ուրախ ժպիաը երեսին, — նամակի կիրքներից երեսում է, որ իմ հայրենիքիցն է. տեսնենք ինչ կայ:

— ինչ էլ որ լինի հայրենիքի նամակները մի առանձին հետաքրքրութեամբ են սպասում և ընդունում, չը նայած Երբեմն իրանց բովանդակութեամբ չեն համապատասխանում ընունելութեանը՝

կուժիչ տպաւի գեր են խաղում:

— Զատ ճիշտ է ձեր նկատողութիւնը, բա, ինչու չէք նստում, Աննա Նիկոլաեվինա:

— Ճնորհակալ եմ, գնում եմ. զործ ունիմ, — պատասխանեց նա և ցտեսութիւն ասելով Երօլին, դուքս զնաց:

Երօն բաց արեց նամակը և կարդաց մի քանի անգամ. Սօնան էր զրել. ահա թէ ինչ էր նա զըսւմ:

«Սիրելի Երօ չան»,

«Սիրով և կարօտալի բարես քեզ. նոյնը կրկնում «է քեզ և իմ ընկերուհի՝ Արծուիկը, որին ես պատմել եմ ամեն ինչ. Ես, փառք Ամենաբարի Բնութեան, ողջ եմ և առողջ, նոյն ցանկանում եմ և քեզ «կարօտ քաշելով, ստացայ Յարութի միջոցով ողալս «կած է քորոցը. ինչու զուք ծախս ես անում. ուսանուների հալը միթէ ինձ յայտնի չէ:

«Երեկ մկրտեցինք հօրեղբօրս նորածին տղային. «այդ առիթով ինձոյք կար մեր տանը. Ես լուսվեամբ «երեք կում զինի խմեցի քո սիրելի կենաց՝ միթէ «կարող էի բարձրածայն կամ համարձակ ասել ու «անել այդ բանը. քեզ յայտնի է մեզանում հայ աղ «ջկայ զըսութիւնը. Մկրտող քահանան Տէր-Մաթալի «էր. այդ անխիզճը միշտ քո վատն է խօսում. Ախար «ինչ զործ ունիս այդ լիբր մարդից. ինչի համար ես «լրագրներում ծաղրում, վատարանում նրան. սեխն «սապօն-խեխն խրատ ինչ կարող են անել. զրելով «նա չի ուզգուիլ, միայն աւելի սպատիկ կըթշնաւա «նայ հետզ. հօ զիտես, որքան ահռելի են տգէտ, յիմար թշնամիները. Սա մի քանի անգամ կրկնուել է

«Հօրս թէ՝ Սօնային ևս լաւ փեսացու կը զտնեմ, և
«մատնացոյց է անում իը կնքահօր Փաժիկենց Գալօյի
«տղայ՝ Մհօյի վրա. Հայրս լուռ է մնում միշտ. տես-
«նենք, ինչ է լինելու վերջը»:

«Սիրելի, աղնիւ երօ ջան, ամեն օր երազումս
«տեսնում եմ քեզ. ոչ մի ժամ, ոչ մի ըսպէ չեմ մո-
«ռանում քո անմոռահալի անունը. միշտ յիշում եմ
«այն ոսկեայ ժամերը, որոնք շուտ անցան մեզանից:
«Երեք կում գինին որ խմել եմ, հետեւալ մադթուզու-
«թիւն եմ արել. առաջին, որ զու, ուր որ լինես,
«միշտ առողջ և յաջողակ լինես. երկբորդը՝ որ զու
«լաւ աւարտես. իսկ երբորդը՝ որ Տէր Աստուած քո
«սրտի մուրասը կատարէ. հօ զիտես՝ ինչ եմ ասում:
«Ա՛խ, որքան եմ կարօտել քեզ. երբ կը զայ Մայխսը,
«որ քեզ տեսնեմ: Հա, Յարութը այս քանի օր է չէ
երեսում:

«քո Սօնա»:

Ի՞նչ կը զգայիք զուք, ընթերցող, լինելով երօյի
տեղը. մնանան մի ուրախութիւն, սրտի ցնծու-
թիւն՝ և կատաղի զարոյթ, — զիտեմ, կը պատասխա-
նէք զուք, որոնք և այդ ժամին իսկ՝ իսկ տիրապե-
տեցին նրա ամրողջ էութիւնը. նա ուրախանում էր,
որ իւր Սօնան այդպէս վառ կերպով նկարագրում է
իր սիրտը, իր զգացմունքը, որոնց շատ սակաւ ան-
հատներն են արժանանում կանանց կողմից: Բայց
այդ ըսպէին մի ուրիշ զգացմունք փրփրազէլ ալիքի
նման՝ խշշում, զալիս էր հեռուից և, զարկելով նրա
ուրախութեանը՝ ջարդ ու փշուր անում, խորտակում
նրան. դա Տէր-Մաթալի քառութիւնների հետեւանքն

էր, որոնց մասին ակնարկել էր Սօնան:

Նա վեր կացաւ, մի քանի պտոյտ արեց սենեա-
կում. բայց այդ երկու հակառակ զգացմունքները ո՛չ
մի վայրեան պոկ չեն զալիս նրանից՝ դոցա վրա
աւելացրէք և այն վատ-վատ ենթագրութիւնները, ո-
րոնց անում էր նա, այն ժամանակ նրա զրութիւնը
հոգեկան անհանգստութիւնը՝ մասամբ յատնի կը լի-
նի ձեզ: Նա անհանգստանում, տիրում էր, մահա-
ւանդ, նրա համար, որ Տէր-Մաթալի և նրա քըսա-
մելի թակարդների մասին զրել էր նրան և Յարու-
թը: Վերջապէս, կարծես, նա յոգնեց ման զարուց
սենեակում, նորից նայեց, կարգաց նամակը և եր-
կար, շատ երկար մտածեց. նա կարծես, մի որոշ
եղբակացութեան զարով, ինքն իրան արտասանեց, —
այն, պէտք է, անհրաժեշտ է թքել միջոցների վրա
և այս զէպքում խոտորնակին խոտորնակ լինել: Այս
բանը կարծես, քիչ հանգստացրեց նրան. նա վեր
առաւ իր ձեռքի զիբքը, որը Աննա նիկօլանկնայի
մանելու ժամանակը վայր էր զրել սեղանի վրա, և
սկսեց լուլթեամբ կարգալ. հետզհետէ բնութիւնը
սկսեց իր պահանջը կատարել՝ նա կամաց-կամաց
թուլացաւ. քունը եկել և աշքերը սպառնում էր փա-
կել՝ զեռ առանց շորերը հանելու. այդ պատճառով
նա վերկացաւ, շորերը հանեց, իր զլխիվերի զրեց և
ապա շտապով անկողին մտաւ:

Լուլթինը տիրեց այդ փոքրիկ խցիկում, ովին
մերթ-մերթ խանգարում էր երօյի ծանր խըռմիոցը:

Առաւտեան նա վաղ վերկացաւ, հագնուեց և
լուացուելուց յետոյ, թեթեակի նախաձաշեց երկու

բաժակ թէլի հետ և ճանապարհ ընկաւ դէպի դպրոց։
Ուղիղ այս ըոսպէին, երբ երօն բարձրանում էր
դպրոցի շէմքի սանդուխներով՝ գասարան գնալու
համար, նրա բազում երեաց փոստային ցրիչը, որը՝
ահագին քսակը լցրած գանազան թերթերով, հա-
մակներով, յայտարարութիւններով՝ շըջում էր տնեց-
տուն և բաժանում նոցա հասցէատէրերին։ Նա խընդ-
րեց երօյին ընդունել իրանց դպրոցի անունով ստաց-
ուած թերթերը։ Երօն մօտ գնաց, վերցրեց նրանից
այն ամենը, ինչ դպրոցին էր պատկանում և տարաւ
ուսուցչական սենեակ ու գարսեց նրա մէջ կանգնած
երկար ու շքեղ զբանեղանի վրա։ Ստացուած թեր-
թերի ու ծրաբների մէջ նրա աշքին ընկաւ մի մեծ
պաշտօնական ծրաբ, հետաքրքրութիւն թէ ներքին
բնադր զրգեցին նրան իմանալ՝ ո՞րտեղից է ծրաբ։
Նա վեր առաւ և ուշի ուշով զննեց նրա փոստային
կնիքները, ապա խոր մտած մունքի մէջ ընկած ցած
զրեց նրան սեպանի վրա։ կնիքները ցոյց էին տա-
լիս, որ նա ուղարկուած է իրանց զիւղից։ — Ո՞վ է,
արգեօք ուղարկել, — հարցնում էր նա ինքն իրան։
իրանց զիւղացիները՝ բացի իր հօրից, ինչ կարող
էին ունենալ դպրոցի վարչութեան հետ։ որովհետեւ
բացի իրանից այլև ոչ որ չէր սովորում այդտեղ։
Նա շատ մտածեց, այսպէս ենթազրեց, այնպէս եղ-
րակացրեց և, վերջապէս, կարծես թէ իմացած լինե-
լով թէ ինչ է զրած այդ ծրաբում, բարկացաւ, թքեց
զետնին և մի խուլ ձայնով արտասանեց՝ «անողորմ
Յուղա» ու դուրս եկաւ սենեակից։ Այլև տիրութիւնը
չը հեռացաւ նրա երեսից։ Նա այնպէս հաւատացած

էր ծրաբի ինչ լինելը, որ հետզհետէ նորա տըխրու-
թեանը փոխարինում էր զարոյթի մի կատաղի կըակ։
բայց նա լուռ էր։ Որոշեալ ժամին դպրոցի անդամ-
ները և նոցա աւագը սկսեցին բաց անել և կարդալ
պաշտօնական ծրաբները, յահձնելով ի հարկէ, ըստ
պատկանելոյն, մանաւանդ, այն համակները, որոնք
աշակերտներին էին պատկանում։

Երօյին հետաքրքրող այն ծրաբը, որի միջից մի
ահագին խնդիր էր զուրս եկել, անցաւ ձեռքէ ձեռք.
բոլորն էլ ուշադրութեամբ կարդացին, յիտոյ երբ
հնչեց գասարանական հրաւէրի զանգակը, ցըուեցին
իրանց գասարաները պարապելու։ Մի քանի օրից յե-
տոյ մանկավարժական խորհրդին էին հրաւիրուած
դպրոցի բոլոր անդամները։ Կանչուած էր և երօն։

Երեկոյեան ժամի 8-ին նրան կանչեցին խորհր-
դանոցը։ Նա ներս մտաւ, զիսի խորհրդումով բարե-
կերով խորհրդի աւագին, մաս կանգնած գոան մօ-
տին։ Նրան առաջ կանչեցին։ Նա մօտեցաւ։

— Զեղ վրա բողոքում է Զեր զիւղի ծխառէք
քահանան։ Նա ձեղ անվստահելի անդամ է համարում
հասարակութեանը ապագայում։ իսկ այժմ զագրելի
զպարտութիւններով պարապող, որը մամուլի միջո-
ցով տարածել էք յանդինել։ Նա պինդում է, որ զուք
ամուռնային արձակուրզներին միշտ այցելել էք թիւր-
քիս և այնտեղ ինչ ինչ մմին զործերով էք զրա-
ռուել. արգեօք, ճիշտ է այդ քահանայի զրածները։
զիմեց երօյին խորհրդի աւագը։

— Ոչ լիէ մենակ ինձ, այլ շատերի, նրա հետ
կապ չունեցողների վրա ընդունակ է բողոքելու այդ

քահանան, գուր, անտեղի բամբասանքներ բարդելով
նոցա վրա. ես մամուլի միջոցով խօսել եմ բանիմաց
քահանայի. անհրաժեշտութեան մասին և շատերի
թուռն մատնացոյց եմ արել և նրա տպիտութեան
վրա. եթէ զուր, պ. նախազահ, կը հրամայէք, ես
վաղը կը բերեմ ձեզ այդ լրագրի համարները, ուր
տպուած է այդ յօդուածը, որը, հաւատացնում եմ
ձեզ, ընդհանուր բնաւորութիւն ունի և ոչ անհատա-
կան. իսկ ինչ վերաբերում է նրան, թէ ես արձա-
կուրդներին եղել եմ Թիւրքիայում, միանդամայն ճիշտ
է, բայց ոչ այնպէս, ինչպէս ենթադրում է քահանան,
այլ այցելել եմ բարեկամներիս, ազգականներիս,
որոնցից շատերին զրադիտութիւն եմ սովորեցրել,
որի համար, կարծեմ, և զուր ուրախ կը լինէք. վեր-
ջապէս նոցա հետ ուսումնափրութիւններ եմ կատա-
րել, ճանապարհորդել եմ առողջութիւնս կազմութե-
լու, հասցնելով ձեռքիս եկած օգնութիւն և մերձա-
ւորիս՝ առանց խարութիւն դնելով ոչ ցեղի, ոչ
կրօնի և ոչ ազգութեան մէջ, — պատճենանոց երօն
մեղմ կերպով:

— Բայց ինչու մեզ չէք յայտնել ձեր կատարած
գործերի մասին, — հարցրեց զարձեալ նախազահ:

— Կարծում էի թէ հետաքրքրական ոչինչ չը
կայ. բացի զբանից ես այն ցուցամօներից չեմ, որ
հավատանամ կատարածս գործերով:

— Ինչ և իցէ, զուր պարտական էիք յայտնելու.
իսկ հրապարակով անուարկելու այլոց, այն էլ քա-
հանայի՝ երբէք իրաւոնք չունէիք, ինչ բովանդակու-
թեամբ որ լինէք ձեր յօդուածը: Կնացէք և մի կը

ժամից յետ դարձեալ նեքսե եկէք, — հրամայեց նա-
խազահը:

Երօն զուրս եկաւ. վերջառէս, նա հասկացաւ,
որ Տէր-Մաթալի զարշելի զործն է այդ բողոքը. նա
ցաւց ամենայն հոգով. ցաւեց, որ հայ քահանան
մատնիչի դեր է կատարում, այն էլ լուն ուզտ շինե-
լով: նա աւելի ես սկսեց երկնչել թէ՝ ապազյում
ինչեր չի անէ այսպիսի մի զգուելի անձնաւորութիւն. ինչ և իցէ, նա այժմ անհամբեր սպասում էր, թէ
ինչ եզրակացութեան և վճռի կը գայ վարչութիւնը:
Իսկ վարչութեան անդամները այդ ժամին կար-
ծիրներ էին փոխարինում երօյի մասին. շատերը
նոցանից պաշապանում էին վերջնոյս, աւելացնելով,
որ տղէտ քահանան ընդունակ է ամեն քստմելի
արարքների և, զուցէ անձնական թշնամութիւնից
զրդուած, որը կարող է տեղի ունենալ երօյի և նրա
մէջ, ուստի հարկաւոր էին համարում ներել երօյին:

Որոշեալ ժամին երօն նեքսե ընդունուեց: Նա-
խազահը յայտնեց նրան, որ խորհուրդը այս անգամ
ներում է նրան, բաւականանալով մի քանի յանդի-
մանութիւններով, որը այստեղ էլ ասացին նրան: Մի
խօսքով, զգուշացրին նրան, որ իրան խոհեմ
պահէ և լաւ աւարտէ:

Դուրս գալով, երօն աճապարեց իր սենեակը և
առանց ընթրիքի պարկեց քնելու. տիսուր մտքերը
ծանը ենթագրութիւնների հետ ճեցում էին նրա սիր-
ալը: Ի՞նչն էր տանջում նրան. Տէր-Մաթալի ստոր
մատնութիւնը, որի անմեղ զոհն էր ինքը, թէ այն
իրողութիւնը, որը կատարում էր Քրիստոսի աւե-

տարան քարոզողի ձեռքով. — ինքն էլ պարզ ոչինչ չը գիտէր. Միայն մի բան պարզ էր՝ թէ դարերի ընթացքում Քրիստոսի աւետարանը աշակերտողների թուի հետ՝ աճում, զարգանում և լայն ծաւալ էր ստանում Մեծ ձշմարտախօսին զաւաճանողի հետեղողների թիւը: «Դաւաճան», մի բանի անգամ կը կնից նա ինքն իրան: Այս էլ ով է ուրանում, զաւաճանում, — նա, որը իւրաքանչիւր օր Մեծ Մարդու սըլբազան պատուէրներն է կարդում սիրեցէր զմիմեանս. բարի արարէք ատելեաց ձերոց: Նա նայում էր առաջ, շատ առաջ, տեսնում էր այն ժամանակուայ հայ հոգեսրականի դէմքը, նրա կատարած վեհ զործերը և ապա զաւանում էր դէպի Տէր-Մաթալը, որից յետոյ զգուանքը, նողկանքը խեղզում էր նրան: Ժամանակի ընթացքում շատ ազգեր աճել և առաջ են զնացել ամեն ինչով. իսկ գժրադդ հայ ազգը, ընդհակառակը, յետ ու յետ է զալիս: Բացառութիւնները նա զէն էր շպրտում. այդ բացառութիւնները, զըժբազտարար, բնորոշում էին թէ՝ որքան գեռ յետ ենք մենք կանգնած ժամանակի ընդհանուր պահանջների շըշանում, որ երեք-չորս աննշան երկոյթները խոշոր կերպով աչքի են ընկնում, ուշագրութեան արժանանում: Մի ազգի յաջորդաբար առաջադիմութիւնը նա գտնում էր նրա հոգեսր զասի մտաւոր զարգացման մէջ:

Այսպիսի մտածմոնքներ հետզհետէ այնպէս բարդուեցին նրա ուղեղի վրա, որ նա զիմանալ չը կարողացաւ. նա թուլացաւ, յոգնեց, որից յետոյ մենակլաւում էր երօյի ծանր խըռմփոցը:

Նա Մօրփէոսի աշխարհումն էր:

VIII.

Կարմիլ արել մի քանի ժամ էր, ինչ ձգտում էր իր վառվառն կերպարանքը երեան հանել, ցոյց տալ Ալաշկերտու Ալաղաղ լերան. սակայն միշտ էլ ապարդին էին անցնում նրա ճիզ ու ջանքերը. ամպամած երկինքը խանդոտ սիրահարի պէս ամեն տեղ կտրում էր նրա ճանապարհը, և նա միշտ կորչում անհետանում էր նրա սկ շերտերի մէջ, որոնք միայն իրանց մթագոյն ստուերն էին զցում երկրի վրա: Մօտալուտ անձրեսի անբացատրելի երկիւղը ամենքին փախցնում, իրանց տնելն է մտցնում. տիեզերքի այդ ժամանակուայ զոռում-զոչումը, սուր-սուր քամիների շւռցը, անձրեսի կաթիների տարափը՝ միշտ մի արտասովոր սարսուռ են առաջ բերում զեղջուկի հոգեկան աշխարհում. նա բաշտում է իր խրճիթը, երեսն է միշտ խաչալիքում, երբ իւրաքանչիւր անգամ լսում է ամպերի որոտը:

Այդ զրութեան, մէջ էին և Անժափեց Ալաղաղ լերան մօտ «հայլայ» եկող քրդերը, նորա փախել, իրանց վրանների տակ մի մի անկինում, կուճ էին եկել և ամեն անգամ, երբ լսում էր ամպերի որոտը, նորա երեսները երկինք դարձրած մրմնչում էին, — խուզէ, զու խազբըկի. (Աստուած, զու ազատես): Վրաններից մէկը, որը գտնուում էր համարեայ բոլոր վրանների կինզրօնում, իր շքեղութեամբ զանազանում էր բոլոր միւս վրաններից. զա «էլի» զիաւորի վրանն էր: Տան տէրը՝ Ռւսօ-բէղը բազմել էր բարձերի վրա և տխուր մտածութիւնների գիրկը ըն-

կած ծխում էր իր զէյլանը. նա յիսունին մօտ մի նիհար քուրդ էր. նա լուռ էր. լուռ էին և տան միւս անդամնրը:

Վրանում երեսում էին մի քանի կանաց, որոնք նստոտած էին գետնին, կամ պարան էին ճիւսում և կամ պանրի մոժալներ սեղմում: Նոցանից մէկը, որը իր վայրուշ հասակով և գեղեցիկ պատկերով աշբի էր ընկնում բոլորի մէջ՝ կանգնել էր վրանի դռան և տխուր յիշողութիւնների տակ ճնշուած՝ նայում էր անձրեփ տեղացող կաթիլներին, որոնք ահազին շըրըմբոցով թափում էին գետին. իւրաքանչիւր անգամ, երբ լսում էր ամպերի որոտը՝ նա կամացուկ փընթփընթում էր — «Յիսուս-Քրիստոս» և խկոյն իր յետեր զառնում, թէ աբգեօք իրան չը լսեցին. մի քանի անգամ էլ, երբ որոտը աւելն սաստիկ էր լինում, նա այնքան էր մօսանում, թէ ուր է գտնում, որ երեսն էլ էր խաչակնում: Այդ ժամին յուսահատութեան կրակը վասն կերպով երեսում էր նրա աշքերում: Նա Աստուած էր կանչում, որ այդ որոտում ների հետ կայծակի ահաւոր զօրութիւն յայտնուի այդ վրանի վրա և տակն ու վրա անէ նրսն, իրան էլ հետը, որ ազատուի այդ անտանելի զբութիւնից, որի մէջ թոցը ել, գրել էին իրան:

Թշուառ զոհը մի քանի տարի էր, ինչ ընկել էր այդ վրանում և ակամայ տանում էր բրդուհուն յատուկ շաբքաշ կեանք, սակայն այդ կեանքը իր պարզութեամբ այնքան զգալի չէր զգուեցնում նրան, որբան Ուսո-բէկի զուրգուրանքը, որոնք իւրաքանչիւր անգամ մի մաշող զլխացաւ էին պատճառում նրան,

ինքն էլ չը զիտէր ինչ, անել, ինչպէս ազատուել նրա զզուելի փաղաքշանքներից: Վրանի դռան մի ակնթարթում անցեալի քաղցր պատկերները միմեանց յետեկից եկան ու անցոն նրա մտքով. նա յիշեց իրանց Ալաշկերտու Խըտը զիւզը, իր մանկութեան օրերը, իր ծնողները, իր երեք կտրիճ եղբայրները: յիշեց և այն գաժանելի զիշերը, երբ Ուսո-բէկը իր մարդիկներով սրախողող արեց իր հայր Ալօյին, իր երեք եղբայրներին, յիշեց իր մօք աղիողորմ ճիշը, երբ իրան դուրս էին քաշում տանից. յիշեց, թէ ինչպէս ինքը թուլացաւ, ուշագնաց ընկաւ զետնին: Էլ ոչինչ նա չը զիտէր, թէ ինչ պատճանեց իր հետ. երբ նա աշքերը բաց արեց, իրան Ուսո-բէկի գրկում, նրա վրանումը տեսաւ: Իր մօք այն զառնազին ազագակը, ճիշը՝ միշտ էլ նրա մտից չէր զնում. ամեն անգամ, երբ յիշում էր այդ եղերական զիշերը՝ կարծես նրա մօք ձայնը սուր շեշտով զարնում էր նրա ականչին, — ուր.... ուր էր տանում իմ Սալվուն...: Եւ այդ զիշերը անմոռանալի էր նրա յիշողութեան մէջը՝ ամեն անգամ երբ կանչում էին «Սալվի», մի գառն «ախ» էր քաշում նա:

Ամպերի որոտը, զոռում-զոչումը աւելի և տեղի սաստկանում էին. քամին իր շուսցով մի ահարեկող երկիւզ էր տարածում, շըշակայրում: Ամենքն էլ իրանց բան ու զործը թողած՝ դուրս էին նայում: Այդ խառնաշփոթութեան մէջ Ալատաղի ճանապահին Ուսո-բէկի էլից կէս օրուայ ճանապարհ հեռաւութեան վրայ՝ երեսում էր մի ճանապարհորդ, որի առաջից հազիւ-հագ քայլում էր նրա բեռնաւորուած

էշը: ճանապարհորդը մի թխաղէմ, կարճահասակ մարդ էր. տարիքը մեծ չէին: Օրուայ այդ պահուն ճանապարհորդութիւնը, նրա աներկիւղ առաջ ընթանալը, նոյնքան անվեհեր քայլերի հետ՝ պարզ ցոյց էին տալիս, որ նա արտասովոր կտրիճ որտի տէր մարդ է. իսկ տիեզերքի արհաւիրքը այդպէս արհամարելը գալիս էր ապացուցելու, որ նա ծնուել, սնուել է բնութեան զրկում, ուստի և ընդունակ է տանելու նրա ամեն մի գայրոյթը, բարկութիւնը: — Թփու, — փընթփընթաց ճանապարհորդը, — չի էլ զագարում, ճանդարտում. սակայն ինչ փոյթ՝ այստեղի ամեն մի քարը չէ որ ինձ ծանօթ է. եթէ զիշերը վրա հասնի, նոյցա տակին կը զտնեմ ինձ ճանդիստ. կանաչներն էլ աւելի փարթամ են՝ լաւ կը կշտացնեն իմ էշին: 2է, ինչ եմ ասում, զեռ օր շատ կայ. միթէ այդքան շուտ պիտի զիշերը վրա հասնի. Ախ, եթէ ամպերը թողնէին տրեի երեսը տեսնելու, ես ամեն բան կարդի տակ կը զնէի, — այս տսելով, նու կանգ առաւ ուշի ուշով զննեց, թէ ուր է ինրը. յիշեց թէ՝ որտեղից է այդ օրը զուրս եկել. մտածեց և նորից փընթփընթաց, — չէ զեռ բաւականին օր կայ՝ կէս օրից քիչ անց կը լինի:

Մինչ նա այսպիսի ենթաղբութիւնների մէջ էր զտնւում, յանկարծ յիտեից լսուեցին ձիան ոտքերի տրոփիւներ. նա յիտ նայեց. եկողը մի սե ձիաւոր էր. քուրդ էր:

— Հա, ֆլայ, էլի դու այստեղեր երեացիր. րեռդ ինչ է, — ճարցրեց քուրդը հպարտ ձայնով:

— Մանքունք է. ինչ պիտի լինի, — պատասխա-

նեց հայը:

— Ըատ լաւ... շատ լաւ ա... իմ բաղդիցն է, որ քեզ պատահեցի. այս երկու օր է՝ ճանապարհ եմ զալիս և մի անգամ էլ չեմ ծխել երկի ծխախոտ էլ կ'ունիենաս:

— Ո՞չ չունիմ.

— Սուտ ևս խօսում, անզգամ:

— Անզգամ զու ես. ես սուտ խօսացող չեմ:

— Եաւ, զու պատասխանում ես ինձ ճայնոյանք-ներով. որ սուտ չես խօսում, թող նայեմ քո կապոցները:

— Այդ երրեք չես կարող անել՝ քեզ թոյլ տուող չի լինի:

Քուրդը կատաղեց. առաջին անգամն էր, որ նրան ճակառակում էին. այն էլ ով, մի հայ մանրավաճառ. նրա զայրոյթը իր զագալթնակէտին հասաւ և նա արագ-արագ ձին դէպի նրան քշեց՝ մերկացը-րած սուրը ձեռին. Մանրավաճառը մի քանի քայլ յիտ-յետ զնաց, — ապա իր ձեռքի մահակով այնպիսի մի ծանը հարուած իշեցընց նրա զլխին, որ նա զլխավայը վայր ընկաւ ուշաթափուած, նա իսկրյն րոնեց ձիան սանձից, հեռու տարաւ և պինդ կապեց մի մեծ քարից, ապա՝ վերապառնալով ընկած քրդի մօտ, իր փոքրելի գաշոյնով կտրեց նրա զլուխը, իսկ զիակ՝ քաշ տալով մօտակայ գուփը՝ նետեց այնտեղ, ուր և զլորեց կտրած զլուխը. յիտոյ իր էշը սկսեց քշել ճանապարհով. Մութը զեռ չէր ընկած՝ նա հասաւ Ալաղաղից ոչ հեռու գտնուած քարայրը. ուր և բերեց սպանուած քրդի ձին. Այստեղ զիշերե-

լուց յետոյ՝ առաւօտեան նա հազար իր խուզինում
եղած քրդական շորերը և թողնելով մի փոքրիկ տուժ
այլում արդէն վառած և հանգած կը ակի մօտին,
ինք ուղերուեց Ուսօ-բէկի օրան:

Եղանակը պարզ և զեղեցիկ էր. երեկուայ տաղ-
տկալի օրուան յաջորդել էր մի հմայիչ առաւօտ:
Տղամարդիկը իրանց անասունների հետ հեռացել
դաշտ էին զնացել կենդանիներին արածացնելու.
իսկ կանացք իրանց տնային գործերով էին զբաղ-
ուած:

Այդ ժամին օրան մասւ մեզ ծանօթ մանրավա-
ճառը. քրդուհիները ուրախութեամբ ընդունեցին նը-
րան, ամենքին էլ իրեր էին հարկաւոր. եթէ հարկա-
ւոր էլ չէր, բայց զարձեալ աւելին ունենալ էին
ուզում. կինը ամեն տեղ կին է՝ զարդերու երկրպա-
զու: Մանրավաճառը քրդուհիներով շրջապատուած
մօտեցաւ Ուսօ-բէկի վրանին, որի մօտ վայր բերեց
իշխ վրայից իր իրերը. Քրդուհիները ուրը առնում
էր, որը նայում էր նրա իրերին, որը դիմ վրա եօլա
չէր զնում: Մանրավաճառը ամենքին ուշի-ուշով
զնում էր: Ահա նրան մօտեցաւ Ուսօ-բէկի վրանում
եղած զեղեցկատեսիլ, մատաղահաս Սալվին: Երբ
բաւականին մօտեցաւ նրան, յանկարծ նա ցնցուա-
ծի պէս կանզնեց՝ նրա աշքին քուրզ մանրավաճառի
տարազով նստած էր մեզ ծանօթ Յարութը: Պեր-
ջինս տեսաւ նրան և մի աշքի շարժումով հասկա-
ցրեց, որ ծանօթութիւն չը տայ: Ապա զառնալով
իր էշին, Յարութը հայերէն հանգարտ արտասանեց,
քեզ համար եմ եկել եմ քեզ ազատել, պատ-

րաստութիւններդ տես,— շարոնակելով խփել իշխ
վզին, բարկանալով, իբր նրա վրա: Սալվին հասկա-
ցաւ, որ այդ խօսքերը իրան են ուղղուած, ուստի և
նրա սրախին տիրեց անհարման մի ուրախութիւն: Նա
զիտէր, նա ճանաշում էր Յարութիւն, որը յաճախ
զալիս էր իրանց Խըտը զիւղը, իր հօր մօտ հիւր լի-
նում: Օ՛, քանի-քանի անզամ էր նա տեսել նրան իր
հօր հետ որսի զնալիս. քանի-քանի անզամ էր
ականջով լսել իր հօրիցը, որ Յարութը առիւծի
սիրտ ունի, որ նրա առաջ սար ու ձոր, զաշտ ու
լեամ՝ զսզպաղում են: Այդ պատճառով իր վրկու-
թիւնը այզպիսի մի անձի ձեռքով նա ապահովուած
էր համարում:

Քրդուհիները հեազնեալ, զնեցին իրանց հարկա-
ւոր պէտքերը և հեռացան. ամենից վերջը մօտ եկաւ
նրան Սալվին, որին հազիւ լսելի ձայնով ասաց Յա-
րութը:

— Այսօր երեկոյեան վրանից քիչ հեռացիք դէպի
Ալաղազ, որի այրում այդ ժամին սպասում են մեզ
իմ ընկերները. ես նոցա մի տոմս եմ թողել, ես
այստեղ կը մնամ երկու օր, եթէ քեզ չը զտնեմ.
իսկ եթէ զտնեմ՝ այդ երկու օրուայ ընթացքում,
ինչպէս էլ որ լինի, պիտի ազատեմ և նոցա մօտը
լինեմ:

— Ես պատրաստ եմ կատարել պատուէրդ ամե-
նաճշտութեամբ. ախ, արդեօք, մեր ընտանիքից կեն-
զանի մեացածներ կան. արգեօք թշուառ մայրս մե-
ռել է, թէ ոչ:

— Այզպիսի հարցերի ժամանակ չէ. մեզ կարող

են հասկանալ, զգուշութիւն, զգուշութիւն, ահա այն ամեն ասպարը, որով ես միշտ տարել իմ ծրագիր-ները: Ես ճանապարհին սպանել եմ Ուսօ-բէկի եղբօրը, որ վերադառնում էր Ղարաքիլիսից: անշուշտ այսօր երեկոյեան այստեղ կ'իմանան նրա մահը և բոլորն էլ կը զինաւորուեն յանցազործին բռնելու: այդ իսկ ժամանակին մի կերպ զուրս եկ վրանից, որից յետոյ ամեն բան հեշտ է: Զգուշ, ահա զալիս են կանայք, մեզ կը լսեն:

— Լաւ..., եթէ այզպէս ես ծախում, ես տանողը չեմ, — ասաց Սալվին և հեռացաւ. քրզուհիները լսում էին նրան:

Խըտը զիւզի Ալօյի աղջիկ, Սալվին, մի քանի տարի էր, ինչ զտնուում էր Ուսօ-բէկի տանը, նրա մօտին: Վերջինո՞ւ նկատելով նրա անհնան զեղեցկութիւնը, մի զիշեր վախոցրեց նրան իր հօր տանից և սկզբներում Սինակու կողմերումն էր պահում, որովհետեւ իւրաքանչիւր անկիւն կտրին մարզիլ էին ուղարկած վնտուելու. նրան՝ իսկ երբ մի քանի տարուց յետոյ այլևս այնքան չէին հետաքրքրուում նրանով, այդ պատճառով Ուսօ-բէկը՝ նրան քրզացած համարելով, բերեց իր մօտ պահելու: Դուք ընթերցող, տեսաք նրան, թէ ինչպիսի ջերմեռանդ կերպով ազօթում և խաչակնքում էր իրան այն անձրեային օրը. տեսաք, որ կեանքը նրա համար այդ մթնոլորդում աւելի քան անտանելի էր: Նա վազուց գեռ իր մանկութեան օրերից, ճանաշում էր Յարութին, զիտէր, որ նրա շնորհիւն է յայտնի եղել իր գուր լինելը. այլապէս ինչպէս բացատրել նրա զալուստը

այդ տեղ. չէ որ նրա ծպտեալ ընկերները, յաճախ և ինքը զանազան պատրուակով շրջում էին քրզերի զիւզերը, օբաները՝ միմիայն իրանց նպատակը առաջ տանելու համար:

Արեւ զեռ նոր էր մայր մտել, երբ Ուսօ-բէկի եղբօր՝ սպանման լուրը տարածուեց օբայում: Մի այնպիսի ճիշ, աղադակ բարձրացաւ, որ հեռուից լսողը կը կարծէր թէ՝ վնասը իւրաքանչիւր վրանին է պատկանում: Օբայի գլխաւորի, Ուսօ-բէկի, հրամանավորն էլ բոլորն էլ, համարեայ, զինուեցին, վրաններում մասցին միմիայն ծերերը և կանայք:

Ուսօ-բէկը զնում էր իր եղբօր վրէժը լուծելու իրանց զարեսր թշնամիներից, Զիլանցի քրզերից, որոնց նա մեղազը էր այդ սպանման մէջ, Օբան զատարիւեց. Սալվիի սիրաը լցուեց տպազայի անսահման ուրախութեամբ. իր փրկութիւնը նա կատարուած էր համարտում. երբ մութը պատեց ամենայն տեղ, նա՝ հարեանի վրան դնալու պատրուակով՝ հեռացաւ իրանց վրանից: Քիչ հեռանալուց յետոյ, նրան պատահեց Յարութը, որը խկոյն առաջարկեց նրան մի ձեռք քուրդ տղամարդի զգեստ և պատուիրեց շուտ հաղնել, որը խկոյն կատարուեց. որից յետոյ նոքանկուան էլ գուրս զալով ճանապարհից, շաալեցին իրանց քայլերը դէպի Ալադաղ լիառը: Ճուտով նոքան մեղ ծանօթ քարայրը, ուր նոցա սպատու էին Յարութէ ընկերները: Սալվիին յանձնելով իր երկու ընկերներին, Յարութը պատուիրեց նոցա իր ցոյց տուած ճանապարհներով գնալ Խըտը. իսկ ինցոյց մասցած ընկերներով շտապեց Ուսօ-բէկի ճանաբը

սլարհը կտրելու:

— զտապեցէք, տպայք. մենք պիտի մի ժամ առաջ հասնենք Եփրատի մօտի Կեալ-Գեաֆի ձորակը, որտեղից, ինչպէս տեղեկացել եմ, կանցնին Անթափցի քրգերը՝ Ուսօ-բէկի հետ. այդուզ մենք նբանց մի լաւ չարդ կը տանք, որից յետոյ նայած հանգամանքին՝ կարելին կը կտրպաղբեմ:

Այս առելով, նորա կորան խաւարի մէջ, ստէպ-ստէպ միմեայն ձեանների սորերի տրոփիններն էին լուռում: Մի քանի ժամ անընդհատ արշաւելուց յետոյ, նորա մօտեցան որոշեալ ձորակին, որից յետոյ սկսեցին զանդաղացնել ձիանների քայլերը: Չատ չանցած նորա արդէն ձորակումն էին. ձիանները հեռացրին մի կողմի վրա. իսկ իրանք իւլաքանչիւը մի մի ժայռի յետեւ ոլտնուած, սկսեցին սպասել Ուսօ-բէկին: Վերցինս երկար սպասեցնել շը տուեց՝ իր ձիաւորների առաջը ընկած՝ նա մտաւ ձորակը, ուր պիտի զիշերէին մինչև առաւօտ և ապա շարունակէին իրանց ճանապարհը:

Յած գալով ձիաններից, նորա կրակ սպարաստեցին, և նրա շուրջը շարուելով սկսեցին հետները վերցրած ոչխարի մսից խորոված սպարաստել:

Ուսօ-բէկը անհամբեր սպասում էր խորովածի եփելուն. ձիանների թամբերից կակմւած մի բազմոցի վրա հստած՝ նա հեռուից զանազաննում էր մնացած քրդերից. նրա զէմքը կրակի առաջ աւելի ևս կատաղի կերպարանք էր ստացել. որքան ներքին յուղման, վրէժնողութեան կրակի բոցերն էին այրում նրա սիրտը, նայնքան աւելի խարոյիկ կը ակը

կենդանի էր զարձնում նրա գաղանային պատկերը և աւելի նպաստում նրա ներքին անհանգստութեանը. զրսի և ներսի կրակը նրան մոռացնել էին առել ամեն բան:

Խորովածի անուշանամ հոտը սկսեց բարձրա-նալ և զրգուել քրգերի ախորժակը. կանաչի վրա փռուած քրգական լաւաշների վրա շուտով երեացին խորովածի շամփուրներ: Ամենքն էլ սկսեցին ուտել:

Այդ ժամին հեռուից լսուեց Յարութի աղջանշանը՝ բուի ձայնը, որից յետոյ իսկոյն զանազան անկիւններից լսուեցին հրացանների ձայներ:

Առաջին հրացանի պայմիւնի հետ Ուսօ-բէկը զի-ամին տարածուեց, զա Յարութի անշեղ զնդակն էր, որը՝ առանց վրիպելու՝ խորոված ծամելիս՝ նրա բերանի մէջն էր մտել և հուրինների աշխարհը տարել նրան: Մի քանի բոպէ չ անցած խարոյիկ շուրջը մի քանի տասնեակ զիակներ տարածուել էին զետին: Ով յանդինում էր տեղից վեր կենալ և զէպի իրանց զէնքերը վազել, որոնց զարսել էին իրանցից քիչ հեռու միմեանց վրա, իսկոյն վիրաւորուած ընկնաւմ էր: Մի քանի հոզի միայն ազատուեցին Ուսօ-բէկի մարզկանցից, որոնք մի կերպ վերագարձան իրանց օրան, որտեղից առաւօտեան վրաստներով եկան սպանուածների զիակները տանելու: Իսկ Յարութը՝ պատկերը կատարեալ համարելով, անհնկատելի կերպով հեռացաւ ձորակից: Մի քանի օք յետոյ նա խըտր զիւզումն էր, ուր էր և Սալվին, որի վախուսուը այնքան էլ աշքի չընկաւ, որովհետեւ միմնան յիտեցից յաջորդող եղերական հանգամանքները մոռացնել ալ-

ուին Անթափցիներին նրա անհետանալը։ Ուսո՞բէկը
այլ ևս չը կար, որ ամեն մի ծակ ու ծուկ հետա-
մուտ լինէր՝ նրան զանելու համար։

IX.

Ժամիկենց Գալօյի տղայ Սհօն քսանին մօտիկ
միջահաստի մի պատանի էր: Զը նայած հօր ճիգ ու
ջանքերին՝ փոքր ՚ի շատէ ուսում տալ իր մէկու-
ճարին և պիտանի ժառանգ զարձնել թէ իր և թէ
իր օջախի համար, ընդհակառակն, որդին հօր յան-
կութեան հակառակի զուրս եկաւ. ամեն մի զբա-
րոցից փախուստ տալով, նա 10-12 տարուայ ըն-
թացքում հազիւ հազ զրել կարգալ սովորեց, այն էլ
այնողէս, որ Աստուած զրել կարգալ համարէ. սակայն
անդրազէտ, տղէտ հօր համար այդքան էլ բաւական
էր: Կաշխառու հայրը օրէցօր սկսեց սրդուն ընտե-
լացնել իր արհեստի մէջ. կեղծ մաւրհակներ, պայ-
մանապրեր կազմելն էր պակաս նրա համար, որսով-
հետեւ ինքը անգրազէտ լինելով, ստիպուած էր ու-
րիշների միջոցով կատարել այդ. բայց երբ Սհօն սո-
վորեց զբագիտութիւն, հայրը այզքանով էլ ուրախ
եղու, որովհետեւ ինքը ազատուում էր սրան-նրան զի-
մելու կեղծ թղթեր կազմելու, այժմ այդ բանը հօր
թեկապութեամբ որդին էր կատարում: Այսպիսով
հայր և որդի՝ ժողովրդի արիւն ծծելով, բաւականին
կարսութիւն էին ձեռք բերել: Միամիտ ժողովրդի
մաքով անզամ երեք չէր անցկինում օրների գիմնել
և նրա զօրութեամբ պատճել տալ իրանց տպրուկ-

ներին. Նըանք դեռ գոհ էին լինում, որ իւրաքանչիւր իրանց տնտեսական ճգնաժամին դաքա ձեռք էին բռնում իրանց. բայց թէ ինչպէս էին աճում, իւրպաւում նոցա պարտքերը, նոքա երբէք չէին էլ մտածում դրա համար: Ինչ գործում թերութիւն էր ցոյց տալիս որդին, հայրն էր զիսխի դցում. իսկ երբ հօր խելքը չէր հասնում և երկուսով կասկածի մէջ էին մնում, միշտ որդին իր զիտացածն էր կատարում և յաճախ այնպիսի ճարպպիկ կերպով, որ հայրը արտասուրը տչքերին, երկինք էր նայում և բթի տակին կրկնում մի քանի անգամ, — Տէր, փառք քեզ... փառք քեզ:...

Արեւ զեռ նոր էը մայր մտել: Ե... զիւղի զիւղացիները քաշուել և իրանց տներն էին մտել. թէն մարտ ամիսն էր, բայց ցուրտը զեռ զգալի կերպով ցոյց էր տալիս իր զօրութիւնը: Ժաժիկենց Գալօն իր Սհօյի հետ իրանց միակ թախտի վրա բազմած՝ համբիշը առաջներին զբած՝ մի ինչ որ հաշիւ էին տեսնում և զրի առնում:

— Զը սիսալուես, Մհօ ջան,—նկատեց հայրը, —
Էնպէս արա, որ սատանան էլ չը հաւասայ: Թշնա-
միներս շատ են՝ միշտ մեր քամակիցն են նայում,
քանի դառ ես զբել:

—Քսան ուժի և հօլին արաբայի խոռա

— լաւ, լաւ. ապա կարդա, տեսնենք. զույգէ մի
բան տեղը բերած չը լինես. Ելի ինչքան չը լինի՝ ես
քեզանից փորձուած եմ:

Արդին կարդաց.

«Ես Ես զիւզի բնակիչ Կ. Պ. Ղեր տոի և պարտ

«Եմ մեր համագիւղացի Գալօ Ժաժիկեանցին երեսուն
«մանէթ փող. որի վոխարէն երեք ամսից յետոյ՝
«պարտ եմ տալ քսան ութ զառ. բայց որովհետո
«վաղը անշունչ է, ծախս-մախս չունի պահելու հա-
«մար, էղ պատճառով էս հնձից յետոյ՝ դառների հետ
«պարտ եմ հատուցանել Ժաժիկեանցին և հօթն ա-
«շրաբայ խոտ՝ դառներին կերակրելու համար. Ուստի
«և ստորագրեմ իմ խակական ձեռքով»:

—Ապրիս. լաւ ես տեղը բերել. միայն զզոյշ՝
ձեռքդ լաւ բռնացրու նրա ձեռքին:

—Էնպէս եմ բռնացրել, որ ինքն էլ իր աշքե-
րով հազար տարի ման գայ, մի կեղծութիւն չի նր-
կատել:

—Բայց փող ստանալու ժամանակ, Մհօ, հունա-
րը մնաց քեզ. Էնպէս պիտի հարբացնես, որ ոչինչ
չը մնայ մտքում:

—Էղ իմ զործն է. խամ չեմ. Էնպէս կը խմա-
ցնեմ, որ սե ու սպիտակ ջոկել շը կարողանայ. դրա
ներկայութեամբ մի կտոր թուղթ կը խզպեմ ու
կասեմ՝ մուլհակը պատրաստ է. ստորագրեն էլ հօ
դարձեալ իմ զործ է. զոցա տմեն մէկի ձեռքերը իմ
ծոցումն է....

—Ապրիս, որպի ապրիս....

—Ես ել օրհնեսցիմ, —ապրիս, սանիկս, ապրիս,
լսուեց սրահից Տէր-Մաթալի ձայնը:

—Համեցէք, տէր-տէր, համեցէք, —ձայն տուեց
Գալօն:

—Ի՞նչ ես գեռալի, գե՛օ իկացիմ. ողջոյն ձեզի:
—Օրհնեա տէր. —միաբերան կրկնեցին Գալօն և

և Մհօն՝ ոտքի կանգնելով:

—Աստուած օրհնեսցէ, նստեցէք:

Սոքա բոլորն էլ բազմեցին թախտի վրա:

—Էղ օրհնութիւն էիր կեարդալի տղայիզ, —հար-
ցրեց Տէր-Մաթալը:

—Ոչինչ, մուլհակ էր զրում, լաւ էր զրել. իս էլ
օլհուում էի. Էհ հօր սիրո է, տէրտէր:

—Մուլհակ:

—Այո:

—Ում:

—Կ. Պ.:

—Տեսնեմ:

—Համեցէք:

Տէր-Մաթալը քթին տակին վնմիվնթաց, ապա
նկատեց:

—Չատ ապրիս, սանիկ, հէջ մեր Սալմաստումն
էլ էսպէս չին կոնալի ստորագրութիւն սառեկ. հէջ
գիտի, հէյ... վորը երեխայի, որ Տէրս-մէրս քիօշե-
ցին էնտեղէն. թէ մնասցէին, էնպէսի ֆանդել կուս-
նէի. համա էլի փառք նրան, —այս ասելով, նա նայեց
առաստաղին, —քաւոր Գալօ, թէ վախենացէք, ինձ էլ
կարող էր վկայ զրել. էլ մեր բարեկամութիւն ինչի
համար է:

—Փառաւոր մնաս, տէր-տէր:

—Էհ, քեաւոը Գալօ, էս քանի անգամ է, որ
քեզ բան ըսեսցիմ, էհ:

—Սեփանենց Գէվօյի աղջկայ մասին:

—Հա՛, Սօնայի մնասին:

—Գու գիտիս, տէրտէր, ինչպէս դիտես, էնպէս

Էլ արա:

— Ար ես զիտեմ, դէհ ուզեսցիմ Զատկից յետոյ
նշան դնել, աղջկայ հօք հետին էլ խօսել եմ:

— Ջատ լաւ, դնենք նշան:

— Թէ չէ Ալաշկերտցոնց Դաւթի տղան, ասեսցէն,
էս տարի աւարտելի ու զեղ պիտի զայ. էհ ժամա-
նակ բանը կը ծանրանայ, աղջիկը լաւ աղջիկ է, ձեռ-
ներիցս կը թռչի, հա՞:

— Ենպատաճառ, Զատկին նշանը դնենք:

— Տօ, հէր օրհնած, կարգս վկայի, որ համով
թիքայի, համ աղջիկը լաւ աղջիկի, համ էլ որդի շու-
նի. չէ որ ծնողաց մահից յետոյ ամեն բան մերնի.
իմ աշքը վաղուց նրա մէշայի վրայի—վերջացրեց իր
ասելիքը տերտէրը՝ խտան Սալմաստի բարբառով:

— Գու զլուխ բեր զործը, թող քեզ լինի. Մհօ,
զուռը թակում են, տես ո՞վ է:

Մի քանի բոպէից յետ՝ Մհօն Կ. Պ.-ի հետ ներս
մատաւ և բարեկալով նստողներին, իրանը էլ մի կողմի
վրա նստեցին:

— Եկար, որդի Կ.

— Բա ինչ անէի:

— Փողը պատրաստ է, մի քիչ հաց ուտենք, յետոյ:

Իսկոյն հաց բերին և հայր ու որդի ամենայն
նարակիւթեամբ սկսեցին իրանց ծրագիրը աւած տա-
նել. մի քանի բոպէից յետոյ խեղճ Կ. Պ. ոտքի վրա
չէր կարող կանգնել. իսկ աշքերը, համարեայ, ոշինչ
չէին տեսնում. առարկաները շարժւում էին. ալկօ-
հօլը իր դերը կատարում էր:

Գալօյի ուրախութեան չափ չը կար. ինչպէս կա-

մենում էին, միամիտ Կ. Պ.-ին այն օրին էլ դրին:
Այժմ՝ խարչախ վաշխառտների վող համբելու ժա-
մանակն էր. այսուեղ էլ նորա մի քանի բուբլի պա-
կաս տուեցին, թշուառ զոհը ոչ մի կասկած չ'ունէր.
միթէ այդպիսի հիւրասէր ոմ, որպիսին նա կար-
ծում էր Գալօյին, ընդունակ է կեղծութեան, կամ մի
որևէ ապօրինի զործունէութեան. չէ զը նա համոզ-
ուած էր, որ Աստուած քաղցրացել է Գալօյի վրա.
եթէ ոչ՝ որտեղից էր նա այդքան կարողութիւն ժո-
ղովել. — չէ, աղպէր, առանց Աստուծոյ մի կոպէկ էլ
չի կարելի վաստակել. — կըկնում էր յաճախ Կ. Պ.,
երբ խօսք էր բացւում հարուատ ու աղքատի վրա:

— Ե՞ն, սահնէր Կ. Պ., երկի շատ ես շտապում.
թէ ուզում ես, փողերը բերեմ, — դիմեց նրան Գալօն:

— Հա... ա... պա... պա... ինչ, բերը:

— Մհօ, ջահել ես, էն փոքը սնտուկի կտաւէ տոպ-
րակը բեր, տեսնեմ. Մհօն իսկոյն կտտարեց հօր
հրամանը:

— Մահահէր Կ. Պ., բոնիք, տեսնեմ, — հորից զի-
մեց նրան Գալօն, համբելով նրա ձեռքում տոպըրա-
կից համած արծաթեայ փողերը. այ, մէկ, երկու,
երեք, չըս, հինգ, վեց, եօթ, ութ...

— Հայրիկ, զգուշութեամբ համբիր. երկուսդ էլ
հարբած էր. — զգուշացրեց հօրը Մհօն:

— Սուս... ես զիտեմ իմ բանը. երեխայ շեմ, յա-
կոտ. այ, տեսար, խօսացիք՝ չ'իմացայ որբան համ-
բեցի. ապա տուք տեսնեմ, նորից համբեմ, — նա տ-
ուաւ Կ. Պ.-ից նրան տուած ութ բուբլին և համբե-
լու ժամանակ մէկ բարկացաւ որդու վրայ, որ նրան

իրը խանգարել էր՝ մէկ շաբանակեց, տընքալով,
համբել. և այսպիսի ճարպիկ ձեւերով մինչ երեսունի
հասաւ, երեք բուբլի կուլ դնաց նրա համբելումը:
Երբ վերջացրեց՝ նա նորից դիմեց Կ. Պ.-ին, որ սա
էլ ստովի ստացած փողերը:

— Ի... նշ... ստու... դ. դ. դ... եմ... դու...
Ստո... ատո... ծու... մտով... դն... ես... սխ... ալ...
սի... սխ... ալ... լ... լիս... մշ... չշ...

— Դէս, դու զիտես, սանհեր, Կ. Պ., տար, խէր
տեսնես:

— Մհօ, մուրհակը զրիր, որ սանհեր Կ. Պ. ստորա-
զըի, պրծնի:

— Լաւ, պատասխանեց Նրան Մհօն, ու մի կտոր
թուղթ առնելով, զրեց, որ Կ. Պ. վեր է տռել Յո
րուբլի երեք ամիս ժամանակով... իսկ խոտի մասին
և ոչ մի բառ: Կ. Պ., առաւ թուղթը, կրմկըմաց,
մտիկ արեց մի քանի անգամ և ստովազը:

Ինչ կը կարծէր, որ դա միայն ձևակերպութիւն
էր, հօր և որդու պատրաստած մուրհակը վաղուց
որդէն պատրաստ էր, որը և առաջարկեց Տէր-Մա-
թալին ստորազը իրեւ վկայ: Սա էլ հօ այսպիսի
բաների համար վարպետ էք: Ասլա, Կ. Պ.: տէրաէրի,
Գալօյի ձեռքը համբուրելով և մետս բարե ասելով
ու օրհնելով բարի տան տիրոջը՝ գուրս գնաց տա-
նից: Գեռ հրապարակը չը հասած՝ սրան պատահե-
ցին զիւղի տանուաթէրը և հարկաժողովը, որոնք և
պահանջեցին հարկը վճարել: Թշուառ Կ. Պ.-ի զըր-
պանում փող կար և փորումը ալկօնու՝ այդ պատճա-
ռով առիւծ դառածի պէս՝ հանեց Գալօյից ստացած

և իր աղլուղի մէջ փաթաթած փողերը ու վճարեց
իր այդ հոգէհաններին իր արքունական հարկը: Այս-
տեղ մի շուրջի այդ զիւղական տղրուկները աւել
քաշեցին նրանից: Գիւղական խանութի մօտով անց-
նելիս՝ խանութպանը նկատեց Կ. Պ.-ի տրամադրու-
թիւնը, մօտ կանչեց և հազիւ լսելի ձայնով յիշե-
ցրեց, որ էն հաշիւը մնում է... Սրան էլ բաւակա-
նացրեց Կ. Պ. սակայն մի Յ ըուրի էլ համբէչին
աւելորդ զոհ տուեց այստեղ:

Սրանից գեռ չը հեռացած՝ նրա առաջը կտրեց
Տէր-Մաթալը, որը, մօտենալով, ժպիտը երեսին
նկատեց:

— Օրհնած, Կ. Պ., փողերը ստացար, բայց ինձի
ինչու մոռացար. ես Էնտեղ չուզեցի կոտրել՝ երե-
խիդ մկրտութիւնը և մօրդ թաղումը վաղուց են կա-
տարուել. չունէիր, ես էլ չէի ուզում. հիմի հօ, փառք
Աստուծոյ, կայ:

Սրան էլ բաւականացրեց Կ. Պ. Մի խօսքով,
մինչև առն հասաւ, ստացուած փողերը սրան-նրան
բաժանելով, դեռ Յ ըուրի էլ պարտ մնաց. այն ինչ՝
զեռ երեկուայ իր հաշուով՝ մի քանի ըուրի էլ պիտի
տւելանար:

Հետեւեալ առաւօտ թշուառ Կ. Պ.-ը, երաղի
նման յիշելով իրան պատահած բաները, կասկած
անզամ չը յայտնեց, որ իրան, համարեա, թալա-
նել են:

X.

Վերջին քննութիւնների առիթով աշակերտների մէջ մի արտասովոր իրարանցում էր տիրում. երկու ամիս շարունակ նորա պիտի իւրաքանչիւր օր կը դութեամբ պարապէին, որ կարողանային պարզ երեսութեամբ հրաժեշտ տալ զպրոցի պատերին. Ապրիլ և Մայիս ամիսները իրանց մշտական ուրախութեան հետ բերել էին այս անզամ զոցա և մի ներքին յուղմունք, երկշուսութիւն. Եթէ բաղդի անիւը թարսուէր և նորա յաջող քննութիւն չը բանէին, այն ժամանակ ընդ միշտ անէծքով պիտի յիշէին այդ ամիսները:

Երօն էլ ապատ չէր տյգ խլրուումից. նա էլ ամեն ջանքեր գործ էր զնում րաւ աւարտելու. յաճախ զիշերները չէր քնում և մինչև արշալոյսը պատրաստում էր միւս իր ընկերների նման՝ պարզ երես զուրս զալու, թէ իւր ծնողների, թէ զպրոցական փարզութեան և թէ, մանաւանդ, իր Սօնայի առաջ. Վերջնոյս սէրը, անունը յիշելիս՝ կը կնապատկւում, եռում էր նրա եռանդը և սա տոկուն նաւագարի նման՝ միշտ նայում էր հեռու, դէպի ցանկալի ափը, սիրելի ապագան, որին նա ամենայն նաւատով սպասում էր: Քանի քանի փոթորիկներ էր անցել նրա զլխով, որոնք սպառնում էին անդունդը տանելու նրա փայփայած ծրագիրները. սակայն մի աներեսյթ մատմիշտ զալիս էր ուղղելու, զըստելու նրա կիսաւեր գործերը: Այժմ մօտեցել էր վախճանը կը առ տանջանքների. այժմ մօտենում էր ժամը, երբ նա ինքնուրոյն կերպով պիտի կեանքի փշոտ ասպարեզը

նետուէր՝ զործելու յանուն իր փայփայած զործերի, և ոլքան բաղդաւոր էր նա իրան համարում, երբ Սօնան էլ պիտի օգնէր նրան իր փայփայած զաղափարները առաջ տանելու. սակայն թշուառը չը զիտէր, որ այն տեղ էլ, հեռու, շատ հեռու իրանից, ճակատագիրը պատրաստում էր մի պմպ, որը թանձրանալով, պիտի սև զայներով ներկիր նրա երազած ապագան: Քննութիւնների, սպառնալիքների տակ՝ նա երբէք չէր կասկածում, որ յանկարծ կարող է իրերի գրութիւնը այնպէս փոխուել, այնողէս խճցուել, զորգեան հանգոյցի տէս, որ ինքը շշմածի նըման՝ կարող է և իր զլուխը կորցնել և ընկնել այդ խառնաշփաթութեան մէջ, որից զուրս գալ այլնս անհնարին կը լինի:

Նա մինչև անզամ մոռացել էր Տէր-Մաթալին, մոռացել էր Սօնայի զրած կասկածոտութիւնները սրտ մտախին. նա իր փայլուն ասլազան տեսնելու տենչով տոշորուած մոռացել էր ամեն վտանգաւոր պատահելիքները և միայն դէպի ապագան էր նայում և լի եռանդով դէպի նա էր քայլում:

Ե... քաղաքը իր արտասովոր իրարանցումով, իր առօրեայ զուարձութիւններով այնքան էլ սիրելի չէր նրան, ընդհակառակը նա, համարեա թէ՝ զլում էր նրա զեխ ու շոալ կենցաղավարութիւնից, նրա իւրաքանչիւր անկիւններում բուն զնող ձևականութիւններից և արտաքին կերպարանափոխութիւնից. չը կար այստեղ զիւզերին յատուկ զուտ նահապետական պարզութիւն, որին այնքան չերմ կերպով սիկան պարզութիւն, որին այնքան չերմ կերպով սիկան պարզութիւն էր նա և որին յանկանում էր տեսնել մարդ-

կանց յարաբերութիւնների, նիստ ու կացի մէջ, եթելի նրա մանկութիւնը, անցնելով պարզութեան աշխարհում դիւզումը, սերտ կերպով կապել էր նրան գիւղական նիստ ու կացի հետ, որը այժմ նրա բնաւորութեան խոշոր գծերից մէկն էր կազմում:

Մի երեկոյ, երբ նա քննութիւնների պատրաստութիւններից յոդնած՝ պարկել էր հանգիստ մահճակալի վրա և երեսը առաստաղին յառած նայում էր այնտեղ և խոր մտածողութիւնների մէջ ընկնում, յանկարծ լսեց ոտքերի ձայներ. խսկոյն պթափուեց և, դէմի զուրաը նայելով, տեսաւ, որ Յարութը բարձրանում է իր սենեակի սանդուխներով. Այլ ևս չը կարողանալով իրան զսպել, նու զուրս թռաւ և փաթաթուեց նրա վզով ու ներս հրտակեց: Նստելով աթոռների վրա, նորա երկար լուս նայում էին միմեանց, վերջապէս, երօն, ընդհատելով լուսութիւնը, հարցըց.

—Այս մըտեզից այսպիսի անոպասելի կերպով:

—Ալաշկերտումն էի. վերազանում էի, սիրոս չը դիմացաւ. վճռեցի զալ բեզ տեսնելու, մանաւանդ, չը վազուց է տեղեկութիւն չ'ունիմ մեր կողմերից. որ վազուց է տեղեկութիւն մեր կողմերից. երեխ նամակներ ստանաւմ ես. ինչ նորութիւններ կան: Երեխ նամակների վրա միանաւած էի առաջարկութիւններ չ'ունիմ.

—Այնքան միխթարից տեղեկութիւններ չ'ունիմ. Սօնայից անցեալներում նամակ ունէի. զրում էր քորացակայութեան, Տէր-Մաթալի որոզայթների և նորա ուրիշ զազերի վործերի մասին:

—Եթէ մենակ այդ է, ոչինչ. զոքա սովորական բաներ են. եթէ նա չը զբէր, միթէ զու չը գիտէիր ինչ է Տէր-Մաթալը. ճիշտն ասած՝ ես աւելի զարցի-

լի և վատթար գործերից ել վախենաւմ, որի պատճառով և շատապեցի, որքան կարելի է, մի քանի օր առաջ վերադառնալ մեր գիւղը:

—Ի՞նչ էր ձեր վախենալու և վերադառնալու պատճառը:

—Ինչպէս թէ. միթէ չես սպասում, որ այդ եղուիալ, օգտուելով իմ բացակայութիւնից, կարող է յաջողացնել Սօնայի նշանաղրութիւնը. իմ և քո բացակայութիւնից յարմար ժամանակ էլ երբ նա զըտնելու է:

—Այս անիծուած քննութիւնների ծանրութեան տակ՝ ես մոռացել եմ ամենաերկիւղալին. և իրաք, այդ տաենի ինչ ուրացած քահանան ընդունակ է օգտուելու առիթից և ըսպէն անզամ չի կորցնում. ես մոռացել եմ քեզ պատմել թէ ինչպէս նա լի զրպարտութիւններով մի բողոք էր ուկարկել մեր վարչութեանը, որ ինձ վանաել տայ գպբոցից. սակայն իւ ասածը չ'եղաւ:

—Միթէ:

—Ճիշտն եմ ասում:

—Ել ինչով կարող է ասած զնալ մեր թշուառ ժողովուրդը, երբ այսպիսի քահանա՝ և լէպէօններով զեռ վխառում են մեր գիւղերը. նոյն իսկ քաղաքներն էլ: Այսօր, երբ, զժրադտաբար, մեր զեղչուկի հայեացը զեռ զէպի իր տէրտէլներն է ուզգուած և ամեն ինչ նըտնիցն է սպասում, էլ ինչով կարող է կերպարանափոխուել նրա մտաւը և բարոյական աշխարհը. չը կայ զպբոցների պահանջուած քահանց ուրացական բաները. որ կարողանայ թշուառ ժողովրդի աշքերը բա-

նալ և ճանաչեցնել տալ նրան նման տէրտէրների
ինչ լինելը. ճշմարիան եմ տառւմ, ինչ էլ լինեն զո-
քա ինձ այնքան չեն վշտացնում, բացի այն, որ
մատնողութեան անարդ ու գարշելի դերն են կա-
տարում:

— Սակայն ինչ անել, որ չարիքը մասամբ մեղ-
մացնել:

— Ինչ անել:

— Այս:

— Այն անել, որ ով ըմբռնում է շարիքի այդ-
քան մեծութիւնը՝ նրա էլ սրբազն պարտականու-
թիւնը պիտի լինի՝ վերջ տալ զոյց զոյութեանը և
ամեն տեղ, ամեն ժամ մահու և կեանքի կոփւ մղել
զոց զէմ:

— Ի՞նչ անել երբ մեր ժողովուրդը ինքն է իր
համար զերեզման պատրաստում, նետաելով տգետ
քահանաների զիրկը:

Մինչ սոքա այսպէս խօսում էին՝ յանկարծ գռան
մօտը երեաց փոսային ցըիշը: Երօն մօտ զնաց և
ստացաւ նրանից իր անոնով մի ներփակեալ նա-
մակ. կարդալով հասցէն, նա ուրտիսացաւ. Սօնայի
ձեռքն էր:

— Ո՞ւտեղից է տեսնես, երօ:

— Մեր զիւղիցն է:

— Ո՞ւմից է արդեօք.

— Հասցէն զբուած է Սօնայի ձեռքով. բացց բաց
անենք, տեսնեմ մէջը ինչ կայ:

Երօյի աշքերը շտապ-շտապ վաղեցին նամակի
վրայով և հետզհետէ նրա ձեռքերը և ոտքերը սկսե-

ցին դողգողալ. նա թուլացած վայր ընկաւ իր մահ-
ճակալի վրայ և դառն կերպով հեկեկու սկսեց. բայց
նամակը վաղուց արդէն վայր էր ընկել յատակի վրա:

Յարութը՝ չիմանալով ինչ պատահեց նրա հետ,
վազեց դէպի նամակը և սկսեց կարգալ, իմանալ,
թէ արգեօք ինչից ստիպուած յանկարծ այսպէս
փոխուեց նրա տրամադրութիւնը. վերջացնելով նա-
մակի ընթերցումը, նա բարձր-բարձր ծիծաղեց ու
դարձաւ դէպի նրան:

— Ես մինչև օրս կարծում էի թէ՝ որու իրօք
տղամարդու սիրտ ունէիր. Էհ, ինչ մի անողողելի
կորուստ է այդ. զըում է, որ իրան նշանել են Գա-
լոյինց Սհօյի հետ և աղերսում է քո օգնութիւնը.
միթէ պակաս ուրախութիւն ես լսում, զու այդքան
ծանը հարուածի հետ. Տէր-Մաթալը իր ծրագիրը ա-
ռաջ է տարել, գլուխ է բերել նշանազրութիւնը. բայց
չէ որ զըում է՝ իրան րոնի կերպով են նշան զրել, հէնց
այս տողերովը զու ազատած կը լինես այդ թշուառ
զոհին. բաւական է այդ ներկայացնել մեր հոգեոր
բարձր ատեանները, այն ժամանակ նշանազրութիւնը
լուծուած կը լինի. իսկ եթէ այդ չ'աջողուեց մեզ,
այն ժամանակ կենդանի են այս բազուկներս, որոնք
միշտ պատրաստ են եղել թշուառի արտասուբները
սրբելու և վէրբերը բուժելու. նոքա և կ'անեն այն,
որը զու և Սօնտն էք ցանկանում. չէ, մի՛ վշտանար,
զեռ ես մեռած չեմ. ուրախ եղիք, զեռ կայ մէկը,
որը ամեն միջոց զործ կը զնէ ձեզ նպատակին հաս-
ցնելու. բայց նախ քան այդ, խնդրում եմ սրբել այդ
արտասուբներդ, որոնք կատաղութեան դայրոյթ են

առաջ բերում իմ մէջը. ես սովոր չեմ արտասուքների. դոքա փոքրոգութեան, երկոտութեան նշաններ են: Այո, դեռ կենդանի եմ ես: Տէր-Մաթալը իր եղութառութիւններով Ռւսօ-բէկից բարձր չէ. այն ձեռքերը, որոնք վերջ տուին Ռւսօ-բէկի կեանրին՝ վրէժինդրութեան ծարաւը սրտումը թողնելով. այն ձեռքերը, որոնք զտան տարիներով կորած Սալվիին, դժուար բովէին կը հասնեն և օգնութեան քեզ. կրկնում եմ, թող այդ երեխայութիւններզ, եթէ ոչ, ես ընդմիշտ կը հեռանամ քեզանից. հարուածդ դիմ կատարեալ չէ. դեռ կարելի է նրան ուղղել. չէ որ Սօնայի սիրոր միշտ քեզ հետ է. չէ որ դեռ կան միշոցներ, կան մարդիկ, որոնցով կարելի է քանզիլ նշանագրութիւնը:

Երօն խելազարի նման լսում էր նրան. նա չէր լաց լինում, դադարել էր հեկեկալուց. լսում էր Յարութին և լսու երկոյթին, ոչինչ չէր հասկանում նրա խօսքերից. Հարուածդի առաջին բովէին նա Սօնային կորած էր համարում. բայց, երբ Յարութը իր աղդու ձայնով խօսել սկսեց, երբ նա կամաց-կամաց ուշքի եկաւ և ըմբռնեց նրա խօսքերի մեծութիւնը, արտասուքը իրանց-իրանց զագարեցին. միայն մի փաքը նա իրան շշմածի պէս էր զգում. գլուխը սաստիկ ցաւում էր. ականջները խշշում էին. աշքերի առաջը սկանում էր. նա լուռ էր:

— Լսիր, երօ, ես նորից կարդամ այդ նամակները:

(1 ն ա մ ա կ.)

«Երօ ջան.»

«Ճատ հոգսի տէրը՝ շատ խօսող կը լինի: Սրա

«հետ ուղարկում եմ քեզ, երօ ջան, մի փոքրիկ նուէր՝ մի ծաղկեայ ձեռք, որպէս նշան մեր նուիրական «սիրոյն. դա պէտք կը գայ քեզ կարօտութեանդ ժամերում, երբ մտածելիս կը լինես ապազայիդ համար: «Ինչու, երօ ջան, չես զըռում. զու էլ ինձ նման հօ «փակուած չես վանդակում, որ ամեննեին զուրս զալու «հնար չը կայ. արգեօր ես ինչպէս անեմ, որ զուրս «թոշեմ այս վանդակիցը, որ մի քիչ էլ ուրախանամ, «որովհետեւ զիշեր-ցերեկ արտասուքը հեղեղի նման «թափում է աշքերից. կը զտո այստեղ ու կը «հարցանես քո բարեկամուհուն և իմ ընկերուհի Սրծուիկին՝ զրուստ եմ ասում, թէ ոչ:

«Արգեօր, իմ վշտերին զեզ ու ճար կայ. ես քո «նամակը ստացայ յունվարի 19-ին. բայց սպասում «էի, որ մի նամակ էլ ստանամ, յետոյ պատասխան «զբեմ. բայց աշքերս զուրս եկան՝ նամակ շըստացայ: «Երօ ջան, միթէ զու մոռացար ինձ. բայց ես «չեմ մոռանայ քեզ, մինչեւ զլուստ հասնի գերեզմանիս: Երօ ջան, մէկ էլ աղաչում եմ ու խնդրում, սիրես հայքերիզ գերեզմանը ու լաւ պահպանես իմ «նամակները և իմ զագանի խօսքերը, որոնք մինչեւ «անգամ Աստծուն էլ յայտնի չեն. Եթէ եկար և ինձ «մահացած տեսար, այն տեսակ մի ազգու ճառ-բողոք կը կարդաս իմ զագաղիս կամ զերեզմանիս վրա, «որ ժողովուրզը լաց լինի սոսկումով և հասկանայ, «որ բանանալ պէտք չէ մեր կամքի վրա. որ մենք էլ ամարդ ենք, սիրտ ունինք, կամք ունենք: Յունվարի 17-ին մեր տիկինին էլ նամակ զրեցի. (ուսուցու «հուն). Նրա նամակի վրա աղանով ծաղիկ սւղար-

«կեցի. բայց քո նամակի վրա իմ ձեռքս խփեցի. առանց ձեռնոցի է՝ դէհ, ձեռք տուր, իմ հարազատ «Երօ ջան: Օտատ մանրամասն եմ զըսւմ, չը գիտեմ, «կը հասնի ձեռքդ թէ ոչ, որովհետեւ այս լիրք «Տէր-Մաթալը ամեն տեղ մարդիկ է զըել վրաս «հսկելու:

«Բարեելով, սպասում եմ, սպասում եմ, սպասում «եմ պատասխանիդ:

«քո Սօնան»

(II նամակ.)

«Հ մ Ե ր օ ջ ա ն,»

«Առաջին նամակս զըեցի, բայց չ'յաջողուեց ու «զարկել՝ ուղարկում եմ նրա հետ և երկրորդը:

«Արտասուքը ինձ խեղում է այս ցաւալի վիճակում: Ա՛խ, երօ ջան, առաջի նամակումս ես դիմել «էի քեզ, որ բուժիչ խօսքերով միտիթարես ինձ. բայց «զու էլ քո չզըելսվը ծանրացրիք ես աւելի իմ զառն «վշտերը: Ա՛խ, երօ ջան, ինչու ես պատմել սրան-ձմբան մեր սէրը, որ այստեղ խօսում են, զիտէս, իմ «սէր, թէ ինչ մթնոլորտում եմ ապրում: Եթէ խըն- «դիբքս չը կատարուեց՝ ես ինձ կը խեղզեմ: Աւժ ու- «նեցիք լսելու՝ ինձ նշանել են Դալօյենց Սհօյի հետ, «որը Անտառոտ գիւղում է ապրում այժմ՝ իր տռե- «տրական զործերովը: Արդեօք չես կարող այն տե- «սակ մի նամակ զըել, ուղարկել նրան, որ կարդա- «լուն պէս՝ հեռազրի այստեղ թէ՝ ես ձեր աղջիկը չեմ «առնի: Ո՛հ, որքան ուրախ կը լինէի, երբ ստանայի «այդ տեսակ լուր. կըկնում եմ, եթէ այս խնդիրս չը

«կատարուեց. ես նրան կին լինող շեմ, ես ինձ կը «թունաւորեմ ու կազատուեմ եմ այս զառն վիճակից «և անտանելի վշտերիցը, ոբոնք այս մի ամսուայ «ընթացքումը ինձ հող ու մոխիր զարձրին: Ա՛խ, երօ «ջան, երբէք հանդստութիւն չունիմ: ո՞վ չը գիտէ սի- «ըոյ բանը՝ անհոգ կը մրափի տանը: Երօ ջան, ես «Որբերի արտասուքը» գիրքը կարդացի. այդ տեղ «զրում է հեղինակը թէ՝ որրի արտասուքի ամեն մի «կաթիլը հասնում է երկինքը. բա ինչու իմ արտա- «սուքը չի հասնում երկինքը, որ ես էլ ազատուիմ «այս տանջանքներից: Աշխատիր խանգարել, յետոյ «զալ: Ոչ մի վայրկեան չը մոռացող, յիշող և քիզ «սիրող եմ:

«Ո՞ւր է Յարութը:

«Սպասում է, սպասում է, սպասում է պատաս- «իւսնիդ

«քո Սօնան»

(III նամակ).

Իմ յոյս, իմ կեանք Երօ:

«Ինչ-ինչ խոչնդոտների պատճառով՝ առաջի եր- «կու նամակները իրանց ժամանակին չը կարողացայ «ուղարկել. զոյա հետ ուղարկում եմ և երբորդը: Ա՛խ, «երօ ջան, ծովի շավի է վիշտս. եթէ քեզ հետ էլ «ապլիմ, չեմ մոռանայ այս անտանելի վարտերս: Ա՛խ, «ես ինչ անեմ. ես զըող չեմ, որ նրա (Սհօյի), հոգին տանջելով առնեմ, ես օձ չեմ, որ նրան թունաւորեմ, «խալթիմ. ես ատրճանակ չեմ, որ արձակուիմ նրա վրա

«Ե նոյն ըռպէին շունչը վշել տամ. ևս լինչ անեմ.
«Գլուխս ինչ քարի տամ. Այս, երանի այն օքը, որ
«կը մահանամ և առնելով իմ ծանր վշտերը, կը
«պարկեմ խռնաւ հողի մէջ. Այս, երօ ջան, արդեօք
«իմ վշտերիս ճար կայ: Կրկնում եմ, ևս կը խեղզւիմ
«և նրա հետ շեմ ամուսնանայ: Այս, Աստուած իմ,
«ևս լինչ ահեմ, որ ապատում էն շան տղիցը: Երօ
«ջան, երգում եմ քո անունով, որ միշտ սուբր զնա-
«լիս, կամ տունը մնալիս, խնդրում եմ Աստծուն, որ
«նրա (Սհօյի) հոգին տանձ՝ ևս տղատեմ: Աշխատիր,
«աշխատիր խանգարել: Այս, սե լինէր էն նշանը,
«որ եղաւ կրակ, ընկաւ սիրտս: Ես սուբրերին ուխտ
«եմ զնում, դարձեալ քեզ համար եմ խնդրում աջո-
«ղութիւն, արեշատութիւն, ևս նրան, էն շան տղին,
«շեմ սիրի ոչ մի բոպէ, որովհետու իմ աշրի գրողն
«է: Այս, երօ ջան, ուր ևս, ուր, արտասուրը աշքե-
«րիս եմ զրում այս տողերը: Ընդունիր զուցէ վեր-
«ջին բարես:

«Թափառում եմ, սպասում եմ, սպասում եմ.

«Հո Սօնա»:

— Այս նամակներից յետոյ, զու Երօ, ոչ մի իրաւունք
շունես վշտանալու, որովհետեւ Սօնայի սիրտը իր
ամբողջ էսւթեամբ քեզ է պատկանում. այդ նամակ-
ներից երեսում է, որ նա ուր որ լինի՝ հողի տակ,
կենդանի, թէ մեռած, միայն քո անունը կը լինի
նրա շրթունքների ամենանուիրական բառը, ոհ, որ-
քան բազգաւոր ես զու, Երօ, լսում էիր, արդեօք,
ինչպիսի կենդանի սրտով նա զրում է քեզ, որ խան-
դարես այս ամուսնութիւն. լինչպիսի շեշտերով ու-

զում է օձ ու կարիճ դատնալ՝ միայն նրան սպանե-
լու: Լսիր, Երօ, ինչ միջոց կարելի է՝ կ'անեմ. իսկ
երբ ամենքն ապարդիւն լինեն՝ այն ժամանակ այս
դաշոյնիս ուժով կը կատարեմ այդ թշուառ զոհի
խնդիրը. եղիր միամիտ:

Երօն՝ մեռածի նման ընկած անկողնու վրա՝
լսում էր նրան:

— Դու պիտի, Երօ, եթէ սիրում ես Սօնային,
կը կնապատկես ոյժերդ և աշխատես քննութիւնները
յաջող տալ ու աւարտել. իսկ ևս վաղ առաւտեան
կ'ուղիորուեմ մեր գիւղը և մինչեւ քո վերագանալը՝
ամեն կարելին կանեմ և չեմ թողնի զործը գլուխ
զայ. մի վհատիր՝ մնում է մի ամիս՝ մինչև վերջա-
նայ ձեզ քննութիւնները: Երօն կարծես աշքերով հա-
մաձայնութեան նշան էր տալիս նրան, յառելով իր
հայեացը զէպի նրան:

XI.

Մի օրից յետոյ Յարութը արդէն ե... գիւղում
էր. նա այստեղ, ամեն ինչ թողած՝ մենակ միջոցներ
էր որոնում արգելք հանդիսանալ Սօնայի և Սհօյի
ամուսնութեանը. խօսեց Գէվոյի հետ, աշխատեց հա-
մոզել նրան, որ յետ տայ նշանը և կամ Սօնայի կամքը
հարցնի այդ զէպըում: Գէվոն սկսեց տատանուել և
խօսք տուեց երեկոյեան խօսք բաց անել իրանը տա-
նը և Սօնայի կամքը իմանալ. բայց դժբաղտաբար,
ուրբաթը շուտ եկաւ քան շաբաթ. Տէր-Մաթալը,
որը՝ Յարութի յայտնուելու օրից միշտ երկիւղի մէջ էր

շտապից տեսնել Գէվօյին նախքան նրա տուն վերադառնալը. թէ ինչ ասեց նրան, ի՞հչպէս էր ցանկութեան հասաւ այդ խաշագող տէստէրը, մենք չը գիտենք. միայն Գէվօն տուն վերադառնալիս՝ չը կատարեց իր խոստումը և ոչինչ չ'ասաց ոչ իր կնոջը և ոչ Սօնային և այդ օրից յետոյ միշտ աշխատեց խոյս տալ Յարութից. եթէ սրան տեսնում էր զէպի իրան գալիս՝ ինքը գիտմամբ շուռ էր զալիս և մի այլ կողմ էր գնում. Յարութը հասկացաւ թէ զործը որտեղիցն է ծռուել և լռեց. նա այն բնաւորութիւններից չէր, որոնք սիրում են ստորանալ՝ նպատակին համելու համար. Վերջապէս, ճարը կտրած՝ խօսեց Սօնայի մօր հետ. Սա հօ կտրուկ կերպով միանդամյն պատասխնեց թէ՝ իր թքածը նորից լիզել՝ անվայել է համարում. Տէր-Մաթալը վազօրօք էր ամրացրել նոյն իրանց համոզմունքների մէջ:

Սօնային տեսնել ու բան իմանալ նրանից՝ անկարելի էր. նրան արգիլուած էր տանից դուրս զալ. մերթ-մերթ Արծուիկն էր այցելում նրան: Յարութը վճռեց սրան դիմել և սրա միջոցով հասկացնել Սօնային, որ ինքը կ'անէ ամեն բան՝ այդ պատճառով ասելու նրան, որ տիսրել, յուսահատուել, մտատանջութեան մէջ ընկնելը՝ աւելորդ է: Մայն պիտի համբերութեամբ սպասել այդ բանի յաջող վերջանալուն:

Յարութի զալով Սօնան մասամբ մեղմացրեց իր յուսահատութիւնը. միայն անհամբեր սպասում էր երօյի զալուն. բայց սա չը կար ու շկար:

Սօնային հանդստացնելուց յետոյ, Յարութը զընաց Բ. քաղաքը, ուր ասլրում էր տեղական զոր-

ծակալ վարդապետը, մի տա մի պատմելով նըան Սօնայի նշանադրութեան ապօրինի լինելը՝ նա խընդրից նրան գալ և քանի հարցը սուր կերպարանք չի ստացել. տեղնուտեղ քննել և լուծել այդ նշանադրութիւնը:

Վարդապետը վերջնականապէս մերժեց նրան իր գալուստը. սակայն խոստացաւ քաղաքի քահանաներից մէկին ուղարկել և ստուգել նրա ասածները թէ Սօնան բոլորովին համաձայն չէ և վճռում է անձնատպանութիւն գործել, եթէ բանի կերպով իրան պսակեն Սհօյի հետ: Յարութը մինչև անգամ ցոյց տուեց վարդապետին Սօնայի երօյին գրած երբորդ նամակը, բայց նա չը հաւատաց և պահանջեց իր մօտ թողնել այն՝ ստուգելու համար. Յարութը շընդունեց այդ. Եթօն Սօնայի զրութեան համաձայն՝ խնդրել էր Յարութին, որ ոչ ոքի ձեռք չը զցէ համակը և իրան վերադարձնէ այն:

Մինչ այս, մինչ այն, օրերը անցնում էին օրերի յետեկց: Վարդապետը ուղարկեց խոստացած քահանային Ե... զիւղ քննութեան: Քահանան իշխանեց Տէր-Մաթալի տանը, որից յետոյ, ընթերցող, կարծեմ, հասկանալի կը լինի ձեզ համար, թէ հարցը ինչ լուծում պիտի ստանար: Տէր-Մաթալի թելադը ըրութեամբ Գէվօն ստիպեց Սօնային հիւանդ պարկել. իրբ դժբաղդ զոհը յամառ կերպով մնաց կանգնած իր տեղում. հայրը կատաղութեան չափը կորցրած՝ բարկացաւ և իր ձեռքի հաստ ճկապուով սկսեց այն պէս ծեծել աղջկան, որ սա համարեայ, թուլացած դետին տարածուեց և եթէ մօր միջամտութիւն չը

լինէր, խեղճ աղջիկը զոհ պիտի գնար հօր անդթութեանը:

— Դու ինձ խայտառակում ես, հա՞,— կրկնում էր Գէվօն, — այ քեզ խայտառակել. ում աղջիկն է էսպէս նշանուել, որ դու նշանում ես. զալաթ արի քեզ ուսում տուի. ինչ է, ուզում ես ինձի համար թազայ օրէնք մօկոնել, հա՞ էս ինչ տէրտէր է. էս ինչ քննիչ է. էս ինչ քննութիւն է. էն շան որդի Յարութը դրանով ինչ է ուզում անել, աղջկայ տէր է ուզում դառնալ հա՞ այ հիմի լսիր նրան. եթէ բանը էտ տեղը հասաւ, հազար կտոր կ'անեմ քեզ, բայց լաւ իմացիր, որ մի կտորդ էն լափազան, բաց բերան Երօյին չի հասնի, հա՞ լսում ես, — դիմեց Գէվօն Սօնային, որը արդէն տաքութեան մէջ ընկած՝ մօր օդնութեամբ անկողին էր մտել. Եկաւ քննիչ քահանան, խօսեցրեց Սօնային և մօրը. նայեց Սօնային մի քանի անգամ, հարցրեց թէ արդեօր ինքը համաձայն է: Մակայն Սօնան ինքն էլ չիմանալով ինչու, միշտ էլ լուսութիւն պաշտպանեց: Հօր սպառնալիքներն էին պապանծեցրել նրա լեզուն, թէ երեկուայ անոզորմ ծեծի ազդեցութեան տակ, նա հիւանդ լինելով, չէր ըմբռանում, թէ ինչ է կատարում իր հետ: Սօնայի լուսութիւննը համարելով համաձայնութեան նշան՝ բարեհոգի քննիշը մի լաւ ուտել-խմելուց յետոյ ողերուեց քաղաք:

Տեսնելով որ ոչինչ չի կարելի շինել, Յարութը մաց շիւարած. բայց չը ընկճուեց: Նա իսկոյն և եթ մի լաւ համակ զրեց Երօյին, որ վտանգ չը կայ. ուստի և խրախուսում էր նրան լաւ պատրաստուել

և լու քննութիւն տալ:

Ապահովուելով Երօյին այս կողմից նա սկսեց որոշ ծրագիրները պատրաստել Սօնային գուրս բերելու այդ ժանր զրութիւնից և չը թողնել, որ տեղի ունենայ նրա ամուսնութիւնը Սհօյի հետ: Նա գիտէր, որ երբ Տէր-Մաթալը իրայններով ոտքի են կանգնել պաշտպանելու Գէվօյին, այլս ապարդիւն է այս և այն ատեանները ժամանակ կորցնել, քանի որ ամեն տեղ նրա սրբազանը իր ճանաւրն ունէր, որոնք պիտի սեղ սպիտակ դարձնէին ըստ իրանց նախնի սովորութեան և լաւը՝ վատ:

Երկար մտածելուց յիտոյ, վերջապէս, Յարութը վճռեց Սօնայի Երօյին զրած և իրան մօտ եղած նամակը ուղարկել Անտառոս գիւղը Սհօյին, որ սա հատկանայ թէ՝ Սօնայի սիրաը պատկանում է Երօյին և ոչ թէ իրան՝ այն էլ զեռ մանկութեան օրերից. սակայն՝ երբ յիշեց Երօյի խօսքերը թէ՝ նամակները չը պէտք է ոչորի տալ և ուրիշի ձեռք զցել, մանաւոնդ, որ այդ թախանձել էր և ինքը՝ Սօնան, Յարութը փոխեց իր վճիռը՝ նա այս անգամ եկաւ այն եղբակացութեան, որ անհրաժեշտ է մի բարեկամական նամակ զրել Սհօյին, որով և նա կը սթափուի և յետ կը կանդնի այդ ամուսնութիւնից:

Տեսնեալ առաւոտը Սհօյին վճռած նամակը զրեց նա թէ՝ Սօնան Երօյին է սիրում, թէ նոքա զեռ իրանց մահուել օրերից սերտ կապերով կապուել են, որոնց և ոչ մի բան չի կարող բաժանել. բայց գժրադարձար, հետեանքը այն չ'եղաւ, ինչ սպասում էր Յարութը. մի քանի օրից յետոյ սա Սհօյից ստացաւ պատասխան իր նամակին: Այդ պատասխանի մէջ՝ ի

միջի ալլոց. Սհօն գրում էր, որ ինքը այդպիսի յիմարութիւնների չի հաւատում, որ Սօնային ոչ ոք չի կարող խլել իրանից և վերջը աւելացնում էր՝ թէ նման բարեկամական միաք ունեցող նամակները հարկաւորութեան եղած ժամանակին հարկաւոր կը լիլինին (? !): Վերջին նախադասութեան միտքը Յարութը պարզ հասկացաւ, որ նա նրափիսի կեղուոտ, անբարոյական բառերով է զինուած կեանքի համար: Նա հասկացաւ, որ Սհօն նման նամակներ բնական պահանջի պէտքերի համար պիտի զործ դնէ. աւելինը նա չը կարող սպասել մի վաշխառու հօրից ծնուած, նոյնքան վաշխառու տպրուկ որդուց. Էլ ինչ էր մընում անել Յարութին. ըրէնքը, աղատ կամքը ոտքի տակ էր տրորուած ծնողների կողմից, խեղելով թշուառ Սօնայի՝ իրանց աղջկայ ձայնը՝ հոգեոր ատեանները դեռ ոսկիներով էին զժբադտաբար դեկավարում, մնում էր մենակ, որ ոյժը առաջ դարի խախտուած իրաւոնքները պաշտպանելու. այն ժամանակ Տէր-Մաթալների, Գէփոների, Սհօների ապտակների փոխարէն՝ ապտակ պիտի ցոյց տալ, թէ և սրա մահուան դատավճիռը վազուց արդէն կարդացած է քաղաքակիրթ երկիրներում.—զոնէ այս անգամ այս հարցին ես պիտի այսպէս նայեմ, եթէ սխալում եմ, թող ապագայ սերոնդը ինքը կարդայ իմ դատավճիռը, կըկնում էր նա:

XII.

Գեղարքունեաց յունիսը դեռ նոր էր սկսուել. արհն էլ ուրախ փայլում էր. լիճը զովացուցից գե-

փիւռով մեղմացնում էր արեկի զօրութիւնը. Դաշտ ու արտորայք խանձուելուն մօտիկ այրուել էին. մի քանի շաբաթ էր, ինչ անձրեկ երես չէին տեսել. երկինքը բարկացել էր ժողովի վրա: Ել ինչ մատաղներ, էլ ինչ թափորներ էր, որ անում և կազմում էր թշուառ ժողովուրդը, սակայն, ինչպէս երեւում էր, նախախնամութիւնը վճռել էր յիշեցնել բոլորին էլ եղիայի ժամանակները: Կէս օրուայ արեկ այստեղ այն զօրութիւնը չ'ունի, ինչ այդ երկը հարեւան՝ Արարատեան զաշտի արեկը. երբ կէս օրին արեկ սկսում է եռալ իր ամբողջ էութեամբ, այդ ժամին լճից բարձրանում է մի հովացնող քամի, որը՝ թոզ ու զուման բարձրացնելով ճանապարհներից, այս տեղից, այն տեղից՝ տանում, սփռում է կիսախանձ կանաչների վրա: Եթէ տաքին այդպէս է սկսում և շարունակում մինչև հունձը, այն ժամանակ ահատանելի է զանոնում թշուառ այդ ժողովրդի զրութիւնը. զարի ու ցոլենը՝ այդ երկը զլխաւոր հացահատիկները, չոլանում, կպչում են գեանից այնպէս, որ անբաղդ գեղջուկը իր գեղջկուհու հետ, օրերով շաբաթներով կպած գետնին՝ հագիւ կարող է փիտօն անել (ձեսաքաղ): ձանապարհորդ չէր երեսում ե. քաղաքից եկող ճանապարհնին. միայն հեռուից երեսում էր փոշու ահաղին մի ամպ, որը բարձրանալով հոսող քամու հետ, թռչում էր երկինք և ապա փոքր առ փոքր ցած դալիս ու ծածկում կանաչների ծարաւ երեսը. Սիանա մենաստանն էլ վշապից ծերունու նման բազմած ծովի երեսին՝ լուս ու մունչ կերպով նայում էր բնութեան ու նրան այրուել—իսո-

ըովելուն և կարծես մաքում Աստուած էր կանչում
խզալ իր զաւակներին և մի յորդառատ անձրի ու-
ղարկել: Բայց երկնքի զայրոյթը, ինչպէս երեսում էր,
վճռողական էր. ոչ մի կտոր ամոլ չը կար երկնա-
կամարի վրա: Ապա նա, կարծես, զլուխը այս ու
կողմ շարժելով, բարկանում, կատաղում էր, որ իրան
շրջապատած ջրերի այդ քանակը՝ անզօր է մեզմա-
յնել բնութեան ծարաւը: Քամու հետ խոսքերը մէկ
արած, նա ձգտում էր քշել, հեռացնել իրանից
ալիքները դէպի կիսամեռ բուսականութիւնը. բայց
ալիքները ոյժ չունէին աւելի առաջ դնալու. նորա,
արագ-արագ վազելով դէպի ցամարը, շրմափով
դարնւում էին նրա բիրտ երեսին, չարդ ու փշուր
լինում, ճշում, վընզզտում ու դէպի լիճը վախչում:
Քամին՝ կատաղած իրան այսպիս անյաջութեան հա-
մար շփում, աւելում, մաքրում էր կզզու երեսը և նո-
յա առաջ շպրտում, որ ճանապարհը ծռել, կտրել
կարողանայ, սակայն անյաջող, փշրտած ալիքները
խորասուզում էին ջրերի զերկը, վակում. խփում և
ծածկում իրանց աչքերը, որ կզզու փոշին չը կու-
րացնի նոցա: Ճանապարհի փոշին հետզհետէ մօտե-
նում էր. զա փոստային սայլակ էր, որը շրջապատ-
ուած փոշու ամպերով, առաջ էր վազում: Մէջը մի-
այն մի մարդ էր նստած, որը փոշու տարափի տակ
ծածկուած, համարեայ. կարծես, նոր էր զուրս եկել
տարտարոսեան խաւարից: Մտատանջութեան սվկի-
անոսի մէջ խորասուզուած, նա ըստ երեսոյթին, չէր
էլ հետաքրքրում իր զգեստների մաքրութեամբ էլ.
գլխարկը, երեսը նոյնպէս ազատ չէին թանձր փոշու

ներկայութիւնից: Միայն նրա աշքերն էին համեմա-
տաբար մաքուր մացել: Ճանապարհորդը ուշագրու-
թիւն էլ չէր զարձնում և շրջակայքի թուլացած,
խաշուած էրութեան վրա. նո նայում էր հեռու, դէպի
Սևանա մենաստանը: Ահա նա տեսաւ Առաքելոց
սրբավայրը և, երեսը խաշակներով, հազիւ լսելի
ձայնով, այնպէս որ կառապանը չը լսեց՝ վենթվեն-
թաց.—քեզ եմ կանչում, ով սուրբ Սևան, ազատիր
իմ Սօնային նրա խեղտող այն բարբարոս ճանկերից,
ոզնիր ինձ փրկել նրան ծնողաց բռնակալութեան
լծից. ուխտում եմ, երբէք չ'ուրանաւ խղճիս ձայնին.
ուխտում եմ, մինչև կեանքիս վերջին օրերը նուիր-
ւելայլոց բազզաւորութեանը, ընկածի, անարգուածի
օզնութեանը և ամեն տեղ, ամեն խաւար անկիւննե-
րում, լոյսի ճառապայմները տարածեմ իմ թշուառ
ազգայինների մէջ: Ուխտում եմ ոչ մի բոպէ չը թող-
նել ուսուցչի ծանը զաւազանը, միայն զեկավարիր
ինձ՝ փրկել իմ թշուառ. Սօնային,— արտասուրի կա-
թիւները վերջին բառերի հետ ցայտեցին նրա աշքե-
րից և, երեսի փոշու հետ խաւանուելով ու սեսս զծեր
կազմելով նրա երեսին՝ ցած զորուեցին: Փոքը ինչ
սթափուելով իր թուլասրտութիւնից, նա հրամայեց
կառապանին արագ քշել. Կառապանը թափ տուեց
երտսանակները, շւացրեց և մտրակը պտըտելով օգի
մէջ, շրմբացրեց ձիերին, որից յետոյ՝ վերջիններս
կարծես թե ատան, թռան. փոշին այլնս չէր հաս-
նում սայլակին: Այսպէս շարունակելով ճանապարհը,
վերջապէս, սայլակը հասաւ Այրի վանքի մօտերը:

Այդ ժամին ճանապարհի վրա երեացին երկու

Ճիւռներ։ Սոքա գալիս էին Բ. աւանից և զնում
էին գաւառը, իսկ սայլակը դէպի այդ աւանը։ Սայլակը
ճանդարս զնում էր ճանապարհով։ Նրա միջի ճանա-
պարհորդը նայեց նոցա և զլուխը կախ զցեց։ Զիտ-
ւորներից մէկն էլ նայեց նրան և բարձր ձայնով բա-
րեց։

— Բարե, Երօ, զալուստգ բարի։

Ճանապարհորդը, որին անշուշտ ճանաչեցիր, ըն-
թերցող, մեզ վաղածահօթ Երօն էր, որը զլուխը բար-
ձրացնելով, նրա շարժումով առաւ բարեր, որից
յետոյ՝ զարձեալ զլուխը կախելով և մտատանցու-
թիւնների մէջ ընկնելով, շարունակեց իր ճանա-
պարհը։

Նա տեսաւ Սօնայի ազգական Բագոյին, որը բա-
րեելով իրան, Սհօյի հետ անցկացաւ զնաց. Նա տե-
սաւ Սհօյին՝ իրան և թշուառ Սօնային անբազու-
թեան տարտարոս զլորող հոսոսին և մի վայրկանում
պատկերացաւ նրա ներկան իր սոսկալի զոյներով։
Նա հասկացաւ թէ, ում հետ զործ ունի և ամբողջ
մարմնով զողաց։ Դեռ այսպիսի անսպասելի մի սար-
սուռ էլ նա զզաց Բագոյի բարեելու ժամանակը, Երբ
իր և Սհօյի երեսը իրար հանդիպեցին։ Նա մասամբ
գիտէր այն ամեն անաջող միջոցները, որոնց Յարու-
թը զործ էր զրել Սօնային փրկելու։ Վերջապէս, մի
քանի ժամից յետոյ Երօն ցած իջաւ սայլակից, որը
արդէն կանգնել էր իրանց դռան։ Պէտք էր տեսնել
որպիսի քնքուշութեամբ և շնչառապառ զուրս թուաւ
մայրը և որպիսի կաթողին սիրով դրիեց իր բալայի
զլուխը։

— Իմ արծիւ, իմ թառլան բալայ, Էդ որքան ես
երկարել, որքան ես սիրունացել, ֆիտան բոյիր ես
զուբրան։ Էս վեց տարի Է աշքերս ջուր կտրեցին,
իմ աննման. բայց դու չը կայիր ու չը կայիր, — կըրկ-
նում էր նրա մայրը, համբուրելով նրան և բաց չը
թողնելով սրգու զլուխը իր ձեռքերից. իսկ որդին
թմրածի նման նստել էր և չէր ուզում զլուխը բար-
ձրացնել ու մօք խաթըրը կոտըրել. — Եթէ հեռուից քեզ
տեսնէի, չէի կալող չանաչել, իմ սիրուն բալայ, Էդ
նորածիլ բեխերից հս մատաղ, Էդ մատաղ ճակատիդ
հս հէյրան։

Ճիշտ որ Երօն աճել և լեռնեցուն յատուկ զե-
ղեցիկ մի տիպար էր ներկայացնում։

Մայլը ուղիղ էր նկատում, որ նրա հասակը
զգալի կերպով բարձրացել էր. իսկ դէմքը իր առ-
նական հայեացքով՝ սէր ու զգուանք էր տարածում
ամեն տեղ. նորածիլ թուխ ընշացրը, թուխ մօքուքի
հետ՝ լինամքով կոկած էր, որը տւելի քան զեղեցիկ
էր զարձնում նրան։

Երօյի զալուտեան լուրը մի ակնթարթում տա-
րածուեց իրանց զիւզում. Նրա ազգական բարեկամ-
ները խումբ-խումբ թափաւեցին նրանց տունը՝ համ
նրան տեսնելու, համ Գաւթին աշքալուսանք տսելու։
Հայրը արտասուրը աշքերին լուսթեամբ համբուրեց
որդուն։ Միայն մայրն էր, որ համբուրելով չէր կըշ-
տանում որդուց։ Այդքան անստիճան, անկեղծ և վա-
ռըն սիրով միայն մայրական սիրտն է լցուած և մի-
այն մայրական սիրտն է ընդունակ եղակի սիրելու,
փայփայելու, գուրգուրելու։ Այս, մայրական սէրն է

միայն եղակի և նրա սահմանը՝ անողոշելի:

Այս, իմ արծիւ բարայ, — սկսեց դարձեալ նրա մայրը. — մի քանի ժամանակ զուրս մի եկ տանից, թէ չէ, էն անբաղկ Սօնան, որ քեզ էսպէս տեսնի՝ կակծից սար ու ձոր կընկնի. — թշուառ մայրը չը զիտէր, որ Սօնայի անունը տալիս, որդու սիրտն է կտոր-կտոր անում, խոցոտում: Նա զեռ ոչինչ չը զիտէր որդու կեանքից, միայն այնքան էր նրան յայտնի, որ երօյի փոքր ժամանակը ինքը մտավիր էր Սօնային ուզելու: Այս, բազով չը թողեց՝ նրան քեզ դամաթ անելու. Էհ, ջանդ սազ լինի՝ արար աշխարհ կը քսնեգեմ, ոտքի տակ կը տամ և Սօնայից լաւը կը ճարեմ քեզ համար....

Վերջին բառերը զեռ չէր վերջացրել, երբ երօն ծանը վշտի տակ ամեն բան մոռցած՝ ուզգուեց և մէջքը դէմ տալով պատին, շեշտակի մօր աշքերին նայեց: Գտան էր որդու այդ հայեացրը. նա մի ակնթարժում խոցեց մօր սիրտը, որը իսկոյն հասկացաւ իր մինուճարին դիպած անողոր հարուածի խորութիւն. նա փոշմաննեց իր ասածի վրա, բայց արդէն ուշ էր:

Երօյի զալուստը, ՚ի հարկէ, անսահման ուրախութիւն էր պատճառել և Սօնային. Յարութը բոլորից ուշ եկաւ երօյին տեսնելու, ուր էր նա, ոչ ոք չը զիտէր. նա իր առօրեայ կտարած զործերի մասին ոչ ոքի հաշիւ չէր սիրում տալ. միւս առաւօտեան, զեռ արեց չը ծագած՝ նա մտաւ Ալաշկերացոնց տուն, Սովորական հարց ու բարեից յետոյ, երօյի և Յարութի մէջ սկսուեց երկար ու բարակ խօ-

սակցութիւն: Յարութը խօսում էր տաքաշած և պիղում էր, իր ծրագրով շարժուել Սօնային աղատելու համար, երօն գտնում էր նրա ծրագիրները անփայել մի կրթուած մարդի համար: Բայց նման վիճաբանութիւնների ժամանակ ով կարող էր կտրել Յարութի ձայնը: Նրա վաստերը անժիւ ու անհամար էին, այն էք հումորեցացից վաստեր, որոնց հերքելը բացառիկ գէպքերի էր վերապահուած:

Սենեակումը ոչ ոք չը կար, ուստի Յարութը և երօն կարող էին ազատ վիճաբանել:

— Ուրան էլ ուզում ես, կարող ես հակամակել և քո մտքերը յայտնել. սակայն նոցանից և ոչ մէկը իլազործելի չէ. իսկ այն, ինչ որ ես ասել եմ, անպայման պիտի կտաշիմ, որից յետոյ մեր ամազայ սերունդը նզովքով թնդ յիշէ իմ անունը. ծանրութիւնը ես իմ վիճն եմ վերցրել. միայն զու չը պիտի հակառակես և արածներս կայրենի գործողութիւններ անուանես:

— Միը, Յարութ, ինչ ես ասում, որ ինչ համաձայնեմ հետզ, եթէ ես տարբական հասկացողութիւններից զուրկ լինէի՝ զուցէ համաձայնուէի հետզ. ինչ ովէս կարելի է յաջող բոպէ որոնել և փախցել Սօնային. չէ ոք օրէնք և որիշ աւելի քաղաքավարի միջոցներ կան նրան փրկելու:

— Կան, չիմ ասում չը կան. բայց դժբաղդաբար զոցա կտարսողներ, զործադրողներ չը կան: Ես առանց քեզ ոք հողեոր Սուեանը ասես՝ զիմեցի, բայց ինձ ականչի տակով էին լսում և ինձանից տղջկայ նամակները պահանջում, որը, ինչպէս զու, նոյնպէս

և Սօնան, չեք ուզում լսել անզամ, այլ ուզում էք լոռութեամբ ձեր նպատակին հասնել, որը, շեմ իմանում, ինչպէս է լինելու. այն ինչ ժամանակը կարճ է՝ պսակի օրերը մօտենում են: Քննութիւնն էլ եկաւ, ամեն բան եղաւ, սակայն Տէր-Մաթալը իր սրբազանով ամեն տեղ էլ տարաւ յաղթանակը. իսկ այստեղ հօ թշուառ Սօնայի հայրը օրական մի քանի անզամ, ասում են, իր անբաղդ զոհին ծիծի, զարդի է ենթարկում: Քո գալով, զիտես, որքան անտանելի է զարձել անբաղդ աղջկայ զրութիւնը՝ նրան արզիլուած է բազից գուրս նայել անզամ. էլ ինչ քաղաքաբի միջոց է մնացել, որով դու ուզում ես զեկափարուել. վաղը, միւս օրը Գալօն առօք-փառօք և բռնի կերպով եկեղեցի քաշ կը տայ այդ տնբաղդ զոհին, իսկ պսակը հօ դժուար բան չի Տէր-Մաթալի համար. նա, ասում են, ամեն մի ծիսակատարութեան խորհուրդները մի քանի ժամով, յաճախ և օրով, առաջ է ասելիս լինում, թողնելով միայն էատկան խորհուրդը, որը միշտ կատարում է ծէսի ժամանակը:

— Ես համաձայն եմ քեզ հետ. սակայն մինչ այն ժամանակ, երբ Քրիստոսեան սեղանի առաջ պիտի կենտկցութեան երգման «այո» և «ոչը» կատարուի, դու իրաւունք չ'ունիս քո ծրագիրները իրագործելու. այդ ժամանակ պիտի աշալուրջ կերպով հսկել, որ Տէր-Մաթալը այդ վեհ խորհրդի երկու հակամիտ բաւերի իմաստը չ'ուրանայ և ըստ այսմ վարուի. զուցէ Սօնան այժմ փոշմանել է և, կարծելով որ իր փրկութիւնը այլես անյուսալի է՝ համաձայնուել է

հօր կամքի հետ, թէս ես երբէք չեմ հաւատում այս վերջին ենթադրութիւնս:

— Վերջը կը փոշմանես և կը տեսնես, որ մենք, զժբաղդաբար տակաւին այն միմուլորզում ենք ապրում, ուր միմիայն թագաւորում է զէնքի, ոյժի և փողի զօրութիւնը. վերջինից չունինք բացուած բհրանները փակելու. իսկ առաջինի և երկրորդի հետ՝ համաձայն շես. մի խօսքով, շուտով ինքդ էլ կը համոզուիս, որ դարձեալ այս դաշոյնս կը լուծէ այդ խճընուած հանզոյցը, որով փաթաթել են մեզ,—իոր հոգոց քաշելով՝ Յարութը վերջին բառերը արտասանելիս, ցոյց տուեց իր զօտկից քաշ տրած դաշոյնը:

XIII.

Այս օրից՝ երբ երօն ոտք զրեց իր հայրենի և.. զիւզը, Տէր-Մաթալը աւելի ես խորամանկ կերպով սկսեց զործ զնել իր զագրելի ծրագիրները: Ըստ երևոյթին, նոքա ոչ մի քանի վրա չէին մտածում և հոգս տանում, բայց և այնպէս զրանով նոքա աշխատում էին քնացնել, օրօրներ ասելով իրանց հակառակորդներին: Սակայն երօն և Յարութն էլ այն պտուղներից չէին, որոնց հեշտ լինէր խարել և քնացնել. նոքա, ընդհակառակը, երօյի խորհրդով վճռել էին զիմել Ամենայն Հայոց Կաթուղիկոսին, որին ցոյց պիտի տային Սօնայի համակները և պատմէին զործի զրութիւնը, որով և խանգարած կը լինէին այդ ամուսնութիւնը և հասած իրանց նպատակին: Մինչ սոքա այս զրութեան մէջ էին զանուում, յանկած ե-

կաւ Մշու ս. Կարապետի վանքից ե... զիւղը այդ սրբավայրի նուլիքակ վարդապետը և իջաւ Գէվօյենց տունը, որը երեցին էր այդ ժամանակը:

Սոփթը ինքնի ըստ ինքեան ներկայացաւ Նրօյին մտնել այդ տունը և տեսնուել նրա հետ, որովհետեւ ինքը եղի էր այդ մենաստանում և ծանօթ էր նրա միաբանների հետ: Նա զգուշութեան համար վերցըեց իր հետ մի փոքրիկ տորճանակ, որը միշտ իր զըրպանում էր պահում ճանապարհորդութիւնների ժամանակ և ուղարուեց Գէվօյենց տունը: Նրա հետ զընում էր և Յարութը: Ո՞հ ընթերցնդ, եթէ դէմ մի անդամ դուք զգացել էք ձեր կրծքում սիրոյ նշաններ և ճաշակել էք այդ նուլիքական զգացմունքի քաղցրութիւնը, այն ժամանակ ձեզ համար պարզ կը լինի՝ թէ ինչ դրութեան մէջ էր դժուում երօյի սիրտը: Նա չ'իմացաւ թէ ինչպէս հասաւ Գէվօյենց տունը, որից յետոյ՝ դուխը բարձրացնելով զէպի նոցա սենեակը, ուր նրա կարծիքով պիտի լինէր վարդապետը, սակայն այնպէս չ'եղաւ՝ նրա հայեացը անսպասելի կերպով հանդիպեց Սօնայի հայեացըին, որը լուսամուտի առաջը նստած, նայում էր զէպի դուքս: Ժանը էր երօյի համար այդ բոսլէն: Նա ամբողջ մարմնով ցնցուեց, դողաց և քիչ մնաց վայր ընկնէր: Երկուսն էլ մի քանի բոսլէ լուռ միմեանց երեսի նայցին: Վերջապէս, երօն շուտ ուշը եկաւ: Նա զըլիս արկը վայր բերեց և նրա նազելի շարժումով բարեւեց նրան այնպէս ընդունակ են բարեւեց նրան այդ գերջապէս, Յարութը դուքս բերեց նրան այդ զիւղին սիրահար սրտերը: Սօնան ցնորուածի նման զիս մնացել էր կանգնած տեղն ու տեղ և ոչ մի

շարժում անգամ չէր անում, նա սկզբում իր աշքերին չէր հաւատում, որ իրանից մի քանի քայլ հեռու կանգնած էր նա, որի համար ինքը պատըաստ է հերոսաբար իր կեանքը զոհելու: Առաջի տպաւորութեան տակ՝ նա քիչ էր մնացել իրան ցած շըպետէր նրա զիրկը, եթէ այդ թողնէին նրան լուսամուտի երկաթեայ շշերը, սակայն երբ նա սթափուեց, երբ առաջի շշմեցնող վայրկեանները անցան և երբ իրականութիւնը իր զիրի մէջ մտաւ՝ զիտակցութիւնը իր զիրիշող զերը կատարեց, նա սկսեց հեկեկալ և արտասուրի լուշոր կաթիւները իրար յետելից անընդհատ դուքս ցայտեցին նրա աշքերից: Ինչու էր նա լաց լինում, ուրախութեան աբտասուրներ էին զորա, թէ տրտութեան, — չը զիտենք, միայն մի զորա, թէ տրտութեան, — չը զիտենք, միայն մի զորի նշաններ էին: բողոք ծնողական բռնակալութեան դէմ, բողոք ուղղած հայ քահանային, որը, ուրանալով ամեն վեհ զազափարները յանուն իր եսի, անբարզութեան վիճն է զլորում իր անպաշտպան զոհերին և վերջապէս բողոք ուղղած անշափ ու անսահման սիրով սիրուած սիրահարին, որը տիրեց, տիրապետեց նրա սիրատը և թողնելով նրան այդ զըռւթեան մէջ, ինը մի քանի տարիներ անհետ կորաւ և միայն յայտնուեց այն ժամանակ, երբ նրա ներկայութիւնը բարզում, խորացնում էր նրա վիրաւոր սրտի խոցերը, զարդերը:

Երօն հասկացաւ այդ բայց արդին ուշ էր: Վերջապէս, Յարութը դուքս բերեց նրան այդ զիւղին սիրահարից, նկատելով երօյին, որ տեսնողներ կար-

ըռդ են լինել և թշուառ աղջկայ տանջանքները աւելի ևս բազմացնել:

Երօն փշուած ամանի նման, որը հազիւ է կարողանում իր միջի կերպուրը պահել և սեղանի վրա կանգնել, զողողալով, մի քանի շարժում արեց և մտաւ նոցա բակը, ուր թախաի վրա նստել էր վարդապետը, Գէվօն և Տէր-Մաթալը: Մօտենալով վարդապետին, նա հազիւ կարողացաւ ասել՝ զալուտը բարի, հայր սուրբ, ու նստեց նրա կողքին: Նրան հետեւց Յարութը, որը նոյնպէս տեղ բռնեց թախաի վրա և զղալով երօյի տրամադրութիւնը՝ ինքը սկսեց վարդապետի հետ զրոյց անել, որը երկուսին էլ լաւ ճանաչում էր: Երօն չէր մասնակցում խօսակցութեան, պատճառաբանելով, որ իր զլուխը սաստիկ ցաւում է:

— Ե՞ն, Աստուած օքննէ ձեզ. այս տարի մեր կողմերը չեկաք, հա:

— Ո՛չ, հայր սուրբ, առանց այն էլ այստեղ շատ զործ ունինք, այս տարի և մեր ներկայութիւնը անհրաժեշտ է մեր սեփական գործերը ուղելու, — պատասխանեց Յարութը:

— Կեցցեն ըդրանք, հայր սուրբ, երանի շատերը հետեւին ըտոնց օքինակին, — վրա բերեց Տէր-Մաթալը:

Երօն ուշքի եկաւ. նա տեսաւ թէ՝ որպիսի եղուիտական հոգու տէր է Տէր-Մաթալը. նա մտարեց իրան վրա տուած նրա բողոքը և քիչ մնաց, որ իր սուր ու կծու պատասխանով նրա ձայնը խեղդէր. սակայն մի զգուելի հայեացք ուղելով նրան,

նա զգացնել տուեց նրան իր զգուանքի նողկանքը և դառնութիւնը, որից յետոյ պատասխանելը աւելորդ համարեց: Տէր-Մաթալն էլ հասկացաւ նրա հայեացքի ամբողջ զօրութիւնը և զաղարեց խօսելուց: Նոքա հասկանում էին իրաք:

— Զեր կողմերը, վանոք Աստուծոյ, մերի նման հօ չէ, որ ձեր ներկայութիւնը անհրաժեշտ լինի, — հարցը վարդապետը:

— Եթէ ոչ աւել, զոնէ նրանից պակաս էլ չէ, հայր սուրբ, նկատեց Երօն, — այստեղ, ճիշտ է, քուրզը, թուրքը, մեզ չեն կողոպտում, բայց նրանց զերը կատարում է հայր, այն էլ լոելեան՝ հեղութեան արդարութեան և եղբայրսիրութեան վեհ զաղափարի աւետարանը ձեռքին: Տէր-Մաթալը ոտքերը շարժեց, բայց ոչինչ շխօսեց, միայն շուռ զալով Գէվօյի կողմը, նա փսփսաց նրա ականջին, — ախ, թէ Վերապս դադ կը լինէր, էդ կապ կտրածների հախիցը լաւ կը զար:

— Ինչու չէք պատժում այդպիսի զարշելի հային, — հարցը վարդապետը:

Մենք այստեղ շուտ պատժել չը զիտենք, այլ թողնում ենք, որ իրանք հասկանան իրանց սխալը և յետ կանգնեն իրանց բռնած ընթացքից, — պատասխանեց Յարութը:

— Էդ զժուար թէ զլուխ զալու բան լինի, — նըկատեց վարդապետը:

— Ոչ, զժուար չէ, հայր սուրբ, — ասաց զարձեալ Յարութը, — այժմ մենք այստեղ էլ այդպիսի անզգամ մարդկանց հետ պիտի վարուինք այնպէս չարաշար,

ինչպէս վարւում էինք ձեր երկրում:

Տէր-Մաթալը դարձեալ փսխսաց Գէվօյի ականցին, — էղ շները օյին սարքեսցին հա, պիտի թէզ անել. ևս հիմի եթասցեմ Գալօյի մօտ և նըան էլ պատւիրեսցեմ, որ երեք-չորս օրից յետոյ պատրաստութիւն տեսնի պսակը անելու, տեսնենք ըտուց յետոյ էդ լակոտները ինչ անեսցին: Պսակը պիտի կատարւի մեր հարեան Ա... գիւղում, ուր թէ սրանք, թէ իրանց ազգականները բան չեն կռնալի անել:

Գէվօն գլխի շարժումով տուեց իր համաձայնութիւնը: Տէր-Մաթալը դուրս դնաց:

— Լաւ ժամանակ եկաք, հայր սուրբ. վաղը մեր սուրբ Յովհաննէսի ուխտն է, եկէք թամաշայ, — առաց Յարութը:

Մի քանի ժամ երկար ու բարակ այսպէս գրուց անելուց և իրանց Մշում եղած բարեկամներին հարցնելուց յետոյ, նոքա գուրս եկան վարդապետի մօտից:

Ճանապարհին երօն յայտնեց, որ վաղը՝ սուրբ Յովհաննէսի ուխտից յետոյ, պիտի դնալ Ամենայն Հայոց Կաթուղիկոսին տեսնելու, որովհետեւ ըովէն այժմ թանկ է. — Սօնային այսպէս տեսնելուց յետոյ, ևս հանգստութիւն չունիմ այլսա, ամ այն չքնաղ աշքերը տակն ու վրա արին իմ ներքին աշխարհը, — կրկնում էր նա:

Սուրբ Յովհաննէսի շրջակայքը ծածկուած էր մարդկանց հազարաւոր զլուխներով: Քէֆ ու ուրախութիւններին շափ ու սահման շը կաք: Ամենից անելի աշքի էր ընկնում մի խումբ, որը իր արտասո-

վոր երդերով, պարերով ու լէլէներով՝ աշքի էր ընկնում: այդ խմբի մարդիկներից շատերը աւելի ևս զահաղանուում էին իրանց թրբահայի զգհստներով՝ դոցա մէջ մի քանի հոգի կային եւրոպական տարադով՝ Յարութը, երօն և ուրիշներ, որոնց չէր կարելի ճահաշել: Այդ խումբը այնպէս էր գրաւել ուխտաւորների ու շաղբռութիւնը, որ շատերը նոցանից չէրն լսում, որ մատուսից ոչ հեռու մեզ ծանօթ նուիրակ վարդապետը տարացած կերպով քարոզ է խօսում: Տհոնելով վարդապետին, Յարութը սաստեց իր ընկերին, որ առանց աղմուկի քէֆ անեն. իսկ ինքը երօյի հետ նրա կողմը գնաց՝ քարոզին ականց անելու:

Առաջի անգամն էր, որ այդ սրբավայրի ուխտի օրը ժողովուրդը քարոզ, կենդանի խօսք էր լսում իր հովիւների շրթունքներից: Բագմութիւնը հետզհետեւ, խմբում էր նրա շուրջը և իր հետաքրքրութեամբ նոր եռանդ ներշնչում նրան:

Երբ վարդապետը վերջացրեց իր քարոզը, երօն և Յարութը մտան մատուռը, համբուրեցին և մի փոքր ուխտաւորներին նայելուց յետոյ՝ զուրս եկան: Երօն յիշեց վեց տարի առաջ օրը, երբ ինքը պատահեց Սօնայի հետ այնտեղ, յիշեց և մի ծանը հողոց քաշելով, հեռացաւ մատուսից: Երբ նա Յարութի հետ վերադառնում էր իրանց խմբի մօտ, ճանապարհին տեսանը Սօնային՝ շրջապատուած Գալօյենց և Գէգօյենց ազգականներով, որոնք սրանց տեսնելուն պէս, կրկնապատկեցին իրանց կեցցէները:

Լսելով դոցա աղաղակները՝ Յարութը նկատեց երօյին:

—Այ, եթէ գոնէ այժմ ինձ լսես՝ կը համաձայնուիս հետս, այն ժամանակ ես սոցա աղաղակները մի ակնթարթում փոխել կը տամ լացի և հեծեծանքի:

—Ի՞նչ ես անելու:

—Ի՞նչ.—Ես կը հրամայեմ իմ ընկերներին, ինչպէս զայլը թռցնում է գառան, այնպէս կը թռցնեն Սօնային, որից յետոյ, տեսնենք, ի՞նչ են անելու այս հաստագլուխները-

—Ի՞նչու այդ անարդ միջոցին զիմնք, երբ մինք հէնց այժմ ուղեւորւում ենք Ս. Էջմիածին Կաթողիկոսի մօտ, ուր ոչ Տէր-Մաթու և ոչ այս ու այն կարող կը լինեն խռանգարել մեզ:

—Դու զիտես, բայց մի ներքին ձայն ինձ տուում է, որ դարձեալ դաշոյնդ պատրժութ պահիր. կարծես թէ մէկը ականջիս շշնչում է դաշոյնը և այդ գործը անբաժան ընկերներ են: Ես էլ եմ անարդ համարում այդ միջոցը, բայց զիտեմ և այն, որ այդ գործը խաղաղ ճանապարհով չի վերջանալու և, զուցէ, տուժողը մինք լինինք, ահա թէ ինչու ես ընկերներիս այս վերջերս միշտ անբաժան եմ պահում ինձանից: Ասա, խնդրեմ, երօ, ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, երբ Վեհափառի մօտից վերադառնանք և Սօնային պսակուած տեսնենք Մհօյի հետը:

—Այդ չի կարող այդքան շուտ տեղի ունենալ, որովհետեւ մեր գնալ զալը ընդամեն պիտի տեհէ 5—6 օր. միթէ կարծում ես այդքան շուտ նոքա արած կը լինեն այդ քայլը:

—Գուցէ և արած լինեն:

— 2 հով կարծում:

— Իզուր:

— Այն ժամանակ մենք կը շտապենք՝ 3—4 օրւայ վրա վերադառնալ:

— Դու եկ, երօ, ինձ հետ համաձայնուիր, ես այս յաջող բոպէն իզուր չը կորցնեմ. տղերք արդէն պատրաստ են:

— Ո՞չ երբէք:

— Կը փոշմանես, բայց ուշ կը լինի:

Երօն ոչինչ չը պատասխանեց. Նա՝ տխուր ամպերի կնճիռները երեսին առած՝ հասաւ իրանց տըղերը մօտը, որտեղից նոքա մի քանի ժամից յետոյ բոլորն էլ ճանապարհ ընկան զէպի ո. Էջմիածին:

Միայն Սօնայի և Տէր-Մաթալի սրտերը վկայեցին, որ նոցա ձեռնարկածը մի աւելի կտրուկ գործէ, որի հետեանը լինելու է, առաջինի համար՝ վըրկութիւն, իսկ երկրորդի համար՝ պարտութիւն ու պատիժ: Տէր-Մաթալը և Սօնան իրանց աշքերտ հետեւում էին նոցա: Սակայն քնած չէր և Տէր-Մաթալը:

Սօնային մասամբ յայտնի էր երօյի զիտաւորութիւնը՝ Արծւիկը պատմել էր նրան ամեն ի՞նչ:

XIV.

Արդէն շորբորդ օրն էր, ի՞նչ Յարութը երօյի հետ հեռացել էին Ե.. գիւղից: Այդ չորս օրուայ մէջ Տէր-Մաթալը, համարեա, հանգիստ շունեցաւ՝ այս տեղ-այնտեղ ընկած, նա վերջապէս հասաւ մասամբ

իր հպատակին: Գալօն համաձայնուեց հետեւիլ նըալորհրդին, որին մենք ծանօթ ենք, ընթերցող, Տէր-Մաթալի և Գէվոյի մէջ եղած խօսակցութիւնից ու փոփոցից: Երկու տներն էլ լռութեամբ առաջ էին տանում հարսանեաց պատրաստութիւնները: Սօնան տեսնում էր, որ իր հօր տանը մի արտասալոր իրարանցում է առաջ եկել, որի հետևանքի մասին ինքը ոչինչ չէր հասկանում: Նա միայն այնքանը գիտէր, որ իրանց տանեցիք Գալօյենց տանեցիների հետ՝ պատրաստում են զնալ Ա... զիւղի սուրբ-Փրկիչը ուխտ: Նա աւելի ես ուրախացաւ, որ զբանով ժամանակը երկարում է, հետևապէս ձեռնառւ է Երօյի համար, որը՝ մինչ այս, մինչ այն՝ վերադարձած կը լինի: Ենողաց պատուէրի համաձայն՝ նա հաղնուեց, պատրաստուեց և, երբ Գալօյենց տանեցիք, ազգականները իրանց սայլակներով եկան Գէվոյենց գուար, ինքն էլ իր մօր հետ զուրս եկաւ տանից և նստեց նոցա մօտ, սայլակի վրա, որը ճանապարհուեց զէպի Ա.. զիւղը, ուր տղամարդիկ իրանց ձիաններով առաջ էին զնացել: Դոցա մէջ էին՝ Գալօն, Գէվոն, Սիօն և Տէր-Մաթալը:

Սայլակները քշում էին նոցա մշակները:

Սհօյի մայրը նստել էր իր խնամու, Գալօյի կնոջ կողքին և ըստ երեսութին, տխուր էր: Տհոններով սրտ տիրութիւնը, Գալօյի կինը սկսեց զրոյց անել նըա հետ:

— Քա, խնամի, ինչո՞ւ ես սուս նստել ։ Փանոք Աստուծոյ, ինչ է պատահել, որ սգուորի պէս կլուզիդ կախ ես գցել. ուխտ զնացողը տխուր սրտով ճա-

նապարհ չի զնայ:

— Ոչինչ չի պատահել, խնամի ջան. ես չեմ իմանում, թէ ինչո՞ւ համար եմ տխրում. էս զիշեր վատ երազ եմ տեսել. զըա վրայ էի մտածում և կարծում եմ, հէնց զբանից էլ առաջ եկած կը լինի տխրութիւնս. մեր տէրտէրն էլ առաւօտը եկաւ, էֆիմերափին բաց արեց ու ասաց՝ «Երազդ երկու օքը կը կատարուի:»

— Ի՞նչ երազ ես տեսել, խնամի ջան. Աստուած բարին կատարէ:

— Սարի, խնամի ջան, մենք այս բնլորս նստած էինք մի շայիբ-շիման տեղ. հաց էինք ուտում. ամեն մէկիս առաջ զբած էին էնպիսի սիրուն-սիրուն ամաններ, որ մարդի խելքը զնում էր. ոչ էն էր կերակուր ուտէինք, ոչ էն էր նրանց թամաշայ անէինք: Իմ Սօնայիս առաջի ամանը ամենից սիրուն էր. խեղճ բալէս հէնց էն էր ձեռքը մեկնեց, որ ուտէր իր ամանի կերակուրից, յանկարծ որտեղից որ էր՝ վերեից մի մեծ քար վեր ընկաւ և նրա ձեռքը ջարդ ու փշուր արեց՝ ամանն էլ հետը: «Վայ, բալայ» գոռացի ու վրա վաղեցի. համա նա ուշաթափ գետին էր տարածուել: Մինչ ես ուզում էի ուշքի բերել նրան, խնամիդ, ձկնո առնելով, զարթնեցրեց ինձ: Եանի, զբուստ, խնամի, հէնց էղ երազը միտս է գալիս, ջանս փշաբազւում է:

— Աստուած խէրն անի. զարդ մի արա, խնամի ջան, հրէս զնում ենք սուրբ-Փրկիչը, մի հալալ սըրտով մոմ վառիր, մատադ խօստա, երազդ բարին կը կատարուի:

— Հա, խնամի ջան, մեռնիմ նրա սուըր զօրութեանը, — երեսը խաչակնքելով ասաց Սօնայի մայրը, թող էն սուըր-Փրկիշը իմ բալայիս բազգը փայլուն անի, ևս ամեն տարի նրա դուռը զամ, մի-մի սի դառ էլ մատաղ բերեմ հետո:

Մինչ սոքա այսպէս զրոյց էին անում, սայլակը սկսեց իջնել մի զարիվայր, որոնցով տռատ է Ա... զիւղի այդ ճանապարհը: Եզները չը կարողացան զրուպել սայլակի ահազին ծանրութիւնը և սկսեցին վազել, յանկարծ լոււեց մի թըրխոց և սայլակը շուռ եկաւ: Նրա վրայի եղած կանայք սկսեցին հարայնոցով այնպիսի մի ճիշ, աղազակ բարձրացնել, որ լսողի սիրտը տակն ու վրա էր լինում: Նոքա բոլորն էլ սայլակի վրայից զետին նետուեցին. բայց բարերազգաբար, զզալի վնաս չէր պատահել՝ Սօնայի ճակատն էր մի թեթե կապտել, իսկ մօր ձեռքը մի փոքր շանգուռել էր. մացածներին թէե թեթե-թեթե վընասներ պատահել էր, բայց չանգուռած ոչ ոք չունէր: Սոքա շուտով վերկացան, թափ տուին իրանց շորերը և շարուեցին սայլակի վրա: Ապա Գալոյի կինը սուը-սուը հայրոյանքներով սաստելով մշակին, հրամայեց զգոյշ լինել և չը շտապեցնել եղներին: Մշակը լոււթեամբ վեր առաւ իր խարազանը և սկսեց քշել սայլակը:

Գալոյի կինը՝ երեսը փոշուց սրբելով, սկսեց ընդհատուած խօսակցութիւնը շարունակել:

— Խնամի ջան, — զիմելով Սօնայի մօրը. — երազը կատարուեց և փառք Աստուծոյ, որ վնաս չը պատահեց, — ապա տեսնելով Սօնայի ճակատը, նա

երկու ձեռքը իրալ զարկելով, շարունակեց. — ախ քուսնամ ես, իմ բալայ, խօմ շատ չի ցաւում, ախ շարդ տանիմ, իմ Սօնա ջան: Սօնան ոչինչ չը պատասխանեց:

— Խնամի ջան, տեսար որ իմ տիսրութիւնը իդուր չէր, զեռ Աստուած էլ բեթարէն աղատէ, զիմեց Գալոյի կնոջը Մօնայի մայրը:

— ել ինչ պիտի լինի սրանից աւելի բան:

— 2է, խնամի, ես իմ երազից շատ եմ վախենում:

— Ի զուր տեղի ես վախենում, երազդ կատարուեց, պրծաւ, խօմ հազար անգամ չը պիտի կատարուի:

— 2է, խնամի, տէրտէրն ասաց «Երկու օրուայ վրան կը կատարուի»:

— է՛հ, էնպէս երազ էլ կայ, որ շուտ է կատարում: — Այսպէս խօսալով, վերջապէս, նոքա հասան Ա... զիւղը և զիացին իրանց բարեկամների մօտ, ուր մի քանի ժամ առաջ եկել էին նոցա տղամարդիկը:

Հետեւեալ օր նոքա բոլորը միասին զնացին սուըր Փրկիշը ուժան՝ մատաղ արին իրանց անվաս ազատուելու համար և ամբողջ օր մինչեւ երեկոյեան կեր ու խումի մէջ անցկացնելուց յետոյ՝ սկսեցին պատրաստուել զէպի զիւղի եկեղեցին: Մութը արգէն սկսել էր իր թեթերի տակ առնել Ա... զիւղը, որը իր արտաքինով, իր բնակիչների աղքատիկ նիստ ու կացով՝ զանապանւում էր Գեղարքունիեաց երկրի մնացած զիւղերից: Նրա բնակիչների թիւը աշքի ընկող չէր՝ 20 – 30 տուն էր, այն էլ մատնուած զառն

աղքատութեան ճիրաններին։ Դրսի աշխարհի և ոչ մի տեղեկութիւն չէր հետաքրքրում նոցա, ինչպէս և այդ օրը իրանց գիւղը եկող Ե. գիւղացիների ներկայութիւնը ոչ մի ուշադրութեան չէր առնուած։ Բոլորն էլ երկրագործներ էին, որոնք հազիւ հազ իրանց ճակատի զառն քրտինքով մի կտոր հաց էին ճարում իրանց գոյութիւնը պաշտպանելու համար։ Վազ առաւտեան գտնուելով բաց դաշտի գրկում, նոքա երեկոյեան վերագառնում էին յօդնած, թմրած, իրանց աղքատիկ ընթըրիքը անում ու Մորփէոսի գիւղը ընկնում։

Գիւղում միակ աշքի ընկնող շինութիւնը եկեղեցին էր, որը գտնում էր գիւղի հարաւային կողմում գիւղացիների խրճիթներից մի փոքր հեռու։ Դա քարշէն մի բարձր շինութիւն էր՝ շրջապատուած նոյնպէս քարեայ պարիսպով։ Ինչպէս տեսաք, ընթերցող, գիւղը աղքատ էր, հետևապէս աղքատ էր և եկեղեցին այդ երեկոյեան եկեղեցու մէջ մի արտասովոր հրավառութիւն կար, որը զեռ հեռուից նայողների ուշադրութիւնն էր զբաւում։ Երբէք այդ աղքատիկ յարկի տակ այգպիսի ճոխ հրավառութիւն չէր եղել՝ բոլոր ջահերը բոցերի մէջ էին. մոմերին հօ թիւ ու համար չը կար. իւրաքանչիւր պատկերի առաջ մի քանի տասնեակ մոմեր ցցուած՝ տխուը կերպով արձակում էին իրանց լոյսի ճառագայթները ու լուսաւորում եկեղեցու ներսը։ Եկեղեցու մէջ, բեմի առաջ, կանգնած էր մեզ ծանօթ Տէր-Մաթալը, որը այդ գիւղի հովուղն էր և աղօթքներ էր փընթում. բեմից քիչ հեռու կանգնած էին մի քանի փընթում։

կանայք և իրար հետ՝ կամացուկ փսփում էին ու զայրոյթ յայտնում մի ինչ որ աղջկայ հասցէին։

Վերջապէս Տէր-Մաթալը սկսեց պսակի արարողութեան խորհուրդը. այդ ժամանակ կանանց ըստուար մի խումբ՝ իր մէջ առած մի գեղեցկատեսիլ աղջկայ, հրելով ներս մտաւ և, բրդելով նրան զէպի բեմն, սեղանն էր քաշում։ Թշուառ գոհը մի քանի անգամ վայր ընկաւ, ճիշ արձակեց, օգնութիւն գոչեց. բայց աղամարդկանց հարբած աղաղակը և քահանայի սպառնական խօսքերը խլացրին նրա ձայնը, Գլէ, եարի, եարի, հերիք է նազ անես, -զոչում էր նա։

Թշուառ գոհին կանգնեցրին սեղանի մօտ փըռուած կանգնած մի երիտասարդի կողքի, որը իր խաչեղբօր հետ ցցուել էր և սպառում էր հարսին։ Երբ վերջինո նրա մօտը բերին, նա ամուր կերպով նրա ձեռքը իր ձեռքի մէջ առաւ, իսկ կանանց բազմութիւնը շարուեց նրա կողքերը և աշխատում էր իր ձեռքի վրա պահել, համարեա, թուլացած գոհին։

Ընթերցող, անշուշտ հասկացաք, որ այդ թշուառ գոհը Սօնան էր, որին ուխտի բերելով սուրբ Փրկիչ, Տէր-Մաթալի խորհրդով բոնի կերպով պսակում էին։

— Քա, խնամի ջան, աղջիկս նուազած է, ճանապարհին էլ ով գիտէ՝ ինչ պատահեց. տեսար ինչպէս ճակատը ուռեց, ախ, իմ լուսը քուանայ, բալայ ջան,— զիմեց այս խօսքերով Սօնայի մայրը Գալոյի կնոջը, որը իր Սհօյի կողքին կանգնած՝ նրա վզի կարմիրն էր դրստում, որը արձակուել ու նրա ուսերովն էր ընկել։

Ահա նոցա մօտ եկաւ Տէր-Մաթալը և, խաչը

ձեռքին բոնիլով, զարձաւ դէպի նորապսակները հետեալ խօսքերով:

—Տեսէք, սիրելիք, զեօ Աստուծոյ տան մէջն ենք կանգնելի, սուտ խօսալ զադ հո ըսկի չինելի, ինչ կը հարցուցեմ, զուզը ասէք. —ասպա նա՝ զառնալով փեսացուին ասաց, —որդեակ, ցաւ կայ, շուկայ, հիւանդութիւն, աղար-բէզար կայ, զու մինչև մեռնելդ տէրն ես ըտոր, որ պատկուհսցես հետը:

—Այս, տէրն եմ, —պատասխանեց Սհօն:

Քահանան երեք անգամ կըկնեց այս ձեռկանական հարցերը, եթէ «ոչ» էլ տաէին, նա զարձեալ համոզելով պիտի պսակէր:

Մինչ սոքա այս զրութեան մէջ էին դանվում, յանկարծ զրսում լսուեցին ձիանների ոտքերի զրովիւններ. Եկեղեցում եղած հարբած ամբոխը ուշադրութիւն չը դարձեց այդ բանի վրա. Մի երկու ըստէից յետոյ եկեղեցին մտաւ մի ջահել եւրոպական տարագով հագնուած երիտասարդ և տեսնելով նորապսակների այս զոյզը՝ միաց շշմած՝ ու սառած տեղնուտեղ. ուշբի զալով, նու եկաւ և ուղիղ նորահարսի դիմաց կանդնեց:

Բազմութիւնը չը հետաքրքրուեց նրանով:

Տէր-Մաթալը, վերջացնելով Սհօյի հետ իր հարցերը, զարձաւ դէպի Սօնան:

—Որդիս, ասա տեսնեմ, վկայիք, լսեմ. այս Աստուծոյ տաճարի մէջը, այս երիտասարդը, որը կողքիդ կանգնած է, պատկում է քո հետք. զու հաւան ես, տէրն ես:

Պօնան սթափուեց, նա զրուխ բարձրացրեց և ինչ, —իր առաջը ցցուած էր մեռածի կերպարանքը երեսին՝ երօն, որը շնչասպառ նրա պատասխանին էր սպասում. Երօյի մօտին կանգնած էր Գէվօն, որը ուղիղ իր աղջկայ երեսին նայելով, բարկութեան կնճիռները երեսին, կարծես, սաստում էր աղջկան, որ չը խայտառակի իրան: Հասել էր վերջին օրհասական ըստէն, որով Սօնան իր կամքի ոյժով կամ փրկուած՝ կը լինէր, կամ ամբաղջութեան տարտարոսը զլորուած կը լինէր թէ իրան և թէ երօյին:

Նա աշքերը բարձրացրեց դէպի վեր՝ նայեց ու արդարութիւնը խաչի վրա մատնուած տեսաւ. մի սոսկում անցաւ նրա երակներով. Երբէք նա այնպէս չէր վախեցել խաչելութեան այդ սրբանկարից, ինչպէս այսօր, ապա, կարծես, ինքն իրան կամացուկ կրկնեց. —միթէ ես էլ պիտի զո՞ն զնամ այս անմեղ նազովրեցու նման մարդկանց անզթութեանը. —ոչ, զա ինձանից է կախուած, իսկ նազովրեցու փրկութիւնը՝ նրանից կախուած չէր: Յետոյ նայեց հօրը և իսկոյն երեսը շուռ տուեց դէպի երօն: Նոցա հայեցքները հանդիպեցին իրար. որքան զութ, որքան աղերսանք կար երօյի աշքերի մէջը՝ տեսաւ նա այդ, տեսաւ ու հասկացաւ և ապա դառնալով դէպի Տէր-Մաթալը՝ բարձր ձայնով պատասխանեց:

—Ո՛չ, ես ոչ հաւան եմ և ոչ տէրն եմ:

—Զգաստացիք, բալաս, էղափիսի բան ո՞վ է լսել ու տեսել, զգաստացիք, զուցէ շար սատանան քեզ խարեց և զու էղափէս պատասխան տուեցիք:

—2էր տեսել, դէն, տեսէք. չէր լսել՝ լսէք, ես ու-

բա հետ ամուսնացող չեմ, — կրկնեց Սօնան քահանա-
յին, որը՝ բաց անելով իր բերանը, իր օձի լեզուով
սկսեց համոզել նրան: Սակայն նրա խօսքերը բերա-
նին մնացին. Երօն այլևս չը կարողացաւ տանել, նա
էլ նոր հոգի, նոր կեանք առնելով, մօտեցաւ քահա-
նային և բարձր ձայնով սպասնաց:

— Դուք այստեղ բոնութիւն էք դործ դնում.
դուք, որ կահչուած էք արդարութեան գաւազանը
ձեր ձեռքին դեկափար ունենալով. միթէ շը լաեցիք,
որ Սօնան երկու անդամ մերժումը կրկնեց, էլ ուր
էք ձեր համոզմունքի անարդ տօպրակը բաց անում:
Ահա և Կաթուղիկոսի հրամանի պատճենը՝ այդ թշշ-
ուառ զոհը իմո է, տեսնինք ո՞վ սիրտ կ'անի մօտ
գալու՝ նրան ագատելու: Վերջին խօսքերը դեռ չը
վերջացրած, Սօնան թափ տուեց Մհօյի ձեռքը և
նետուեց Երօյի զիրքը:

Տեսնելով իր անարգուած պատիւը, Սհօն կատա-
ղած գագանի նման մօտ վագեց. նա իր ձեռքում
ըստած ունէր իր զաշոյնը, որը նորապսակները, ըստ
նախնի սովորութեան, կըում են իրանց վրա պսակի
ժամանակը:

— Ես պիտի խլեմ, — ասաց նա, — և այ, ինչպէս,
վերջին բառերի հետ նա զաշոյնը մեխեց Երօյի կըրծ-
քումը, որը արիւնաշաղղախ վայր ընկաւ:

— Անաստուած, զագան, — ճշաց Սօնան, — ինձ էլ,
ինձ էլ, — ասաց նա, — նրանից յետոյ ես ապրողը
չեմ, — այս խօսքերի հետ թշշուառ աղջիկը դուրս բե-
րեց զաշոյնը Երօյի կըրծքից և մի վայրկեանում այն-
պէս շտապ-շտապ ցցեց իր կըրծքում, որ ներկայ լի-

նողները մնացին շիւարած, և «Երօ ջան» գոռալով,
ընկաւ նրա դիմակի վրա:

Այդ ըոպէին մի խումբ զինուած մարդիկ թափ-
ուեցին եկեղեցին, որոնցից մէկը փրփուրը բերանին՝
զէպի սեղանը վազեց, ուր փախել և ապաստան էր
զտել քահանան:

— Դուքս, անզգամ, դու ես այս անմեղ զոհերի
արեան պատճառը, դու. ահա այն զաշոյնը, որը միշտ
պատեանից գուրս է եկել անմեղների դատը պաշտ-
պանելու, այսօր և պարտական է քո արիւնով լուա-
նալ այս սըրափայրը, որ դուք և ձեր նմանները ե-
ղեռնագործութեան տներ էք դարձնում, չէ որ դու
զաղարած, արգիլուած ես քո քահանայագործութիւ-
նից. ինչ է քո արածը:

Վերջին խօսքերի հետ զաշոյնը մի պաոյտ արեց
և ցած իջաւ Տէր-Մաթալի վլին, տապալելով նրան
զետին. կարմիր արիւնը ներկեց սեղանը:

— Ես մասամբ թշուառ Երօյի վրէժը լուծած եմ,
տղայք, բոնեցէք այդ վաշխառուի կորիւնին, որը իր
զարշ ձեռքերով թափեց այս երկու անմեղ սիրահար-
ների արիւնը: Ա-խ, Երօ, ինչո՞ւ մեղանից առաջ եկար
և շտապեցիր:

Դա Յարութի ձայնն էք, ընթերցող:

Վ Ե Բ Ֆ.



կայուն օճառ օքի և նորով մեջուն գոհաց
այս պատը այս առաջ
պատի մեջուն ծառակ լուսի մեջ այս առաջ
պատուած պատը այս պատը այս առաջ
զատուած պատը այս պատը պատը պատը
պատը պատը պատը պատը պատը պատը

ՀՀ Ազգային գրադարան



NL0340512

891. 99

nu-27